Ե. ԽԱԼԵՅԱՆ

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԵՐՈՍ

ՀՈՒՆԱՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ԵՐԵՎԱՆ

1950

ԵՐԵՎԱՆ

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ИСТОРИИ

№ МАТЕРИАЛЫ ПО ИСТОРИИ ВЕЛИКОЙ ОТЕЧЕСТВЕННОЙ ВОЙНЫ 4

Е. ХАЛЕЯН

ГЕРОЙ СОВЕТСКОГО СОЮЗА УНАН АВЕТИСЯН

Биографический очерк и документы

ИЗДАТЕЛЬСТВО АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1950

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

№	ՆՅՈՒԹԵՐ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ	4

355.331(47.925)(092 Ավետիսյան)
Խ-17

Ե. ԽԱԼԵՅԱՆ

ՍՏՈՒԳՎԱԾ Է 1961 թ.

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԵՐՈՍ
ՀՈՒՆԱՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Կենսագրական ակնարկ և փաստաթղթեր

Դ-427

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ 1950

Д $\frac{\text{Ш}}{11864}$

«Հավե՛ր ժ փառք մեր հայրենիքի ազատության եվ անկախության համար մղված մարտերում զոհված հերոսներին»։

Ի. ՍՏԱԼԻՆ

Սովետական Միության Հերոս Հուսիսն Ավետիսյան

ՀՈՒՆԱՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Սիրելի առաջնորդ և զորավար ընկեր Ստալինի գլխավորությամբ Հայրենական Մեծ պատերազմի ռազմաճակատներում ֆաշիստական զավթիչների դեմ Սովետական Միության բոլոր ժողովուրդների ռազմիկ զավակների հետ ուս-ուսի տված մարտնչում էին նաև հայ ժողովրդի հազարավոր զավակներ։ Պատերազմի ամեն մի օր մարտնչողների շարքերում ծնվում էին նորանոր խիզախներ, նորանոր հերոսներ, որոնք հավատարիմ Լենինի—Ստալինի պարտիային, իրենց զինվորական սրբազան երդմանը, անձնուրաց կերպով կռվում էին հանուն մեր սոցիալիստական մեծ Հայրենիքի ազատության ու անկախության։

Մեր գործն արդար էր, մենք հաղթեցինք։ Այդ հաղթանակը սովետական ժողովուրդը ձեռք բերեց անսահման զոհաբերությունների և զրկանքների գնով, հազարավոր լավագույն մարդկանց առատորեն թափած արյան գնով։

Մեր այսօրվա ազատ և երջանիկ կյանքի համար իրենց կյանքը զոհած այդ հերոսների հիշատակը միշտ վառ պահելով, մեր ժողովուրդը իր սրտում երախտագիտության անմահ հուշարձան է կերտել, որի վրա անջնջելի տառերով գրված են առաջնորդի հավիտյան առկայծող խոսքերը՝

*«... Հաճելի և բերկրալի է գիտենալ, որ մեր մարդկանց առատորեն թափած արյունը ապարդյուն չի անցել, որ այդ արյունն իր արդյունքներն է տվել»։**

Լենինի—Ստալինի պարտիայի և կոմերիտմիության դաստիարակած սովետական ջերմ հայրենասերների, Սովետական Միության հերոսների փառապանծ պլեյադայում իրենց վեհ և ազնիվ

---

* Ի. Վ. Ստալին, «Զեկուցում ՍՍՌ Միության Սահմանադրության նախագծի մասին», Կուսհրատ, 1936 թ., էջ 63։

մահով դյուցազնական փառքի հասան, մասսայական հերոսության օրինակ ծառայեցին օդաչու Գաստելոն, շարքային մարտիկ Մատրոսովը, Զոյա Կոսմոդեմյանսկայան, հայ ժողովրդի անվեհեր զավակ, ավագ սերժանտ Հունան Ավետիսյանը և շատ ուրիշները։ Նրանք գիտակցորեն գնացին դեպի մահը, զոհվեցին մեր Հայրենիքի ազատության համար։

1943 թ. փետրվարի թեժ մարտերից մեկում ռուս մեծ ժողովրդի զավակ շարքային Ալեքսանդր Մատրոսովը իր ընկերների կյանքը փրկելու, նրանց առաջշարժումը խանգարող թշնամու գնդացրային կրակը խափանելու համար, գիտակցորեն դեպի մահը գնալով՝ իր մարմնով փակեց թշնամու հրակնատը, հնարավորություն տվեց ստորաբաժանմանը առաջ շարժվելու և կատարելու մարտական առաջադրանքը։

Սովետական կառավարությունը բարձր գնահատելով Մատրոսովի անձնազոհ քայլը, Սովետական Միության Հերոսի կոչում շնորհեց նրան, իսկ Գերագույն Գլխավոր Հրամանատար ընկեր Ստալինը 1943 թվականի սեպտեմբերի 8-ին իր հրամանում հավերժացնելով նրա հիշատակը, գրեց.

«Ընկեր Մատրոսովի մեծ սխրագործությունը զինվորական քաջության և հերոսության օրինակ պիտի ծառայի Սովետական Բանակի բոլոր ռազմիկների համար»։

Այդ հրամանով 56-րդ գվարդիական դիվիզիայի 254-րդ հրաձգային գնդին տրվեց Սովետական Միության Հերոս Մատրոսովի անունը։ Հերոսի անունը առհավետ մտցվեց այդ գնդի առաջին վաշտի ցուցակի մեջ։

Մատրոսովի անունը դարձավ հերոսության, հաղթանակի սիմվոլ։ Ռազմիկները մարտերի ամենակրիտիկական մոմենտներին հիշելով Մատրոսովի օրինակը առաջ էին սլանում անվախ և աներկյուղ, և եթե նույնիսկ անհրաժեշտ էր լինում՝ զոհել իրենց կյանքը ի փառս հայրենիքի։ Նրանք այդպես էլ անում էին՝ փոթորկալի կռվի կրակի միջով առաջ էին տանում Սովետական Միության հաղթանակի դրոշը։

1943 թ. սեպտեմբերի 16-ին Նովորոսիյսկի ազատագրման համար մղվող թեժ մարտում հայ ժողովրդի փառապանծ զավակ ավագ սերժանտ Հունան Մակիչի Ավետիսյանը կրկնեց Ալեքսանդր Մատրոսովի անմահ սխրագործությունը։

Հունանը արժանացավ Սովետական Միության Հերոսի բարձր կոչման։ 1949 թ. ապրիլի 22-ին ՍՍՌՄ Զինված Ուժերի մինիստրի հրամանով Հունան Մակիչի Ավետիսյանի անունը նույնպես առհավետ գրանցվեց այն ստորաբաժանման ցուցակում, որի շարքերում անձնազոհ հայրենասերը մարտնչում էր ֆաշիստական զավթիչների դեմ։

Այդ մասին 1949 թ. մայիսի 8-ին ՍՍՌՄ-ի Զինված Ուժերի մինիստրության կենտրոնական օրգան «Կրասնայա Զվեզդա» լրագիրը «Սովետական հայրենասերի սխրագործությունը» վերնագրի տակ տպագրեց հետևյալ հաղորդումը.

«Ն զորամասի ռազմիկները սրբությամբ են մեծարում հայրենիքի համար մղված մարտերում հերոսի մահով զոհված իրենց խիզախ համադնդեցի՝ Հունան Ավետիսյանի հիշատակը։ Նրա անհուն նվիրվածությունը սոցիալիստական Հայրենիքին և անսահման հավատարմությունը երդմանը, օրինակ է ծառայում մարտիկների, սերժանտների և սպաների համար։

*Վերջերս ՍՍՌՄ Զինված Ուժերի մինիստրի հրամանով Սովետական Միության Հերոս Հ. Մ. Ավետիսյանի անունը առհավետ գրանցվեց Ն զորամասի ցուցակում»։**

Ո՞վ էր Հունանը, և ինչպե՞ս կատարեց նա այդ դյուցազնական սխրագործությունը, որի համար անմահության փառքի հասավ։ Համառոտակիորեն ծանոթանանք նրա կյանքի և մարտական գործունեության հետ։

* * *

Հունան Մակիչի Ավետիսյանը ծնվել է 1914 թ. Ղափանի շրջանի Ծավ գյուղում, չքավոր գյուղացու ընտանիքում։ Նրա հայրը, Մկրտիչ Խաչատուրի Ավետիսյանը, համեստ և աշխատավոր հողագործ էր։ Նախասովետական կարգերի ժամանակ նա օրնիբուն կռիվ էր տալիս քարի ու հողի հետ, աշխատում էր, և իր տնարար կնոջ՝ Խանումի հետ միասին մի կերպ քարշ էին տալիս 10 շնչից բաղկացած իրենց ընտանիքի գոյությունը։

---

* „Красная Звезда" № 107, մայիսի 8, 1949 թ.։

Մկրտիչը և Խանոմը ունեին 6 տղա, 2 աղջիկ, բոլորն էլ փոքրահասակ, կարիքի ու զրկանքի մեջ։

Տնտեսական ծանր պայմանները հնարավորություն չտվին ինչպես մյուս եղբայրներին, նույնպես և Հունանին, սովորելու և կրթություն ձեռք բերելու։ Դեռ գյուղական տարրական դպրոցի նախնական դասարաններից, մանկահասակ փոքրիկ Հունանը ըստիպված է լինում ընտանիքին օգնելու համար թողնել ուսումը և բատրակություն անել գյուղի հարուստների մոտ։

Հայաստանում սովետական կարգերի հաստատումով միայն նոր կյանքի ուղի բացվեց ինչպես հարյուր հազարավոր աշխատավորների զավակների, այնպես էլ Հունան Ավետիսյանի համար։

Հունան Ավետիսյանը սկզբում բանվորություն է անում Մինջևանի երկաթուղագծի կառուցման շինարարության վրա, իսկ հետո՝ Ղափանի պղնձաձուլական կոմբինատում։

1928 թվականից Հունանը ընդունվում է Լենինյան-Ստալինյան կոմերիտմիության շարքերը, ակտիվորեն մասնակցում է հասարակական աշխատանքներին։ Միաժամանակ նա սիստեմատիկաբար զբաղվում է ֆիզկուլտուրայով և ռազմասպորտային խաղերով։ Ինչպես մայրն է պատմում, այդ տարիներից էլ Հունանը առանձին սեր է ցուցաբերել դեպի զինվորական գործը։ Նա զինվորական խաղեր է կազմակերպել, հորից ծածուկ, տանը եղած հրացանը վերցնելով, վարժություններ է կատարել։

Հետագայում Հունանը դառնում է գյուղի լավագույն որսկաններից մեկը, որի գնդակը երբեք չէր վրիպում։ Նա կենսախինդ էր և համարձակ. մեկ հատ էր կոխ բռնելու մեջ, լավ ջիգիդ էր, և գյուղի «անհնազանդ» բոլոր ձիերը համարյա նրա տակովն էին անցնում։ Ծտի թեթևությամբ թռչելով ձիու մերկ մեջքին, այնպես էր կպչում նրան, որ կարծեք թե այդ տեղից լիներ բուսած։ Իր սև ու խոշոր աչքերը փայլատակելով, զվարթ երգեր երգելով, քամու արագությամբ սլանում էր, խելոքացնում ու վարժեցնում էր նրանց. այդ էր պատճառը, որ գյուղում իրավամբ Հունանին ամենքը «փայլեվան» էին անվանում, սիրում և գովում էին որպես հունարով ու սրտոտ տղայի։ Շատ էր սիրում գրազ բռնել, երբեմն մենամենակ ուշ գիշերներին անթափանցելի խավարում նա գնացել է

Ծավ գյուղից մի քանի կիլոմետր հեռու գտնվող «Նավա» կոչվող լեռը, թփերի ու քարերի միջով բարձրացել է նրա ահավոր գագաթը և այնտեղից նշան է բերել ընկերներին, ցույց տալով իր սրտոտությունը և անվախությունը։

Հունանը այս լավ հատկությունների հետ միաժամանակ զգայուն և նուրբ հոգու տեր մարդ էր, ազնիվ հայրենասեր էր։

Հունանը որոշ չափով գիտեր իր երկրի հերոսական պատմությունը, նրա անցյալը, Զանգեզուրի բանվորների և գյուղացիների պայքարը ցարական և դաշնակցական բռնադատիչների ու շահագործողների դեմ, գիտեր և 1920—1921 թ. թ. Մայիսյան ապստամբության— քաղաքացիական կռիվներին դաշնակների ձեռքով Ղափանում, Զանգեզուրում գնդակահարված բոլշևիկների՝ Բագրատ Հարությունյանի,* Մաշուրի և շատերի մասին, որոնք թշնամու դեմ-հանդիման, հավատարիմ բոլշևիկյան գաղափարներին, հերոսաբար մարտնչեցին և զոհվեցին Հայաստանի աշխատավորների ազատագրության մեծ գործի համար, ազատագրություն, որը հայ ժողովուրդը ձեռք բերեց Լենինի—Ստալինի ղեկավարությամբ, ռուս մեծ ժողովրդի եղբայրական օգնությամբ։ Հունանը երախտագիտությամբ միշտ հիշում էր այս բոլորը, և դաստիարակվելով Լենինյան-Ստալինյան կոմերիտմիության շարքերում, օրըստօրե հասունանալով նա իր մեջ նյութում էր տոկուն լեռնցու սովետական մարտիկի հատկությունները։ Ատելությամբ լցված դեպի հին կարգերն ու բոլոր շահագործողները, իր դասակարգային ինքնագիտակցությամբ նա պատրաստ էր կրծքով պաշտպանելու սովետական իշխանության բոլոր ձեռնարկումները, ջախջախել հակառակորդներին, ովքեր կհամարձակվեին ձեռք բարձրացնել ազատագրված բանվորների և գյուղացիների իշխանության դեմ։

Հունանը այդ ապացուցեց իր գործով, իր երիտասարդ կյանքով։

1929 թիվն է...

Սովետական աշխատավոր գյուղացիությունը բոլշևիկների պարտիայի ղեկավարությամբ մասսայաբար ոտք էր դրել գյուղատնտեսության կոլեկտիվացման ուղին։

---

* Հունանի ծննդավայր Ծավ գյուղի կոլեկտիվ տնտեսությունը կրում է Ղափանում զոհված բոլշևիկ Բ. Հարությունյանի անունը։

1929 թվականին կոլեկտիվ տնտեսություն է կազմակերպվում նաև Ծալ գյուղում։ Կոմերիտական Հունան Ավետիսյանը առաջինների թվում իր հոր և եղբայրների հետ իրենց բազմանդամ ընտանիքով մտան կոլեկտիվ տնտեսությունը և սկսեցին նոր կյանք վարել։

1932 թ. Հունանը կանչվում է Սովետական Բանակի շարքերը։ Երկու տարի նա ծառայում է հայկական հրաձիգ դիվիզիայի հեծյալ գնդում։ Կարմիր Բանակը նրան, ինչպես և շատ շատերի համար, դպրոց դարձավ, նա ձեռք բերեց հաստատակամություն, գիտակցական բարձր կարգապահություն, զինվեց ռազմական և քաղաքական որոշ գիտելիքներով։ 1935 թվականին Հունանը երբ բանակից տուն վերադարձավ, բոլորովին այլ մարդ էր դարձել։ Գյուղում Հունանին նշանակեցին կոլխոզի բրիգադիր, որտեղ նա եռանդով ընդունելով աշխատանքը, երկու տարի պատվով կատարեց այդ գործը, և մի քանի անգամ արժանացավ գովասանքների ու խրախուսանքների։

Հունանը լինելով կոլխոզի առաջավոր բրիգադիր, միաժամանակ ակտիվորեն մասնակցում է կոմերիտական-հասարակական աշխատանքներին։ 1937 թ. հանձնում է «Եղիր պատրաստ աշխատանքի և պաշտպանության» նորմաները, մասնակցում է հրաձգային մրցումներին, որտեղ իր դիպուկ նշանառությամբ առաջին տեղը գրավելով, Պաջրավիաքիմի Կենտրոնական Խորհրդի կողմից արժանանում է «Վորոշիլովյան հրաձգի» կոչմանը, պարգևատրվում է «ԵՊԱՊ»-ի և «Վորոշիլովյան հրաձիգ» կրծքանշաններով։*

Հունանը մեծ ձգտում ուներ նաև դեպի քաղաքական, գյուղատնտեսական գիտելիքները, կոլխոզշինարարության աշխատանքները։ Գյուղի պարտկազմակերպությունը և կոլխոզի վարչությունը նրա մեջ տեսնելով այդ ձգտումները, իրենց հերթին ամեն կերպ աշխատում էին ընդառաջել նրան։ 1938 թ. նոյեմբերից Հունանը գործուղվում է կուրսեր։ Երեք ամիս հաճախում է Գորիսի միջշրջանային կոլխոզ աշխատողների որակավորման դպրոցը։ Դպրո-

* «Հրաձգային դրքույկը» և կրծքանշանները պահվում են Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի Պատմության Ինստիտուտի Հայրենական պատերազմի պատմության կաբինետի արխիվում, Սովետական Միության Հերոս Հ. Ավետիսյանի գործում։

ցում գերազանց և լավ գնահատականներով սովորում է մի շարք առարկաներ՝ հայոց լեզու, մաթեմատիկա, ՍՍՌ Միության ժողովուրդների պատմություն, կոլեկտիվ տնտեսության Կանոնադրություն, Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկաների Միության Կոնստիտուցիա, ագրոտեխնիկա, զոոտեխնիկա և ուրիշները։

Դպրոցում յուրաքանչյուր դաս Հունանի համար մեծ ուրախություն էր պատճառում, որոնք նորանոր գիտելիքներ էին բաց անում նրա առջև։ Լսողություն դարձած Հունանը հավիշտակությամբ յուրացնում էր ուսուցիչների բերանից դուրս եկած ամեն մի խոսքը և ամեն մի միտքը։ Հենց դասընթացումն էլ Հունանի մեջ բուռն ցանկություն է զարթնում բարձրագույն մասնագիտական կրթություն ստանալու մասին։ Նա այդ մասին հետագայում հաճախ խորհրդակցում է ընկերների հետ, ծրագրեր է մշակում Երևանի գյուղատնտեսական ինստիտուտում սովորելու ուղղությամբ։

1939 թ. փետրվարի 2-ին Հունանը հաջող քննություններ տալով ավարտում է Գորիսի միջշրջանային կոլխոզ աշխատողների որակավորման լրիվ դասընթացը և ստանում է համապատասխան վկայական։

Սիստեմատիկ ուսումից զուրկ Հունանի համար այս մի մեծ նվաճում էր։ Նա նոր լիցք ստացած վերադառնում է գյուղ, կոլեկտիվ տնտեսության մեջ աշխատելու։

1939 թ. մահանում է Հունանի հայրը, բայց Հունանը չի ընկճվում։ Քրտնաջան աշխատանքով կոլխոզում նա ընտանիքի համար ստեղծում է ապրուստի լավագույն պայմաններ, որդիական սիրով գուրգուրում և մխիթարում է իր վշտահար և բազմաշարչար մորը։

Հայաստանում նոր կազմակերպված այգեգործական սովխոզների համար կոլխոզներից բանվորական ուժի հավաքագրում էր կատարվում։ 1939 թ. Հունանը Ծավ գյուղից իր մի խումբ հայրենակիցների հետ միասին փոխադրվում է Հոկտեմբերյանի շրջանը, Միկոյանի անվան այգեգործական 3-րդ սովխոզը։ 1941 թ. այնտեղ են փոխադրվում նաև Հունանի մյուս երկու եղբայրները, և բնակարան, աշխատանք ստանալով, հիմնավորվում են իրենց նոր բնակավայրում, որպես սովխոզի բանվորներ։

Սովխոզում Հունանը աշխատում է որպես դաշտավարական

բրիգադայի բրիգադիր։ Իր աղնիվ ստախանովական աշխատանքով նա շուտով դառնում է առաջավորներից մեկը և մի քանի անգամ արժանանում է շրջանային թերթի գովասանքներին։

Հոկտեմբերյանի N 3 սովխոզի աշխատողները երախտագիտությամբ են նշում Հունանի աշխատանքները սովխոզում։

— Նա իր աշխատասիրությամբ վարակում էր ամենքին, ուժեր չէր խնայում,— ասում են նրանք,— որպեսզի շրջանում մեր սովխոզը լիներ բոլորից ունևորը և առաջավորը։ Շատ օրեր է պատահել, որ նա գիշերները դաշտից տուն չէր գալիս՝ այգիների ջրելը ընդհատելու, աշխատանքը կիսատ չթողնելու պատճառով։

Բայց ահա ընդհատվում է Հունանի խաղաղ աշխատանքը։ 1941 թ. հունիսի 22-ին ուխտադրժորեն մեր երկրի վրա են հարձակվում գերմանա-ֆաշիստական զավթիչները— սկսվում է Սովետական Միության Հայրենական Մեծ պատերազմը։

Սովետական Հայրենիքը պաշտպանելու համար շատ-շատերի հետ 1941 թ. օգոստոսի 4-ին բանակ է գնում նաև կոմերիտական Հունան Ավետիսյանը։ Հունանը նշանակվում է հայ ռազմիկներից բաղկացած հրաձգային N զորամասի ստորաբաժանումներից մեկում։

Սկզբնական շրջանում, քանի դեռ ստորաբաժանումը ռազմաճակատ չէր մեկնել, երբեմն-երբեմն տակտիկական պարապմունքներ էր անցկացնում 3-րդ սովխոզի շրջակայքի տերիտորիայում։ Հունանին այդ մեծ ուրախություն էր պատճառում, մի կողմից՝ հենց այդ օրերին ծնված իր որդուն— Հենզելիկին տեսնելու, մյուս կողմից նա առիթ էր ունենում հպարտության զգացումով լի ցույց տալու ընկերներին սովխոզում իրենց ժրաջան աշխատանքի արդյունքները, բարգավաճ այգիները, որոնց երիտասարդ ծառերը, խաղողի թփերը տնքում էին առատ բերքի ծանրության տակ։

Մայոր Բաբկեն Առաքելյանը որպես ականատեսի հիշելով Հունանի այդ օրերի մասին, հետևյալն է գրել՝

«Երբ նա (Հունանը— Ն. Խ.) այդու մեջ կանգնած նայում էր խաղողի հասուն ողկույզների մարգարտաշար հատիկներին, նրա սիրտը լցվում էր բերկրանքով և ինչ-որ ջերմ հուզմունքով։ Այդ նա էր մշակում այդին իր հոգատար ձեռքերով։ Պարզ, համնստ և

խոհեմ մարդ էր Հունանը։ Ո՞վ կմտածեր, թե նա անջնջելի հիշատակ է թողնելու մեր ժողովրդի տարեգրության մեջ»։*

Մանկությունից կոփված, չարքաշ Հունանի համար երթերն ու ռազմական վարժությունները բոլորովին ծանր չէին, մանավանդ որ նա դեռ 1932—1935 թվականներին ծառայել էր, ծանոթ էր զինվորական կարգ ու կանոնին։ Բանակ մեկնելու առաջին իսկ օրերից մորը գրած նամակներում հիշեցնելով այդ մասին, հավատացնում է, որ այդ բոլորը «ինձ կոփեցին և սովորեցրին բանակում կանգ չառնել ոչ մի դժվարության առաջ։ Մարտական երթի ժամանակ առաջինն եմ, հրաձգության մեջ հետ չեմ մնում ոչ ոքից, էնպես որ, մամա ջան, քաջ տղա ես բերել...»։**

Այդ շրջանում համագյուղացիների միջոցով տեղեկանալով իր մեծ եղբոր կնոջ՝ Վարդուհու հարազատներից մեկի՝ Նավասարդի զոհվելու մասին, Վարդուհուն նամակ գրելով, հանդիսավոր կերպով խոսք է տալիս նրան, որ երբ մարտերի մեջ մտնի, Նավասարդին սպանող գաղազած ֆաշիստներից անպայման բազմապատիկ վրեժ կլուծի։

1941—1942 թ. թ. մի ամբողջ տարի հայկական զորամասերից մեկի կազմում գտնվելով, կատարելագործելով իր ռազմական և քաղաքական գիտելիքները, ջոկի հրամանատար ավագ սերժանտ Հունան Ավետիսյանը 1942 թ. օգոստոսի սկզբներին իր մարտական ընկերների հետ միասին մասնակցեց Երևանի Լենինի հրապարակում տեղի ունեցած հանդիսավոր երդմանը, որտեղ ռազմաճակատ մեկնող զորամասերն ընդունեցին կառավարության կողմից իրենց հանձնվող մարտական դրոշը։

Ռազմաճակատ մեկնելու կապակցությամբ Հունանը իր հարազատներին գրած մի նամակում հայտնում է՝

«Մեկնում եմ ճակատ, գիտցած եղեք, որ ձեզ ամոթով չեմ թողնի... ես երդվեցի՝ պատվով ու սրբությամբ կատարել իմ պարտքս հայրենիքիս առաջ, պարտիայի և հայր Ստալինի առաջ»։***

---

* Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի Պատմության Ինստիտուտի Հայրենական պատերազմի պատմության կաբինետ (այսուհետև այս աղբյուրը կհիշատակվի կրճատ՝ ՀՊՊԿ), գործ Սովետական Միության Հերոս Հունան Ավետիսյանի։

** «Լենինյան Դրոշ» հայերեն բանակային թերթ № 62, մայիսի 22, 1949 թ.։

*** Նույն տեղում։

1942 թ. օգոստոսի 7-ին Հունանը զորամասի հետ միասին մեկնեց Հյուսիսային Կովկասի ռազմաճակատը։ Ռազմաճակատ էին մեկնել նաև նրա ավագ և կրտսեր բոլոր 4 եղբայրները։*

Ինչպես թիկունքում, ռազմական և քաղաքական պատրաստության մեջ, նույնպես և ռազմաճակատում մարտերի մեջ Հունանը օրինակելի և կարգապահ ռազմիկի համբավ ստացավ։

Կովկասի պաշտպանության լարված օրերն էին...

Հայերը, վրացիները, ադրբեջանցիները, Կովկասի բոլոր ժողովուրդները մի հոգի, մի շունչ դարձած իրենց ավագ եղբոր՝ ռուս մեծ ժողովրդի զավակների հետ միասին պաշտպանում էին Կովկասի դարպասները։

Մարտերի մեջ էր գտնվում նաև կոմերիտական ավագ սերժանտ Հունան Ավետիսյանը։ Խոհեմ և շրջահայաց հայրենասերը ամբողջապես ապրում էր իր երկրի վիշտը, ժամանակավոր անհաջողությունները, բայց չէր հուսահատվում, և մարտական հրացանից հարվածում էր թշնամուն։

Հունանը հասկանում էր, որ թշնամու ճանապարհը դեպի Բաքու՝ դա նշանակում է նաև ճանապարհ դեպի Թբիլիսի, Երևան, հայրենի Ծալ գյուղը, Հոկտեմբերյանը, իր հարազատները։

— Ոչ, այդ չի լինի. ընկեր Ստալինը այդ երբեք չի թույլ տա... Սովետական Բանակը չի թողնի, մենք չպետք է թողնենք։

Սովետական Բանակը արյունահեղ մարտերում կանգնեցրեց թշնամու հորդաներին, հյուծեց, արյունաքամ արեց նրանց։

Այդ օրերին Թերեքի բնադծում մղվող կատաղի մարտերում մի շարք զորամասերի թվում գրոհային ակտիվ գործողություններ ծավալելով զգալի հաջողությունների հասավ նաև հայկական միավորումը։

Մարտերի մասնակից Հունանը հրճվանքի մեջ էր... այդ հաջողություններին զուգադիպեց նաև Երևանից ռազմաճակատ եկած պատգամավորների այցը, որոնք ոգեշնչող քաղցր լուրեր էին բերել սիրելի Հայաստանից, հարազատներից։

Ռազմաճակատի և թիկունքի կապը Հունանի և բոլոր մարտիկների մեջ անխախտ հավատ էր ներշնչում, որ իրոք իրենցից ամեն մեկի մեջքին կանգնած է բազմամիլիոն հզոր սովետական

* Նրանց վեցերորդ եղբայրը՝ Հայկազ Ավետիսյանը զոհվել էր 1939 թ. ՆՆԵՐԻ դեմ մղված կռվում։

ժողովուրդը՝ Սովետական Բանակի ամուր հենարանը, հաղթանակների այդ անսպառ աղբյուրը։

Մարտերի մեջ մտնելով՝ առաջին իսկ օրերից Հունանը իրար հետևից սիրալիր նամակներ էր ուղարկում տունը։ Նրանց մեջ հաղթանակի անհողդողդ կամք արտահայտելով, սիրտ տալով մորը, կնոջը, հավատացնում էր, թե իրեն ոչինչ չի պատահի, և որ հաղթանակն անպայման մերը կլինի։

«Շեշտում եմ,— գրում է Հունանը 1942 թ. օգոստոսի 19-ի թվակիր նամակում,— որ ինձ համար չմտածեք, ես ուր ուզում ա լինեմ, լավ կլինեմ... հիմա ես գտնվում եմ ֆրոնտում և աշխատում եմ դասակի հրամանատարի օգնական, հաղթանակը մերն է, չմտածեք»։*

Մի ուրիշ նամակում, 1943 թ. հոկտեմբերի 4-ին, հայտնում է. «երեք անգամ գնացել եմ գրոհի» և անվնաս դուրս եմ եկել, «ինձ համար չեմ մտածում... ես կրակի տակ նամակ եմ գրում, որ դուք չմտածեք»։ Իր հերթին թախանձագին խնդրում է տանեցող նամակներ գրել «եղբայրներիս և ձեր մասին»։**

Մարտերը քանի գնում կատաղի և արյունահեղ բնույթ էին ընդունում, բայց Հունանի կամքը մաղաչափ անգամ չէր տատանվում, չէր ընկճվում նրա ոգին։ Բազմաճակատում նա մի խնդիր ուներ՝ ջախջախել թշնամուն, հաղթել և այդպես միայն տուն վերադառնալ։ Անձնական շահերից բարձր դասելով հայրենիքի ազատության գործը, որ մեծ զոհեր էր պահանջում, ինքը և իր չորս եղբայրները դրանից չպիտի խուսափեն,— այսպես էր դատում Հունանը։

Այդ մասին Հունանը իր մտքերը գեղեցիկ կերպով դրսևորել է մորը գրած մի շարք նամակներում։ Մոր նամակի այն խոսքերին՝ թե իր բոլոր 5 որդիները բանակ գնալով իրեն թողել են մենակ, Հունանը որդիական սիրով և խոր ակնածանքով պատասխանում է.

«Մայրիկ ջան, ես գիտեմ, որ մենք 5 եղբայր ենք և քո որդիներն ենք, մեկս էլ քեզ մոտ չկանք, ոչինչ...

---

* ՀՊՊԿ, գործ Սովետական Միության Հերոս Հունան Ավետիսյանի, փաստաթուղթ № 1273։

** Նույն տեղում։

Անմոռանալի մայրիկ ջան... չմտածես, որ մեզ տարել են բանակ, քանի որ միայն մենք չենք, մեզ պես են բոլորը, աշխարհքն է էդպես»։ Մխիթարելով մորը, խնդրում է վերջ տալ մտածմունքներին. ընտանիքը «հավաքիր քո շուրջը,— ասում է Հունանը,— ասա, ի՞նչ պետք է անեք, որ լավ ապրեք... մայրիկ ջան, այդ խոսքը պետք է դու ասես, քանի որ տան ղեկավարը դու ես»։*

Իսկ մոր այն հարցին, թե արդյոք ե՞րբ իր որդիները տուն պիտի վերադառնան, Հունանը դրա համար ուներ կարճ և լակոնական պատասխան՝ «Այս դաղան թշնամուն, այս շներին,— գրում է Հունանը 1942 թ. հոկտեմբերի 17-ին,— պետք է ոչնչացնենք, հետ շպրտենք, նոր միայն առողջ վերադառնամ տուն»։**

1942 թ. դեկտեմբեր ամիսն էր... Հունանը այրվում էր մարտական որևէ ինքնուրույն առաջադրանք կատարելու ցանկությամբ։ Այդ մասին նա հաճախ խոսում էր իր մարտիկների հետ, դասակի հրամանատարի միջոցով հիշեցնում էր վաշտի հրամանատարին։ Սրանք էլ իրենց հերթին Հունանին ճանաչում էին իրոք որպես ճարպիկ, հնարագետ ռազմիկի, ծառայության կանոնները գիտցողի, որին կարելի էր և պե՛տք էր առաջադրանք տալ։

Եվ ահա դեկտեմբերի սկզբներին ներկայանում է այդպիսի հարմար առիթ. հրամանատարությունը Հունանին հանձնարարում է մի խումբ մարտիկների հետ խորանալ թշնամու դասավորության մեջ, հետախուզել նրա դիրքերը, և այդ բոլորի մասին մանրամասն տեղեկություններ բերել միավորմանը, մեր հարձակվող զորամասերին։ Հունանը, որ այդ ժամանակ արդեն դասակի հրամանատարի օգնական էր, իր ընկերների հետ անցնում է մարտական խնդրի կատարմանը։ Մեկնելուց առաջ վաշտի հրամանատարի մոտ գնալով, նա խնդրում է.

— Ընկեր հրամանատար, գնում եմ մարտական առաջադրանք կատարելու, հավատացած եմ, որ հաջողությամբ հետ կդամ, բայց եթե, բան է, զոհվեցի, խնդրում եմ հայտնեցեք հարազատներիս, որ ես ընկա Հայրենիքի ազատության համար մղած մարտերում, հավատարիմ իմ երդմանը։

---

* ՀՊՊԿ, գործ Սովետական Միության Հերոս Հունան Ավետիսյանի, փաստաթուղթ № № 1281 և 1272։

** Նույն տեղում։

Գիշերը վրա հասնելուն պես Հունանը իր կտրիճներով ճամփա է ընկնում, թափանցում է թշնամու թիկունքը։ Բայց չնայած ձեռք առած զգուշության բոլոր միջոցների, այնուամենայնիվ թշնամին շուտով նկատում է մեր հետախույզներին, կտրելով նրանց վերադարձի ճանապարհը, շրջապատում է, տեղատարափ կրակի տակ վերցնելով նրանց, աշխատում է ոչնչացնել բոլորին։ Բայց այդ չի հաջողվում թշնամուն։

Թշնամու թիկունքում մարտերով կատարած հետախուզությունը և շրջապատումից դուրս գալու պայքարը տևում է մի քանի օր։

— Զոհվեց մեր Հունանը իր կտրիճներով,— մտածում էին ընկերները։

Անցնում է երեք օր... մարտերով ու դեպքերով լի ռազմաճակատային օրեր, բայց Հունանը և հետախույզները չկան ու չկան... Հրամանատարը խորը ափսոսանքով, կսկիծը սրտում ցավելով Հունանի և մարտիկների համար, միաժամանակ վստահ է լինում, որ նրանք անպայման կենդանի կվերադառնան։ Չնայած սրան, Հունանի համագնդեցի մարտիկներից ոմանք, շտապելով, նամակներ են գրում գյուղը և հայտնում են, որ «Հունանը հավատարիմ զինվորական երդմանը, սոցիալիստական Հայրենիքի ազատության և անկախության համար մղվող մարտում հրամանատարության մարտական առաջադրանքը կատարելիս հերոսի մահով զոհվեց»։

Բայց Հունանը կենդանի էր. նույն այդ օրերին նա իր մարդկանց հետ, հիմնական զորամասերից կտրված, անընդհատ մարտեր մղելով շարժվում էր մի տեղից մյուսը, խուսափելով հակառակորդի մեծ ուժերին հանդիպելուց, հարվածներ հասցնելով՝ ամեն կերպ ձգտում էր ճեղքել թշնամու օղակումը։

Մի քանի օրվա համառ մարտերից հետո Հունանը իր մարտիկներին անվնաս դուրս է բերում թշնամու թիկունքից, հաջողվում է հետ շպրտել, ճեղքել հակառակորդի առաջավոր գիծը և գիշերով հասնել պաշտպանության մեջ գտնվող իրենց զորամասերին։ Գործողությունների ժամանակ աջ ոտքից և մեջքից վիրավորվելով, շարքից չի հեռանում, և ընդհանրապես մարտերի մեջ արտակարգ դիմացկունություն ու հմտություն հանդես բերելով, անձամբ ոչնչացնում է 25 հիտլերական։

1942 թ. դեկտեմբերի 17-ին և 19-ին նամակներ գրելով տուն, այդ մասին կնոջը հայտնում է հետևյալը՝

«Իմ թանկագին, սիրելի, անմոռանալի Բալախանում ջան, ես 5 ամիս է, որ գտնվում եմ ֆրոնտում, բայց դեկտեմբեր ամսից վրաս կային վերքեր աջ ոտիս և մեջքիս, բայց արդեն լավանում ա... ես իմ ձեռքովս, իմ մարտական հրացանով ոչնչացրել եմ 25 ֆաշիստ, Բալախանում ջան, դեռ քիչ եմ ոչնչացրել. դեռ նպատակ ունեմ՝ որ վերքս լավանա, գնամ իմ սրտիս ոխը հանեմ... դուք ինձ համար չմտածեք, ես ուր ուզում ա լինեմ՝ լավ կլինեմ»։*

Հունանի պետերից գնդի հրամանատարի տեղակալ, անվանի ռազմիկ Մամիկոն Խաչանյանը,** որը դումարտակի և վաշտերի հրամանատարների հետ միասին ղեկավարում էր ստորաբաժանումների գրոհային գործողությունները, Հունանին և նրա դասակի մարտիկներին ճանաչում էր որպես գնդում աչքի ընկած խիզախների։ Խաչանյանը 1942 թ. դեկտեմբերի 14-ին իր գրած նամակներից մեկում ի միջի այլոց նկարագրում է դեկտեմբերի 6-ի գրոհները։ Այդ գործողությունների ընթացքում Հունանի խմբի՝ հակառակորդի թիկունք դուրս գալու, այնտեղից հիտլերականներին հարվածելու և հետ վերադառնալու մասին Խաչանյանը հիացմունք արտահայտելով, հետևյալն է գրում՝

«Ամսի վեցին (դեկտեմբերի— Ե. Խ.) ես մի քանի ստորաբաժանումներով հարձակման անցա։ Իմ թևային ստորաբաժանման մի խումբը ձեռնամարտի բռնվեց։ Մի քանի քաջարի բանակայիններ անցան (թիկունքից) օդնության և բավական հեռու կտրված տարածության վրա մի քանի անգամ գերադանցող հակառակորդին ետ շպրտեցին ու իրենց ընկերներին ազատեցին։ Եթե դու լսեիր այդ գաղանային ոռնոցները և տեսնեիր, թե սարի գագաթից ինչպես էին գլորվում այդ շուն ֆրիցները, ուղղակի կսարսափեիր... Այդ քաջարի բանակայինները հաղթանակով վերադարձան ինձ մոտ (խոսքը Հունանի խմբի մասին է, որ մի քանի օր մնացել էր թշնամու օղակի մեջ և գործում էր նրա թիկունքում— Ե. Խ.)։

---

* ՀՊՊԿ, գործ Սովետական Միության Հերոս Հ. Ավետիսյանի, փաստաթուղթ № 1272։

** Մ. Խաչանյանը հերոսաբար զոհվեց 1944 թ. հունվարի 28-ին Կերչում։

Դա չտեսնված հերոսություն է, որ կատարում են մեր քաջարի բանակայինները»։*

Հունանի և նրա ընկերների հաղթանակը և կենդանի վերադառնալը ուրախություն է պատճառում ամենքին։ Առաջին օրերին Հունանը սկսում է իր վերքերի բուժմամբ զբաղվել։ Այդ ժամանակաշրջանում նրա մոտ են գալիս ընկերները և հատկապես համագյուղացիները, որոնցից նա հիշում է Սամվելին, Սավադին** և ուրիշներին։ Ուրախության արցունքն աչքերին նրանք գրկախառնվելով համբուրվում են Հունանի հետ և սկսում են քաղցր ու անուշ զրույցի բռնվել։

— Հունա՛ն, երևի խեղճ մայրիկդ հիմա վատ երազներ տեսած կլինի,— ասում է Սամվելը։

— Էդ ինչ գնդակ պիտի լիներ, որ ինձ սպաներ,— կատակի տալով պատասխանում է Հունանը։ Ես ասել եմ, ուր էլ ուզում ա ընկնեմ, միշտ կենդանի դուրս կգամ։ Այ, դուք պիտի տեսնեիք, թե ոնց իրար հետևից գյուլլախորով անելով սարից ցած էինք գլորում ֆրիցներին։ Դե, դուք գիտեք որսկանի իմ գյուլլի հունարը, իհարկե, մենք էլ շատ դժվար օրեր տեսանք. մեր գլխին գնդակների անձրև էր թափվում, բայց ինչպես տեսնում եք, ճեղքեցինք և կենդանի դուրս եկանք։

— Այ տղա,— խոսքը վրա բերելով ասում է Սավադը,— մոռացա ասել, որ քեզ սպանված համարելուց հետո, հրամանատարը ձեր տանեցոց վրա կարծեմ նամակ ա գրել և հայտնել է, որ դու զոհվել ես։

— Ի՞նչ,— երկարացնելով հարց է տալիս Հունանը։

Սավադը նույն բանը մանրամասն կրկնում է։ Հունանը իր սև և մեծ աչքերը չռած, հազար ու մի մտքի մեջ է ընկնում...

Նա մտածում է, թե հիմա ինչ սուգ ու շիվան սարքած կլինեն մայրը, կինը, հարազատները, իսկ ինքը բանից անտեղյակ, հանգիստ նստել ու ոչինչ չի գրում նրանց։ Այս խոսակցությունից անմիջապես հետո Հունանը գործի է անցնում։ «Անդրկովկասյան լեռնային բարևներ» ուղարկելով տանեցոց՝ «նամակ, թուր հասիր իմ յարիս»,— տենչանքով լի իրար հետևից մի քանի նամակներ է

---

* ՀՊՊԿ, գործ փոխ-գնդապետ Մ. Խաչանյանի, փաստաթուղթ № 4690։

** Սավադը զոհվել է Հայրենական Մեծ պատերազմում։

գրում, հայտնում է իր ողջ և առողջ լինելու մասին, պարզում է տեղի ունեցած թյուրիմացությունը։

«... Երբ որ դուրս ենք եկել ակրուժենու միջից, ես իմացել եմ, որ մեր հրամանատարներն ձեզ վրա թուղթ են ուղարկել, որ ես չկամ, բայց ես առողջ ազատվեցի գազազած շներից»,* — գրում է Հունանը իր 1943 թ. փետրվարի նամակում, իսկ մի ուրիշ նամակում ավելի մանրամասն պատմելով այդ մասին, ասում է. «Մի կողմով ճեղքել դուրս ենք եկել, հետ ենք շպրտել թշնամուն. վիրավորված, հիվանդանոցում պառկած էի, իսկ հիմա առողջացել եմ և շատ լավ եմ»։**

Հիվանդանոցում կարճ ժամանակով բուժվելուց հետո Հունանը դարձյալ նետվում է ռազմաճակատ, մասնակցում է 1943 թվականի սկզբներից Կովկասի ազատագրման համար սկսված հարձակողական մարտերին և կատարում է նորանոր սխրագործություններ։ Նա իսկական հերոս էր մարտի մեջ, վախ չուներ, այդ մասին ռազմաճակատային «Կարմիր Զինվոր» բանակային հայերեն թերթը գրում է՝ «Ավետիսյանը բազմիցս աչքի է ընկել խիզախ սխրագործությամբ»։ ***

Հունանը հանարյա միշտ ուրախ տրամադրության մեջ էր, իր անձնական օրինակով ոգևորում և սրտապնդում էր դասակի մարտիկներին և իր ընկերներին։ Տխուր մոմենտներ էր ապրում նա այն ժամանակ, երբ ուշանում էին տանից սպասվող նամակները։ Նա վառ հայրենասեր լինելով՝ միաժամանակ գորովագութ հայր էր, սիրող ամուսին։

«Այս նամակը, որ ես գրում եմ,— գրում է Հունանը իր կնոջը,— դլխիս վրայով գնում ա թնդանոթների արկերը և պայթում է իմ կողքին, բայց ես չեմ վախենում... կրակի տակ պառկած նամակ եմ գրում ձեզ, բայց դուք, որ ազատ ժամանակ ունեք, չեք ուղում որ նամակ գրեք»։****

Այս հանդիմանությունը արտահայտում էր Հունանի կարոտից այրվող սրտի սերը։ Նա շատ էր սիրում իր ընտանիքը, երիտա-

---

* ՀՊՊԿ, գործ Սովետական Միության Հերոս Հ. Ավետիսյանի, փաստաթուղթ № 1264։

** Նույն տեղում, փաստաթուղթ № 1278։

*** «Կարմիր Զինվոր» № 91, սեպտեմբեր 1943 թ.։

**** ՀՊՊԿ, փաստաթուղթ № 1270։

սարդ կնոջը, նորածին երեխային, որին ինչպես հարկն էր չէր էլ գուրգուրել։ Իր ամբողջ կարոտը նա գտնում էր տանից ստացած նամակների մեջ։ Դարձյալ և դարձյալ հավատացնում էր, որ ռազմաճակատում իր հետ ոչինչ չի պատահի, միայն թե տանեցիք ժամանակին նամակներ գրեն, իր սիրտը հանգիստ պահեն։ Մնացած ամեն բանը նորմալ կդնա, նա ավելի լավ կկռվի, և մարտի արհավիրքները նրա համար բոլորովին սարսափելի չեն։

Մարտի ծանր պայմաններում հաճախ մոռանալով իր մասին, կատարելով զինվորական իր պարտքը, միաժամանակ մտահոգվում էր ընտանիքի անդամ ամենամանր հոգսերով, հետաքրքրվում և հարցնում էր կնոջը. «կգրես, թե լուսամուտի շուշեք գցե՞լ ես, թե՞ չէ», հոգում էր, որ իր սիրած կինը, իր նորածին բալիկը վրա հասած ձմռան ցրտերին չմրսեն։

* * *

Ստալինգրադյան հաղթական մարտերի լուրը, Գերագույն Գլխավոր Հրամանատար ընկեր Ստալինի պլանով սովետական զորքերի կողմից շրջապատված ֆաշիստական բանակների ջախջախումը թևավորել էին Կովկասյան ռազմաճակատի զորքերին, որոնք 1943 թվականի սկզբին հարձակման անցնելով՝ սկսեցին դուրս վռնդել օկուպանտներին հարազատ Կովկասից։

Գործող բանակի միավորումների թվում հարձակման անցավ նաև հայկական միավորումը։ Հունվարի 3-ին գրոհով ազատագրեց Մալգոբեկ քաղաքը, անցավ Թերեք գետը և Հյուսիսային Կովկասում կրնկակոխ հետապնդելով թշնամուն, մասնակցեց շատ բնակավայրերի ազատագրմանը։ Այդ թափով 38 օր մարտեր մղելով Հյուսիսային Կովկասում, Կուբանի տերիտորիայում՝ կտրեց և անցավ ավելի քան 800 կիլոմետր տարածություն։

Թշնամուն ջախջախելը և հետապնդելը կատարվում էր ճահիճների, ցեխի ու խոնավության հաղթահարման, ձմեռվա ձյան ու ցրտաշունչ սառնամանիքների պայմաններում։ Մարտերով շարժվող այս երթի մեջ մի ամբողջ շղթա է կազմում հայ մարտիկների սխրագործությունները։

Հունանը այդ մարտերում ավելի, քան նախորդ շրջանում, ցույց

ուվեց իրեն որպես լավագույն, դիմացկուն ռազմիկի, կարգապահ, հոգատար կրտսեր հրամանատարի, որի դասակի զինվորներն ու մարտիկները ավանդարդում ընթանալով՝ պատվով էին կատարում իրենց մարտական խնդիրը։ Դասակի հրամանատարի տեղակալ լինելով, նա միաժամանակ ագիտատոր էր, իր ձեռքից բաց չէր թողնում բանակային «Կարմիր Զինվոր» թերթը։ Շարունակ մարտիկների մեջ, խրամատներում գտնվելով՝ մասսայականացնում էր ընկեր Ստալինի հրամանները, զեկուցումները, Սովետական Ինֆորմբյուրոյի հաղորդումները, Ստալինգրադի և Հյուսիսային Կովկասի զորքերի հաջողությունները։ Նա իր պարապմունքների նյութը հիմնականում կառուցում էր՝ «Կրնկակոխ հետապնդենք գազանին։ Ոչ մի հիտլերական կենդանի չպետք է գնա սովետական հողից»։ «... Որքան ուժեղ հարվածենք թշնամուն, այնքան ավելի շուտ կմոտենա հաղթանակի ժամը»։ Բանակային թերթում տպագրված նյութերի հիման վրա նա մատնացույց էր անում աշքի ընկած ռուս, վրացի, ադրբեջանական և հայ հերոսների խիզախությունները, փառաբանում էր նրանց, կոչ էր անում իր մարտիկներին նմանվել նրանց, բազմապատկել խիզախների թիվը։

Հունանի մարտական ընկերներից կրտսեր հրամանատար Ֆարմանյանը, հիշելով Հունանի հետ անցկացրած այդ օրերը, հետևյալն է պատմում.

— 1943 թվականի հունվար ամսից ես ծանոթացա Հունան Ալեքսիոյանի հետ. նա շատ հայրենասեր մարդ էր, շատ էր ուրախանում, որ հայ մարտիկները լավ էին կռվում, և որ կան շատ հայ հերոսներ, գեներալներ. մեզ նա միշտ ասում էր. «մենք պետք է բարձր պահենք մեր հայ ժողովրդի անունը»։

Ես նրան շատ էի սիրում, քանի որ նա շատ ընկերասեր տղա էր, լավ ձայն ուներ և լավ էլ երգում էր։ Ոչ մի դժվարությունից չէր վախենում, կռվում էր խիզախորեն։ Նրան հատկապես շատ էին սիրում իր զինվորները, որովհետև նա սովորեցնում էր անվախ կռվել, ինքն էլ միշտ կենդանի օրինակ էր ծառայում նրանց համար։

... Լինում էին դեպքեր, երբ թեթև վիրավորվում էր ռումբի բեկորից, բայց երբեք չէր գնում սանիտարական մասը. երբ ասում էինք— Հունան, գնա բժշկի, նա մեզ պատասխանում էր.—

Սովետական Միության Հերոս Հովհան Ավետիսյանի որդի Հենգելիկը իր տատ՝ Խանումի հետ

Ի՞նչ պետք է անեմ բժիշկը, թողնեմ մարտը և գնամ բժշկի՞։ Հարձակումներից առաջ մարտիկներին միշտ հորդորում էր. «տղերք ջան, լավ կռվենք, շուտ հաղթանակ տանենք»։*

1943 թ. փետրվարի 10-ին Կուբանի հարթավայրում Վերխնե-Պոդին և Նովո-Ջերելիևկա բնակավայրի մոտ վաղ լուսաբացին հայկական միավորումը ծանր և արյունահեղ մարտերի մեջ է ընկնում, ենթարկվում է դարանակալ թշնամու տանկային և հետևակային գերազանց ուժերի կատաղի հարձակմանը։ Երթից կարճատև հանգստի նստած մեր զորամասերը լուրջ փորձության օրեր ապրեցին, ճակատամարտը կրում էր դաժան և արյունահեղ բնույթ։ Անցյալում նահանջի տխուր օրեր ապրած ռազմիկները, որոնք սրտատրոփ սպասում էին հարձակողական մարտերի այդ օրերին, ոչ մի կերպ չէին հանդուրժում ձեռքից բաց թողնել գրոհի և հաղթանակի նախաձեռնությունը։ Գնդերի հրամանատարության, սպաների և մարտիկների անձնազոհ գործունեությամբ, հարևան զորամասերի օգնությամբ հաջողվում է հետ մղել թշնամու ուժերը, ճզմել և ապա ջախջախել նրանց։

Մարտի դաշտում շատ ռազմիկների թվում Հունանը իր մարտիկների հետ միասին ցույց տվեցին իսկական հերոսության օրինակներ։ Ծանր փորձություն ապրելով՝ նրանք կրակ էին կտրել, անդուսպ մղումով նետվում էին դեպի մարտը, նրանց բոլորի սրտերն այրվում էր վրեժխնդրության կրակով, մարտի դաշտում հերոսի մահով զոհված ընկերների արյան համար։

Այս մարտերից հետո առաջխաղալով Ստեպնայա և Կույբիշևսկայա բնակավայրերի ուղղությամբ, միավորումը ռազմաճակատի հրամանատարության առաջադրանքով անցնում է հանգստի և վերապատրաստության։ Միավորման նոր հրամանատար է նշանակվում Հայրենական պատերազմի բոցերում կոփված անվանի գնդապետ Նվեր Սաֆարյանը։** Նոր հրամանատարի ղեկավարությամբ— միավորումը պաշտպանության հատված է ընդունում Ազովի ծովի հյուսիս-արևելյան ափը։ Սկզբից ևեթ հրամանատարությունը ձեռնամուխ է լինում ընկեր Ստալինի 1943 թ. փետրվարի 23-ին Սովետական Բանակի 25-րդ տարեդարձի առ-

---

* ՀՊԳ, Ֆարմանյանի սղագրությունից։

** 1943 թ. դեկտեմբերից գեներալ-մայոր։

թիվ № 95 հրամանում առաջադրած խնդիրների կենսագործմանը՝ է՛լ ավելի բարձրացնել հրամանատարական անձնակազմի, զորամասերի ու ստորաբաժանումների կարգապահությունը, նրանց ռազմական արվեստը, զենքի տիրապետումը, որպես գրավական դալիք նոր մարտերի հաջողության համար։

Միջին հրամանատարական կազմի հետ պարապել է սկսում ինքը գնդապետը իր օգնականների հետ միասին, իսկ կրտսեր հրամկազմը վերապատրաստվում է զորամասերում և ստորաբաժանումներում։ Այս կարգով վաղ գարնանից միավորման մեջ ամենուրեք սկսում են եռալ վերապատրաստության աշխատանքները։

Հունանը լավագույն սերժանտների և կրտսեր հրամանատարների թվում, իր հմուտ աշխատանքով շուտով արժանանում է գընդապետ Սաֆարյանի և իր զորամասի հրամանատարների ուշադրությանը։ Պարապելով իր վրա, միաժամանակ դասակի պարապմունքներին համընթաց նա ձեռնամուխ է լինում անցած մարտական փորձի ուսումնասիրությանն ու մասսայականացմանը։ Նա ջանք չի խնայում բարձրացնելու իր մարտիկների զգոնությունը, ռազմական և քաղաքական մակարդակը, կատարելագործելու խրամատավորման, դիպուկ հրաձգության, հարձակման ժամանակ կուզե-կուզ վազելու, փորսող գնալու, տրանշեյը նետվելու և հակառակորդին ավինահար անելու ռազմական արվեստը։

Այդ բոլոր աշխատանքների ժամանակ Հունանը միշտ հագնված էր լինում կոկիկ, զինվորականին վայել կարգապահությամբ։ Մարտական պայմանները նրան չէին շեղում իր սովորությունից. կարգապահ էր, պահանջկոտ և բառիս լայն իմաստով հոգատար հայր էր իր մարտիկների համար։ Նրա մարտական ընկերներից միևնույն զորամասում ծառայած ռուս մեծ ժողովրդի զավակ կրտսեր հրամանատար Տկաչենկոն անմոռանալի հուշեր է պահել Հունանի մասին։

«Բանակ զորակոչվելով,— ասում է Տկաչենկոն,— ես գործուղվեցի այն զորամասը, որտեղ ծառայում էր Հունան Ավետիսյանը... Ի՞նչը ինձ դուր եկավ Հունանի բնավորության մեջ. նա հաստատակամ և կայուն հրամանատար էր, պահանջկոտ իր և իրեն ենթակաների նկատմամբ, դիպուկ հրաձիգ, լավ գիտեր զին-

վորական կանոնները»։ Նույն զորամասից կապիտան Հրանտ Մադոյանը պատմում է.— «Նա (Հունանը— Ե. Խ.) խելոք տղա էր, կարգապահ և համեմատած իր կրթությանը քաղաքականապես պատրաստված։ Ազատ ժամերին բանակայիններին միշտ հավաքում և զրույց էր անցկացնում։ Երբ նոր բանակայիններ էին գալիս նրա մոտ, նրանց պատմում էր Մալկոբեկի, Մոզդոկի տակ միավորման մղած մարտերի մասին և աշխատում էր այդ միջոցով նրանց դարձնել փորձառու մարտիկներ։ Ապա պատմում էր նրանց հետախուզության և գիշերային մարտերի մասին։ Նա ինքը հաճախակի գնում էր հետախուզության... Նրա համար հրամանատարի հրամանը՝ դա Հայրենիքի հրամանն էր։ Հունանը գիշերները 10—20 րոպե մեկ անգամ մտնում էր խրամատները և ստուգում մարտիկների մարտական վիճակը, չնայած ինքը դասակի հրամանատարի տեղակալ էր, բայց ավելի շատ էր զբաղվում իր դասակով։ Նա գիտեր, թե որ մարտիկի հետ ինչպես պիտի վարվի. օրինակ, եթե պատահում էր, որ մի մարտիկ կռվի ծանր մոմենտին մթերքի ուշ հասնելու պատճառով իր մոտ եղած պարենով չէր կշտանում, նա իր բաժնից տալիս էր նրան, որպեսզի քաղցած չմնա։ Զափազանց նվիրված հայրենասեր էր, ռիսկոտ, իր կարգապահ և օրինակելի աշխատանքով միշտ աչքի էր ընկնում»։*

Այդ օրերին՝ ռազմաճակատի հայ ռազմիկների կյանքում նրանց մարտական և քաղաքական պատրաստության կատարելագործման, թշնամուն ատելու և հաղթելու գործում մեծ դեր խաղաց 1943 թ. փետրվարին «Պրավդայում» լույս տեսած «Հայ ժողովրդի նամակը»։ 1943 թ. մարտի 3-ին «Կարմիր Զինվորի» էջերում տպագրվեց և խրամատները հասավ ռազմաճակատի բոլոր հայ զինվորներին ու հրամանատարներին ուղղված հայ ժողովրդի այդ երևելի նամակը։ Նամակը ցնցող տպավորություն գործեց ամենքի՝ նրանց թվում և ավագ սերժանտ Հունան Ավետիսյանի վրա։ Զորամասերում և ստորաբաժանումներում կազմակերպված ժողովներում և հավաքույթներում ամենուրեք քննվում է նամակը, մշակվում են գործնական միջոցներ՝ հայ ժողովրդի նակազը ճշգրտորեն կենսագործելու համար։ Արտահայտելով գնդապետ Սաֆարյանի միավորման ամբողջ անձնակազմի ցանկությունը, ելույթ

* ՀՊԳԿ, Տկաչենկոյի և կապիտան Հ. Մադոյանի սղագրություններից։

ունեցող հրամանատարներն ու մարտիկները միաբերան երդվում են.

—Չենք վերադառնա տուն, մինչև չոչնչացնենք վերջին հիտլերականներին։

Այս խոսքերը կարծես Հունանի հոգու խորքերից էին բխում. նա այդ ասել էր ռազմաճակատ գալու առաջին իսկ օրերից, հարազատներին գրած իր բազմաթիվ նամակներում։

Հայ ժողովրդի նամակը Հունանը պահում էր ծոցում, ամեն քայլափոխում նա հիշում էր մայր հայրենիքի նակաղը։ Նրան թվում էր, որ անվերջ իր ականջի տակ նակաղի խոսքերն են շշշնջում իր մայր՝ խանումը, կինը, իր սիրելի որդին՝ Հենզելիկը, համագյուղացիները, ընկերները, որոնց նա խոսք տվեց պատվով կատարելու իր պարտքը Հայրենիքի հանդեպ՝ թշնամուն հաղթած տուն վերադառնալ։

Հունանը իր հերթին հայ ժողովրդի նամակը հանդամանորեն մասսայականացնելով դասակում, հաճախ առանձնանալով կրկին ու կրկին մանրամասն ընթերցում էր նրա ընդարձակ տեքստը, ժողովրդի սրտի հույզերով գրված, հոգի հրդեհող այդ խոսքերը՝

«... Ձեր կատարած սխրագործությունների յուրաքանչյուր լուրը,— կարդում էր Հունանը նամակում,— հրճվանքով է լցնում մեր սրտերը, ոգևորում է մեզ՝ անդուլ, անձնազոհ աշխատանքի։ Մենք անխոնջ աշխատանքով գործարաններում, կոլխոզներում, սովխոզներում, գիտական լաբորատորիաներում օգնում ենք ռազմաճակատին՝ մոտեցնելու մեր արդար գործի հաղթանակի ժամը։ Մեր մեծ առաջնորդ և սիրելի զորավար ընկեր Ստալինը 1942 թվականի նոյեմբերի 7-ի իր պատմական հրամանում ասաց. «Հեռու չէ այն օրը, երբ թշնամին կիմանա Կարմիր Բանակի նոր հարվածների ուժը»։

Այդ օրը հասավ։ Հյուսիսում, Լենինգրադի մոտ, Դոնբասում, Ազովի և Սև ծովերի ափին Սովետական Բանակը հզոր հարվածներ է հասցնում հիտլերյան ավազակներին։

Մենք հպարտանում ենք, որ հարձակվող Սովետական Բանակի շարքերում կռվում ենք նաև դուք, մեր ժողովրդի հավատարիմ զավակներդ։

... Հազարամյակներ շարունակ իր սուրը պատյան չի դրել մեր ժողովուրդը։ Նա հաղթահարել է շատ տառապանքներ, մինչև

որ հասել է այն երջանկությանը, որ սովետական իշխանությունն է բերել նրան...

Հայ մարտիկներ.

Ատեցե՛ք թշնամուն ձեր հոգու ամբողջ ուժով։ Թող այդ ատելությունը ձեր կրծքերը դարձնի պողպատակուռ զրահ, ձեր բազուկներին տա անսպառ կարողություն։

Ոչնչացրե՛ք ֆաշիստական ոհմակը։

Ամեն մի ընտանիք լուր է սպասում, թե քանի՞ ֆաշիստ է ոչնչացրել իր տանից գնացած մարտիկը...

Հազարավոր հայ մարտիկներ իրենց հերոսությամբ բարձր են պահում իրենց ժողովրդի պատիվը, հայ ռազմիկի պատիվը։ Այդպիսի անմահ հերոսների գործերն է գովել հայ ժողովուրդը իր մեծ բանաստեղծ Հովհաննես Թումանյանի խոսքերով.—

«Գործն է անմահ, լա՛վ իմացեք,
Որ խոսվում է դարեդար,
Երնե՞կ նրան, ով իր գործով
Կապրի անվերջ, անդադար»։

Սովետական Հայրենիքի բաջարի պաշտպաններ.

Մեր Հայրենիքը հզոր է սովետական ժողովուրդների ստալինյան բարեկամությամբ։ Մեր ավագ եղբայր ռուս մեծ ժողովրդի գլխավորությամբ մարտնչեցեք թշնամու դեմ, մեր եղբայրական ժողովուրդների զավակների հետ կողք-կողքի, ձեռք-ձեռքի տրված։ Ամրապնդեցեք ռազմաճակատում անխախտ բարեկամությունն ու եղբայրությունը։

... Սրբորեն, ժամանակին կատարեցեք ձեր հրամանատարների ու պետերի հրամանները։

... Հանուն Սովետական Հայրենիքի, հանուն մայր Հայաստանի, հանուն մեր Ստալինի մի՛ խնայեք ձեր կյանքը, հարվածեցե՛ք թշնամուն մինչև վերջին կաթիլ արյունը»։

Հունանը ավարտելով այս թևավոր խոսքերը, երկար-երկար մտածում էր գալիք մարտերի մեջ իր կատարելիք սխրագործությունների, հարազատ ժողովրդի հրամանի կատարման մասին։

Նակաղի մեջ թիկունքի հերոսական աշխատանքի մասին արձանագրված փաստերի տպավորության տակ, Հունանը իր նամակ-

ներում բարձր գնահատելով գյուղում ինտենսիվ աշխատանքի անցած հարազատներին, քաջալերելով նրանց, ասում է՝

«Գիտեմ, որ դու արդեն աշխատում ես,— գրում է նա իր կնոջը 1943 թ. մայիսի 11-ի նամակում,— հոգնած գալիս ես աշխատանքից, երեխան քեզ նեղություն ա տալիս... բայց ոչինչ, պատերազմ ա, պետք է ամեն դժվարություն քաշես։ Ես ֆրոնտում ամեն դժվարություն քաշել եմ... շուտով պատերազմը կվերջանա, հաղթանակը մերն ա, հենց որ մենք (խոսքը իր և եղբայրների մասին է.— Ե. Խ.) դանք տուն, ձեզ միանգամայն կթերևացնենք։

Ես քեզ և մայրիկին արձակուրդ կտամ... Բայց որ հիմա մարդ չկա՝ դուք լավ աշխատեք, տունը լավ պահեք, երեխաներին լավ պահեք»։*

Ինչպես կտեսնենք, Հայրենիքին անհունորեն նվիրված Հունանը սրբությամբ կատարեց ժողովրդի այս նակաղը։ Նրա հայրենասիրական նվիրական հատկությունները խտացրած գույներով և հուզիչ սխրագործություններով առավել ևս հանդես եկան ֆաշիստական զավթիչներից մեր սրբազան հողը մաքրելու համար մղված հետագա հերոսամարտերում, որի համար նա իր մարտիկների հետ օրուգիշեր պատրաստվում էր։

1943 թ. մայիսին ստորաբաժանումների և ամբողջ մարտիկների ուշադրության կենտրոնում էր գտնվում Գերագույն Գլխավոր Հրամանատար ընկեր Ստալինի մայիսմեկյան № 195 հրամանը 1942—1943 թվականների ձմեռային կամպանիայի արդյունքների մասին, կամպանիայի, որի ընթացքում Սովետական Բանակը լուրջ պարտություն մատնեց հիտլերյան բանակին, ոչնչացրեց մեծ թվով նրա տեխնիկան ու կենդանի ուժը և դերի վերցրեց ավելի քան 300.000 զինվոր ու սպա։ Հրամանում ընդգծում է ֆաշիստական լաղերի ճգնաժամը, Սովետական Միության ուժերի և Սովետական Բանակի հարվածների օրըստօրե աճող թափը։ Հրամանը նախքան բանակային թերթերում տպագրվելը, Հունանը և իր ընկերները առաջին անգամ գնդի ռադիոընդունիչի մոտ լսում են հրամանի եզրափակիչ այն խոսքերը, ուր ընկեր Ստալինը ասում է. «Թշնամին արդեն ճանաչեց մեր զորքերի ջախջախիչ հարվածի

* ՀՊԳԿ, գործ՝ Սովետական Միության Հերոս Հ. Ավետիսյանի, փաստաթուղթ № 1263։

ուժը։ Մոտենում է այն ժամանակը, երբ Կարմիր Բանակը... կը-փշրի ֆաշիստական դաղանի ողնաշարը»։* Առաջնորդի հրամանի այս խոսքերը ուրախության և անսահման հպարտության զգացմունքով լցրեցին Հունանի սիրտը։

«Ռադիոհաղորդումը լսելուց հետո,— ասում է Հունանի մարտական ընկերներից սերժանտ Կարապետ Մաթևոսյանը,— Հունանը մեզ ասաց.— Եկեք, տղերք, լավ կռվենք, պատվով ու հաղթանակով վերադառնանք տուն։ Այդ զրույցից հետո մենք հեռացանք հաղթանակի հավատը մեր սրտերում պահած»։**

1943 թ. օգոստոսին տեղի է ունենում միավորման զորամասերի ստորաբաժանումների վերապատրաստության արդյունքների ստուգումը։ Գնդապետ Սաֆարյանի հրամանատարությամբ գործող զորամասը բանակում գրավում է առաջին տեղերից մեկը։

— Շնորհավորում եմ, գնդապետ։ Միավորումը այժմ ամուր ոտքերի վրա է կանգնած,— ասում է ռազմաճակատի հրամանատար, բանակի գեներալ Պետրովը, որ մեծ հոգատարությամբ հետևվում էր նախապատրաստությունների աշխատանքներին և անձամբ ստուգել էր ռազմա-քաղաքական ուսուցման արդյունքները։

Այդ արդյունքի մեջ իրենց արժանի բաժինն ունեին միավորման միջին և կրտսեր բոլոր հրամանատարները, իր համեստ բաժինն ուներ նաև դասակի հրամանատարի տեղակալ ավագ սերժանտ Հունան Ալեքսյանը։

— Տղե՛րք, ջանս եռ է գալիս, սրտանց կարոտել եմ թեժ մարտերի,— ասում էր Հունանը իր մարտիկների հետ զրուցելիս,— էս անգամ էնպես դաս պիտի տամ ֆրիցներին, որ երբեք չմոռանան։ Բանակայինները համամիտ իրենց հրամանատարի հետ, նրան հիշեցնում են հրաձգության, խրամատավորման, տակտիկական և քաղաքական պատրաստության իրենց կատարելագործման մասին, միաբերան պատրաստակամություն են հայտնում նոր մարտերի մեջ մտնելու համար։

Շատ շուտով կատարվում է Հունանի և հայ ռազմիկների իղձը։ Օգոստոսի վերջերից ռազմաճակատի հրամանատարության ա-

---

* Ի. Վ. Ստալին «Սովետական Միության Հայրենական Մեծ պատերազմի մասին», Հայպետհրատ, 1946 թ., էջ 114։

** ՀՊՊԿ, ավագ լեյտենանտ Կ. Մաթևոսյանի սղագրությունը։

ռաջադրանքով հայկական միավորումը մտնելով № բանակի կազմի մեջ, որի հրամանատարն էր վրաց ժողովրդի անվեհեր զավակ գեներալ-լեյտենանտ Լեսելիձեն,* պաշտպանության նոր հատված է դրավում Նովորոսիյսկ քաղաքից հյուսիս-արևելք ընկնող անտառապատ լեռների շրջանում, գերմանական «կապույտ գիծ» կոչված ամրությունների դիմաց։

Սկսվում են Նովորոսիյսկի և Թաման թերակղզու ազատագրման արյունահեղ մարտերը։

Գումարտակներին և նրա ստորաբաժանումներին խնդիր է տրվում՝ ակտիվ կրակ վարել և հետախուզական մարտեր մղել գլխավորապես Դոլգայա լեռան և Սախարնայա Գոլովկա կոչված բարձունքների ուղղությամբ, հայտնաբերել թշնամու ուժերը, կրակակետերի դասավորությունը, ամրությունների սիստեմը, աստիճանաբար ոչնչացնել դրանք, պատրաստ լինել ընդհանուր հարձակման համար՝ վճռական հարվածով գրավելու Դոլգայա լեռը և Սախարնայա Գոլովկայի բարձունքները, որոնք համարվում էին Սևծովյան կարևոր նավահանգիստ Նովորոսիյսկ քաղաքի բանալիները։ Հունանը իր դասակով պաշտպանության բնագիծ է ընդունում անտառապատ լեռների մոտ, որոնք իրենց անմատչելիությամբ և ճանապարհազրկությամբ շատ նման էին Ղափանի և Լոռվա չքնաղ անտառապատ լեռներին։ Այստեղ լեռների անտառների հետ միասին առկա էր նաև դեղածիծաղ Սև ծովի զովաշունչ քամին, որը շոյում էր Հունանի և հայ ռազմիկների արևակող, լրջոնքի դույն ստացած առնական դեմքերը։

—Հունան, հա՛մ արա, տե՛ս, խաղող էլ կա այստեղ,— ասում էին բանակայինները, տեղական կիսահաս խաղողից բաժին հանելով նրան։ Անսովոր համ ստանալով խաղողից, Հունանը ընկերներին ասում է.

---

* Լեսելիձե Կոստանդին Նիկոլայեվիչը Հայրենական Մեծ պատերազմի առաջին իսկ օրերից, որպես № բանակի հրետանու հրամանատար, մասնակցել է մեր Հայրենիքի անկախության և ազատության համար մղած մարտերին։ Նրա ղեկավարած միավորումները հաղթական մարտեր մղեցին Բրյանսկի անտառներում, Մոսկվայի մատույցներում, Հյուսիսային Կովկասում և Ուկրաինայի ազատագրման համար։

Լեսելիձեն գնդապետի կոչումից հասավ գեներալ-գնդապետի զինվորական-տեխնիկական, բանակի հրամանատարի պաշտոնին։ Մարտական պոստում մահացավ 1944 թ. հունվարի 18-ին։

— Է՜հ, ուրիշ բան է մեր սովխոզի խաղողը. տղերք, մի քիչ էլ համբերեք, պատերազմը կվերջանա, տուն կգնանք, ես ձեզ հյուր կկանչեմ Հոկտեմբերյան. այ, էն ժամանակ կտեսնեք, թե ի՞նչ խաղող կուտացնեմ ձեզ, խաղող, որի համը բերաններիցդ չգնա։

Արդեն աշնան սկիզբն էր... բազմերանգ գույներով զարդարվում էին Նովորոսիյսկի և Կուբանի անտառները։ Լեռնաշխարհի զավակները Հայաստանի բնությունը հիշեցնող հարազատ միջավայրում գտնվելով շատ ուրախ էին։ Պաշտպանության մեջ նրանք հարմար առիթներին թշնամու աչքից հեռու անտառի ապահով բացատում երբեմն ուրախ ժամանցներ էին կազմակերպում։ Լսում էին բանակային ինքնագործ խմբակի ելույթները, կովկասյան թառի և քյամանչայի հուզալի մելոդիաների ձայնակցությամբ երգում կամ աշխույժ եղանակներով պարում և ուրախանում էին, հիշելով սիրելի Հայաստանը, հարազատներին...

Հունանը իրենց ստորաբաժանման մեջ այդ ուրախությունների հոգին էր, ձեռնարկողն ու կազմակերպիչներից մեկը։

Ռազմաճակատային զինվորական թերթերի թղթակիցները հաճախ էին լինում գործող բանակի ստորաբաժանումներում, անձամբ շփման մեջ էին առաջավոր դծի ռազմիկների հետ։ Նրանցից մեկը Դոլգայա լեռան ստորոտում պաշտպանության մեջ գտնվող Հունանի և նրա մարտիկների այդ ուրախ ժամանցների մասին Անդրկովկասի ռազմաճակատային «Բանվորագյուղացիական Կարմիր Բանակի Մարտիկ» բանակային թերթում տպագրած «Դյուցազնը» վերնագիրը կրող օջերկի մեջ այսպես է նկարագրում.

— Տղերք, ծափ տվեք. էլի՛, էլի՛, ավելի՛ ուժեղ։

Եվ ծափերն ուժեղանում էին իր՝ պարողի պահանջով։ Աշնանային երեկոյան, անտառային բացատում, բանակայինները շրջապատել էին թեթևաշարժ և ճկուն պարողին։ Թվում էր, թե այդ ամրակազմ, թիկնեղ ու մկանուտ ռազմիկը չի կարող այդպիսի արագ ու թեթև շարժումներ կատարել։ Սակայն նա վարպետ ու ջլուտ պարողի նման ծալում էր ոտները, համարյա կպչում գետնին, ապա վայրկենապես վեր թռչում, հողմապտույտ տալիս։ Քրտինքը կաթիլ առ կաթիլ ծորում էր նրա լայն դեմքից, և թոխ աչքերը վառվում էին երջանկությամբ։

— Հունան ջա՜ն, քեզ մատաղ, քո հոգուն մատա՜ղ,— լսվում էին խրախուսանքի փաղաքշող ձայներ։

Ու շարժումներն ավելի էին արագանում, հասնելով անտեսանելիության։

— Ինչքան կենսուրախ տղա է Հունանը։ Եվ դեռ ինչքան կենսուրախ եղած կլիներ նա խաղաղ պայմաններում, իր Հայրենի օջախում,— մտածում էին ռազմիկները։ Ու նոր մարտիկներ էին ասպարեզ գալիս պարելու։

Այդ ժամանակ Հունանը քաշվում էր պարողների միջից, նստում աշնանաթափ տերևների վրա, հանգստանում ու երազում։

— Չէ, հեռու չեն խաղաղ ու երջանիկ օրերը, հեռու չեն...

Մթնշաղն իջնում էր լեռների ու հովիտների վրա։ Ու Հունանի լայն կրծքից բխում էին ժողովրդական մելոդիայի թովիչ հնչյունները։ Նրա խրոխտ ու առնական ձայնը դառնում էր մեղմ ու հուզական, և թվում էր, թե անտառային խաղաղ երեկոն լցվում էր Հայրենիքի բույրով ու երանգով։ Հեռվում արձագանքում էին թովիչ երգի հնչյունները.

Աղբյուր, աղբյուր, ջան աղբյուր,
Ջուրդ գլգլան աղբյուր...

Եվ մարտիկների երևակայության առաջ կարկաչում էին հայրենի լեռների զուլալ աղբյուրները։ Փոքրիկ բացատն ընդարձակվում էր նրանց աչքին։ Մարդիկ անտառի դեղնավուն ու կապույտ հորիզոնի վրա տեսնում էին իրենց հայրենի կապտամշուշ լեռնաշխարհը, փիրուզյա Սևանը, սպիտակափառ Մասիս հսկան, հայրենի սիրառատ ու խաղաղ օջախները և լսում հանդիպ վերադարձող կովերի բառաչը...»։*

Սեպտեմբերին Թամանյան գերմանական պլացդարմի դեմ սկսվում է մեր զորքերի հարձակումը։ Հարձակման է անցնում նաև հայկական միավորումը։ Գոլգայա լեռան ամրությունների ուղղությամբ գրոհող զորամասի մեջ էին գործում Հունան Ավետիսյանի դասակը, նրա անվեհեր մարտիկները։ Հարձակվողների համար աննպաստ էին պայմանները, որովհետև անտառապատ սեպաձև բարձունքները, որոնք խրվել էին ալիքաձև լեռնաշղթայի մեջ, գտնվում էին թշնամու ձեռքին և տեղանքի վրա իշխող դիրքեր էին

* «ՀԲԳԿԲ Մարտիկ» (Անդրկովկասյան ռազմաճակատի բանակային հայերեն թերթ) № 13, փետրվարի 17, 1944 թ.։

տվել նրան։ Ոշնամին պատրաստել էր երկար ժամանակվա խոր էշելոնացված պաշտպանական բնագիծ՝ հենակետերով և դիմադրության հանգույցներով, հագեցված կրակային ուժեղ միջոցներով։ Պաշտպանության այդ «կապույտ գիծը» անխոցելի դարձնելու համար նա բնական դիրքին ավելացրել էր խորը փորված տրանշեյներ, մի քանի մետր առաջ պատրաստել էր ականապատված դաշտեր՝ պաշտպանված փշալարերի խիտ ցանցապատ շղթայով, իսկ դրանց հաջորդում էին հսկա ծառերից պատրաստված հակահետևակային արգելակներ։

Գերմանացիները այդ գիծը համարում էին անառիկ, որովհետև ամրություններին հասնելու համար նախ պետք էր հաղթահարեին շատ արգելանքներ. բացի այդ, դեպի ամրություններն ընկած տարածության յուրաքանչյուր մետրը ստուգված և խաչաձև կրակի տակ էր առնված։

Մեկ տարի անընդհատ կատաղի մարտեր էին մղվել այդ բարձունքներում։ Չնայած Ոշնամու նպաստավոր դիրքին, բազմաթիվ համառ գրոհներին, սովետական մարտիկները նրանց թույլ չէին տվել առաջ շարժվելու։

Հայկական զորամասերը եկան փոխարինելու երկար ժամանակ կատաղի մարտերի մեջ գտնվող հին զորամասերին, որոնց հրամանատարներից էր մարտերում աչքի ընկած փոխ-դնդապետ Բլբուլյանը։* Վերջինս հանձնելով պաշտպանության գիծը հայկական ստորաբաժանումներին և ուրախացած հայ ռազմիկներով, որոնց մեջ էր նաև Հունանը, վստահ իրեն փոխարինողների քաջության վրա, ասում է՝

— Ձե՛զ տեսնեմ, իմ հայրենակիցներ, բարձր պահեցեք հայի պատիվն ու նամուսը, սրբությամբ կատարեցեք ձեր պարտքը Հայրենիքի հանդեպ»։**

— Ոչ միայն կպահենք ձեր պաշտպանած դիրքերը, այլ շուտով կլսեք, ընկեր փոխ-դնդապետ, որ ամրություններից քշել ենք էդ գազաններին և բարձունքը մերը կլինի,— միաբերան պատասխանեցին Հունանի բանակայինները։

---

* Բլբուլյանը հերոսի մահով զոհվեց 1944 թ. Լեհաստանի ազատագրման համար Սովետական Բանակի մղած համառ մարտերում։

** Ս. Նալբանդյան—«Հայ թամանցիներ», Հայկական ՍՍՌ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1947 թ., էջ 41—42։

Դոլգայա լեռան գրավման հարձակումները կատարվում էին ներքևից, փոքրիկ դրոհային խմբերով։

Հունանը իր դասակով ամբողջապես գործում էր այդ տակտիկայով։ Հակառակորդի զենքի բոլոր տեսակների մարտական կրակի տակ լեռների որդիները՝ լոռեցի, սասունցի, զանգեզուրցի, ղարաբաղցի նրա մարտիկները, որոնք սովոր էին թեթևաշարժ մագլցել քարափները, իջնել անդնդախոր ծմակները, դրոհային խմբեր կազմած, ավտոմատներով և նռնակներով զինված, թևերից մոտենում էին թշնամուն, կամ դուրս էին դալիս նրա թիկունքը և պայթեցնում ամրությունները։

Այդ մարտերը, որոնք հաճախ փոխվում էին ձեռնամարտերի, տեղի էին ունենում թե՛ ցերեկ և թե՛ գիշեր։ Գիշերային ժամերին առաջավոր գծի վրա շարունակ կախված էր լինում թշնամու լուսատու հրթիռները, որովհետև սարսափի մեջ գտնվող թշնամին բարձունքներում անգամ իրեն ապահով չէր զգում, ճգնում էր ամեն միջոցներով պահպանել իր դիրքերը, կանխել սովետական մարտիկների իրար հետևից կրկնվող անակնկալ և համարձակ դրոհները։

Հունանի մարտական ընկերները հիացմունքով են հիշում Հունանի հետ անցկացրած այդ օրերը.

«Նա ինձ սովորեցնում էր հաղթահարել բոլոր դժվարությունները, և երբեք չընկճվել»,*— ասում է Տկաչենկոն, և ապա պատմելով դասակի հրամանատարի տեղակալ Հունանի հետ կապված մի էպիզոդի մասին, իր անձնական հուշերում հետևյալն է գրում.

«Հիշում եմ մարտական հրամանատարի հետ մեր միասին անցկացրած մեկ երեկոյի մասին։ «Լեզու» բերելու հրաման ստանալով, Հունանը զինվորներին ասում էր՝

— Հիշեցնք մեր պայմանը, գործել առանց աղմուկի, վստահ, անվրեպ։ Փոքրոգին, վախկոտը թշնամու թիկունքում ոչինչ չունի անելու, ինքը կզոհվի և ընկերներին էլ վտանգի կենթարկի։

— Պարզ է, ընկեր ավագ սերժանտ, հրամանդ կկատարենք, ֆրիցին քաշ տալով կբերենք,— պատասխանեցին զինվորները։

Զինվորները իրենց խոսքը կատարեցին, առավոտյան մոտա-

* «Լենինյան Դրոշ» № 62, մայիսի 22, 1949 թ.։

վորապես ժամի 8-ին նրանք վերադարձան, բերելով գերի վերցրած գերմանացուն»։*

Մարտերի լարված մոմենտներին անգամ Հունանը չէր մոռանում զինվորական և կոմերիտական իր պարտքը։ Հենց խրամատներում հարմար առիթ գտնելով զրույցներ էր անցկացնում մարտիկների հետ։

Սեպտեմբերի ամբողջ առաջին կեսը նրա ագիտացիոն աշխատանքների հիմնական նյութն էր կազմում Սովետական Բանակի հաղթական հարձակումների և Ալեքսանդր Մատրոսովի մասին Պաշտպանության Ժողովրդական Կոմիսար ընկեր Ստալինի հրամանի բարձրաձայն ընթերցումն ու մասսայականացումը։ Սրանց հետ մեկտեղ Հունանի ուշադրությունից չէր վրիպում հրամանատարներին և ագիտատորներին վերաբերող՝ պարտիայի և Սովետական կառավարության ղեկավարների ասած ամեն մի խոսքը։

«Յուրաքանչյուր ժողովուրդ ունի իր ազգային հերոսները, թող դրանք ավելի շատանան,— կարդում է Հունանը սեպտեմբերի 9-ի «Կարմիր Զինվոր» թերթում տպած Մ. Ի. Կալինինի՝ ագիտատորների հետ ունեցած զրույցից մեջ բերած այս տողերը,— պատերազմ է գնում և նա, ինչպես հայտնի է, ծնում է հերոսներ։ Ձեր աշխատանքով դատիարակեցեք համարձակ, քաջարի զինվորներ»։**

Հունանը ագիտատորի իր համեստ ուժերով բանակային թերթի էջերում տպագրված այս թեմաների շուրջը մարտիկների համար զրույցներ կազմակերպելով, օրինակներ է բերում մարտերում աչքի ընկած Սովետական Միության հերոսների, իրենց միավորման խիզախների մասին. դրա հետ մեկտեղ նա «հաճախ հիշում էր, թե հայերը հնում ինչպիսի հերոսություններ են արել, ինչպես են կռվել օտար բռնակալների դեմ և քաղաքացիական կռիվների ժամանակ,— ասում է Հունանի մարտական ընկերներից ավագ լեյտենանտ Մաթևոսյանը,—և իր զրույցը վերջացնում էր այսպես՝ որ հարկավոր է մենք էլ կռվենք մեր նախնիների նման»։***

---

* ՀՊՊԿ, Ցկաչենկոյի հուշերը։

** «Կարմիր Զինվոր» թերթ № 81, սեպտեմբերի 9, 1943 թ.։

*** ՀՊՊԿ, գործ Հ. Ավետիսյանի, ավագ լեյտենանտ Կարապետ Մաթևոսյանի սղագրությունը։

Հունանը ոչ միայն հայրենասեր և քաջակորով ռազմիկ էր, այլ նաև հմուտ կրտսեր հրամանատար։ Նա գիտեր, որ հաղթանակը ինքն իրեն չի գա, նրան պետք է նվաճել, իսկ նրա նվաճելը նշանակում էր նախապատրաստել, նախապայմաններ ստեղծել, ժամանակին հոգալ մարտիկների մասին, նրանց զենքի ու հանդերձանքի մասին և այլն։ «Հունանը,— շարունակում է ավագ լեյտենանտ Մաթևոսյանը,— մինչև հարձակման անցնելը, ստուգում էր իր մարտիկների հագուստը, հանդերձանքը, նրանց զենքի ու զինամթերքի վիճակը և այն ամենը, թե արդյո՞ք զինվորները պատրաստ են մարտի։ Եթե պատահում էր, որ մի զինվոր ճաշ չէր կերել, կամ թե հրացանն անպետք էր, անմիջապես զեկուցում էր իր դասակի հրամանատարին։ Այսպիսի հարցերը կարգավորելուց հետո նոր իր մարտիկներին տանում էր մարտի։

... Հունան Ավետիսյանի հրամանը օրենք էր. բոլոր մարտիկները լսում և կատարում էին նրա բոլոր հրամանները»։* Այդ էր պատճառը, որ հենց Հունանին շատ էին սիրում իրենց դնդի, գումարտակի, ինչպես նաև վաշտի հրամանատարները։ Նրան որպես քաջ և առաջավոր զինվորի անձամբ գիտեր և որդիական խնամք էր տանում նրա մասին միավորման հրամանատարը՝ գնդապետ Նվեր Սաֆարյանը։ «Հունանը սիրում էր ռազմական գործը,— գրում է Ն. Սաֆարյանը,— անձամբ զբաղվում էր թշնամու հետախուզությամբ, մշտական զգաստ, սրբությամբ նվիրված դեպի մեր մեծ Հայրենիքը, համբերությամբ հաղթահարում էր պատերազմի բոլոր դժվարությունները... որպես կրտսեր հրամանատար անձամբ զբաղվում էր դասակի մարտական պատրաստությամբ... պատրաստ էր լուծելու ամենադժվար մարտական խնդիրը»։**

Սաֆարյանը առաջավոր գծում մի քանի անգամ անձամբ եղել է Հունանի մոտ, խրամատներում, սրտագին զրույց է ունեցել առաջին վաշտի հրամանատար Վարդան Զուրաբյանի, նրա 1-ին դասակի հրամանատարի տեղակալ Հունան Ավետիսյանի ու նրանց մարտիկների հետ։ Միավորման հրամանատարի հանդես բերած հոգատարությունը միշտ էլ մարտիկներին և հրամանատարներին ոգեշնչում էր հերոսական սխրագործությունների։

---

* ՀՊՊԿ, գործ Հ. Ավետիսյանի, ավագ լեյտենանտ Կ. Մաթևոսյանի սգագրությունը։

** ՀՊՊԿ, գործ գեներալ-մայոր Ն. Սաֆարյանի։

Դոլդայա լեռան «կապույտ գիծը» ճեղքելու հարձակումից երեք օր առաջ, երբ հարձակման համար նախապատրաստություններ էին տեսնվում զորամասերում, Սաֆարյանը դարձյալ այդպիսի մի հանդիպում է ունենում Հունանի հետ, նրանից, որպես հրմոստ ռազմիկի, տեղեկություն է վերցնում։ Այդ մասին Սաֆարյանը հետևյալն է գրում. «Երբ ես սեպտեմբերի 16-ի գրոհից առաջ շրջում էի ստորաբաժանումները, մոտենալով ամենակարևոր նշանակություն ունեցող Դոլդայա բարձունքի հյուսիսային լանջի պաշտպանության գծին, որտեղ Թշնամին ուներ ավելի ուժեղ ամրություններ, հարցրի վաշտի հրամանատարին, թե ո՞ր գրոհային խումբն է գործելու այս ուղղությամբ, նա պատասխանեց. «ամենաուժեղ գրոհային խումբը, դասակի հրամանատարի տեղակալ ավագ սերժանտ Ավետիսյանի ղեկավարությամբ», և նրան ներկայացրեց ինձ, դա Ավետիսյան Հունանն էր... Նա ինձ վրա բացառիկ տպավորություն թողեց. նա շատ լավ էր իմանում Թշնամու դասավորությունը և իր մարտական բոլոր խնդիրները»։*

Հանդիպման ներկա գտնվող կապիտան Հայկազ Մադոյանը իր հուշերի մեջ շեշտելով Սաֆարյանի և Հունանի միջև տեղի ունեցած այս հանդիպման մասին, հայտնում է նրանց խոսակցության հետևյալ մանրամասնությունները՝

— Ընկեր ավագ սերժանտ,— դիմելով Հունանին ասում է Նվեր Սաֆարյանը։

— Լսում եմ, ընկեր գնդապետ,— պատասխանում է Հունանը, և վայելուչ ու ձգված հասակով ուղիղ կանգնում է միավորման հրամանատարի առաջ։

— Ասացեք տեսնեմ,— շարունակում է Սաֆարյանը,— Թշնամու ի՞նչպիսի կրակային կետեր կան ձեր դիմաց, որոնք կարող են խանգարել դասակի առաջխաղացումը դեպի այս բարձունքի գրավման ճանապարհին։

— Թշնամին մեզնից շատ մոտ է,—պատասխանում է Հունանը,— մենք արդեն համարյա գիտենք գործող կրակակետերի տեղերը, բայց նրանց անձնակազմի բազմամարդությունը նկատի ունենալով մենք կարծում ենք, որ Թշնամին ունի այնպիսի կրակակետեր, որոնք դեռ մեզ ցույց չի տվել։ Լավ կլիներ, ընկեր գնդա-

* ՀՊՊԿ, գործ գեներալ-մայոր Ն. Սաֆարյանի։

պետ, թույլ տայիք, որ ես իմ դասակով էլի մի քանի մարտական հետախուզություններ կատարեմ. խոսք եմ տալիս կորուստներ չունենալ և անպայման պարզել նրանց բոլորի տեղերը։

— Ի՞նչ եք կարծում, ընկեր ավագ սերժանտ, հարձակման ժամանակ ձեր դասակը կարո՞ղ է իր խնդիրը կատարել։ Ժամանակի տեսակետից ձեզ համար հարձակումը ե՞րբ է հարմար կատարել, գիշե՞րը, թե՞ ցերեկը։

— Ընկեր գնդապետ, մեր դասակի բանակայինների տրամադրությունը շատ բարձր է, խոսք եմ տալիս, որ մենք մեր առաջադրանքը կկատարենք լիովին։ Եթե ուզում եք իմանալ,— քաշվելով ասում է Հունանը,— բանակայինները ձանձրացած են զգում իրենց, որ արդեն 15 օր է կանգնած են այս բնագծում, բացի փոքր գործողություններից, հրաման չի լինում առաջ շարժվելու։ Մենք շատ լավ ուսումնասիրել ենք մեր դիմաց կանգնած հակառակորդի զինվորներին, խիստ վախկոտներ են, մեր սնայպերները, իհարկի, հանգիստ չեն տալիս նրանց, հենց որ խրամատից գլուխ են բարձրացնում, գլորում ենք, ֆրիցները վախից այնպես կոմիկական շարժումներ են անում, որ մենք բոլորս թուլանում ենք ծիծաղելուց։

Մարտիկները զսպված ծիծաղով գլխի շարժումներով հաստատում են Հունանի պատմածը։— Ինչ վերաբերում է հարձակման ժամանակին, ընկեր գնդապետ, մեզ համար հարմար է առավոտյան լույսը բացվելուց առաջ,— ասում է Հունանը։

Սաֆարյանը հաշվի առնելով մարտական խնդրի կատարման դժվարությունը, առաջադրանքը դնում է գումարտակի վրա, որի հրամանատարն էր երիտասարդ կապիտան Միշա Մուրադյանը, այն գումարտակի, որի շարքերումն էր գործում ավագ սերժանտ Հունան Ավետիսյանի դասակը։*

Առաջավոր դծում, Թշնամու դիրքերից այդքան մոտիկ տարածության վրա միավորման հրամանատարի հետ ունեցած ջերմ հանդիպման համար անչափ գոհ էին մարտիկները, Հունանը։ Արիասիրտ հրամանատարը, որ այցելում և մանրամասն զննում էր խրամատները, ստուգում էր բանակայինների զգեստները, կենցաղը, դիտում Թշնամու դիրքերը, սովորեցնում էր մարտիկներին քիչ կո-

* Այս խոստկցության մանրամասնությունները տես ՀՊՊԿ, կապիտան Հ. Մադոյանի սղագրությունում։

բուստով, հմտորեն և անվրեպ կռվելու արվեստը, խորը սիրո և ե-դախտագիտության զգացմունքով էր լցնում բանակայինների սրտերը։

Այդ ամբողջ ժամանակամիջոցում Հունանը զրուցում և շտապ միջոցներ էր ձեռք առնում պահպանելու սիրելի հրամանատարի կյանքը, չլինի թե թշնամու սնայպերը հանկարծ նկատի նրան խրամատում։ Բանակայինները անձնվիրաբար աշխատում էին իրենց մարմնով ծածկել գնդապետին, պատրաստ էին իրենց վրա ընդունելու սնայպերի արձակած գնդակը։ Սաֆարյանը նկատելով այդ, ժպտում է.

— Բալիկներս, ինձ ոչինչ չի պատահի, մի անհանգստացեք, ձեր գործին մտիկ տվեք,— ասում է նա, անցնելով խրամատի երկայնքով, Հունանի բանակայինների սեղմ, կողք-կողքի կանգնած, պատնեշ կապած շարքի առջևից։

— Ընկեր գնդապետ, ձեր կյանքը շատ թանկ է մեզ համար,— ասում է Հունանը,— հայրենիքը, զինվորական պարտքը պահանջում են մեզնից պահպանել մեր հրամանատարների կյանքը։

Քշախոս հրամանատարը չպատասխանելով Հունանին, հուզված և դոհ սրտով հեռանում է դասակի պաշտպանության վայրից։

1943 թ. սեպտեմբերի 10-ին Թամանյան պլացդարմի ամբողջ ճակատով սկսվում է հարձակման նախապատրաստությունը։

Մի քանի օր շարունակ պաշտպանության գծով մեկ որոտում են սովետական բոլոր տրամաչափի հրանոթները, գվարդիական ականանետները, գնդացիրները, որոնք քարուքանդ են անում ֆաշիստական ամրությունները, նրանց բլինդաժներն ու ԴԶՕՏ-երը, պաշտպանության «կապույտ գծի» հանգույցները։

Գործողության մեջ են մտնում սակրավորները և հետևակը։ Դոլգայա լեռան բարձունքներն է գրոհում գումարտակի և վաշտերի ստորաբաժանումների հետ նաև Հունանի դասակը իր ջոկերով։ Հարձակման գործողությունները ղեկավարում է գնդի հրամանատարի տեղակալ մայոր Մամիկոն Խաչանյանը։ Նա անվախ և անհերկյուղ միշտ նետվում էր ամենավտանգավոր տեղերը և իր անձնական օրինակով ապահովում մարտի հաջողությունը։

— Ապրես Հունան, թող հալալ լինի քեզ մորդ կաթը, այ, այդպես, սակրավորները կտրեցին փշալարը, նրանց հետևից առաջ

խցկվիր, մի վախենա, ժամանակ մի՛ տուր թշնամուն ուշքի գալու, օգտվիր հրետանու ուժեղ կրակից,— ասում է Խաչանյանը, տեսնելով Հունանի ջոկերի հաջող գործողությունները։

Թշնամին սկզբում խարդախությամբ լռում է, բայց երբ մեր հետևակը առաջ է շարժվում, սկսում է մրրկային կրակ տեղալ բոլոր տեսակի զենքերից։ Վառոդի ծուխը, հողի փոշին բռնում են սար ու ձորը, մարտերը չթուլացող տեմպով շարունակվում էին նաև գիշերները, թշնամու պարաշյուտավոր հրթիռները գիշերային մեծ կանթեղների պես կախվում են երկնակամարից, ցերեկվա նման լուսավորում են մարտադաշտը, շրջակայքը։ Հրետանային համազարկը ծիածան է կապում երկնքում։ Մեծ տրամաչափի արկերը մռնչալով ընկնում, խրվում էին երկրի կուրծքը, ահավոր ուժով պայթում, ավերում, տակնուվրա են անում ամեն ինչ։ Մեկը մյուսի հետևից շառաչյունով դեռին են գլորվում դարավոր կաղնիները. մերթ այստեղ, մերթ այնտեղ անտառային հրդեհներ են բռնկվում, որոնք տևում են շաբաթներ։

Այդ աղմուկի, հրդեհների հրաշեկ բոցերի մեջ թունավոր օձերի պես շվացող գնդակների տարափի տակ գրոհում են Հունանի մարտիկները։

— Տղերք, ձեր հոգուն մատաղ, ամոթով չանեք մեր ժողովրդին։ Իմացեք, մեզ են նայում հրամանատարները, մեր ռուս ընկերները, որոնց համար անհաղթելի արդելք չկա, դժվարություն չկա, գնում են հա՛ գնում... մենք էլ պետք է նմանվենք նրանց,— ասում է Հունանը և առաջ տանում իր մարտիկներին թշնամու գնդացիրների խիստ խանգարող խաչաձև կրակի տակով։

Նրա դասակը շարժվում էր ուղիղ այն ԴՋՕՏ-ի ուղղությամբ, որը դեռ մի քանի օր առաջ գնդի հրամանատար Կարապետյանը խրամատները դալով՝ վաշտի հրամանատար Վարդանյանին և 1-ին դասակի հրամանատարի տեղակալ Հունան Ավետիսյանին մատնացույց էր արել դրավելու, որպես բարձունքին տիրապետելու առաջնահերթ խնդիր։

«Տեղում ցույց տվեցի վաշտի հրամանատար Վարդանյան Զուրաբին, որտեղ ներկա էր նաև Հունան Ավետիսյանը,— ասում է գնդի հրամանատար Ե. Կարապետյանը,— որ այդ բարձունքի ԴՋՕՏ-ը պետք է անպայման վերցնել։ Հունանը խոսք տվեց, որ

ինքն իր վրա է վերցնում այդ ԴԶՕՏ-ի դրավման առաջադրանքը»։* Հրամանի համաձայն գրոհումը նշանակված էր սեպտեմբերի 16-ին, առավոտյան ժամը 7-ին։ Սեպտեմբերի 15-ի գիշերը Ավետիսյանի դասակի ջոկերից մեկը արդեն ընդհուպ մոտենում է այդ ցույց տված ԴԶՕՏ-ին։

Իր վրա վերցնելով ԴԶՕՏ-ի դրավման ղեկավարությունը, Հունանը սեպտեմբերի 15-ին դասակի հրամանատարի հետ միասին վաշտի հրամանատարի դետնափորը մտնելով, գործնական և ջերմ խոսակցություն է ունենում, պայմանավորվում են գրոհային հատուկ խմբակ կազմելու մասին։

— Հունան, խառնեցիր հաշիվները,— կատակին տալով ասում է դասակի հրամանատարը,— ես որոշել էի գրոհային խմբի հրամանատար առաջադրել Գաբրիելին։

— Չեմ առարկում, ընկեր դասակի հրամանատար, Գաբրիելը իգիթ տղա է, սուրը բերանը տանես, չի վախենա, բայց որ ինձ է բաժին ընկել գրոհելու բախտը, երկուսիդ էլ խնդրում եմ, թույլ տվեք, որ ես ինքս էլ ջոկեմ գրոհային խմբի անդամներին, գործը հաջող գնալու համար։

— Թող այդ էլ քո ցանկությամբ լինի, Հունան,— տեղի է տալիս վաշտի հրամանատարը,— անմիջապես գործի անցիր, ժամանակը կարճ է,— և ապա մի քանի խոսքով ամրությունների մոտենալու կանոնները բացատրելով, ճամփու է դնում նրանց։

Նա այժմ այրվում էր մեկ ցանկությամբ— հաղթահարել դժվարությունները, կատարել իր հայրենասիրական պարտքը, հերոսանալ իր ժողովրդի, իր հայրենիքի Սովետական Բանակի առաջ, ցույց տալ իրեն տրված առաջադրանքը կատարելու հմտությունը։

Վերադառնալով իրենց ստորաբաժանումը, Հունանը դասակի հրամանատարի հետ անցնում են խրամատները, որտեղ արթուն և զգաստ բանակայինները մարտնչում էին իրենց դիրքերում։ Փոքրիկ ստուգումից հետո, նրանք բլինդաժը մտնելով սկսեցին պատրաստվել գիշերային մարտական գործողությանը։ Մոմենտը խորհրդավոր էր...

— Հունան ջան, մենք վերջին հանդստից հետո միասին արդեն 23 օր է, որ պատվով մարտերի ենք տարել մեր դասակը, ֆա-

---

* ՀՊՊԿ, գնդապետ Ե. Կարապետյանի սղագրությունից։

շիտական օձերից հարազատ Կուբանի հողը աղատագրելով՝ այսօրվա օրը եկել հասել ենք էս սարին, մյուս զորամասերի հետ միասին նաև մեր փոքրիկ դասակի վաղվա գրոհի հաջողությունից է կախված Կովկասի համար մեր մղած մարտերի ավարտումը։ Թեկուզ այստեղ զոհվելու էլ լինենք, մենք պետք է կատարենք առաջադրանքը,— ասում է դասակի հրամանատար Աշինյանը և մտազբաղ ծխում, քուլա-քուլա ծուխը բաց է թողնում բերանից։

— Ընկեր դասակի հրամանատար...

— Չէ, Հունան, եկ այս մի քանի րոպեն իրար անունով կոչենք,— ընդհատում է խոսակցությունը դասակի հրամանատարը։

— Աշին ջան, բարձունքը կգրավենք։ Չգիտեմ ինչպես ասեմ, որ հասկանաս, էդ լեռը ինձ մադնիսի նման դեպի իրեն է քաշում։ Խոսք եմ տալիս, մահացու կերպով էլ որ վիրավորվեմ, շարքից դուրս չեմ դա, մինչև որ շոշնչացնեմ մեր դասակի ուղղությամբ գործող թշնամու ԴՕՏ-երն ու ԴԶՕՏ-երը,— պատասխանում է Հունանը։*

— Հունան, տանից նոր նամակ ունե՞ս, ի՞նչ են գրում ձերոնք։

— Անցյալ օրը մորից նամակ ստացա, ինչպես երևում է, ձագերը կորցրած թռչունի նման թևաթափ է եղել խեղճ մայրս, անհամբեր սպասում է պատերազմի ավարտմանը, իր 5 որդիների ռազմաճակատից տուն վերադառնալուն։ Գրում է բալիկիս, Հենղելիկիս մասին, որ մեծացել և շատ է նմանվել ինձ, մեր բոլորիս կարոտը նրանից է առնում։

— Մայրը ուրիշ բան է, Հունան։ Մենք շատ ենք պարտական նրանց,— ասում է լեյտենանտ Աշինյանը և մի փոքր մտածելուց հետո ընկերոջը դառնալով ասում է.

—Հունան, շատ եմ խնդրում, թե սիրում ես ինձ, մի կամաց ձայնով Չիվանու «Մայրիկը» երգիր, սիրտս էնպես է կարոտել մորս, որ էլ չասած...

Դասակի հրամանատարը իր այդ ցանկությամբ կարծես Հունանի սրտիցը խոսեց։ Հունանը կկոցելով իր սև և մեծ աչքերը, նստած տեղում հարմարվելով, սկսում է կամաց և քաղցր ձայնով երգել, մի երգ, որը նա շատ էր սիրում և շատ անգամներ էր երգել ընկերների համար։

---

* *Աշինյան։*

... Ինձ համար հոյակապ կազմդ ես մաշել,
Հրճվել, ուրախացել, վրաս ես աշել,
Մինչև մեծանալս ինչե՞ր ես քաշել,
Մնացել ես անքուն, անդադար մայրիկ,
անդադար մայրիկ...

Սրտահույզ երգի խոսքերը թևանում էին հրաձգության ուժեղ կրակոցների աղմուկից։ Իսկ Հունանը երգում էր ու մտքով թռել էր դեպի տուն... դեպի հարազատները...

— Ապրես, Հունան, ձայնդ ունսպառ, քաղցր է մայրենի երգը, մեր հարազատները, մեր սովետական Հայրենիքը, այո, արժե մեռնել նրանց համար,— ասում է դասակի հրամանատարը, նայելով իր երգը ավարտած Հունանին, որը դեռ ալեկոծվում էր երգի հույզերով։

— Այո, արժե մեռնել էլ, ապրել էլ,— վրա է բերում Հունանը և ավելացնում.— ընկեր Աչինյան, երեկ ես դիմում գրեցի պարտիայի շարքերն անցնելու համար, խնդրում եմ, եթե սպանվեցի, ինձ համարեցեք պարտիայի անդամ։

Դասակի հրամանատարը հուզված վեր է կենում, գրկախառնվում է Հունանի հետ, և նրանք ամուր-ամուր համբուրվում են բաժանման մոմենտին, դա Հունանի հետ նրա վերջին հանդիպումն էր։

Դասակի հրամանատարի հետ կարգի բերելով ջոկերը, որոշելով նրանց շարժման ուղղությունը, կոնկրետ խնդիրները, Հունանը գրոհային խմբի գլուխն անցած, գիշերով դասակի առաջն ընկած շարժվում է դեպի Դոլգայա լեռան ամրությունները։

Ամբողջ սեպտեմբեր ամիսը հրաշալի արևոտ և պարզկա եղանակ էր՝ արել։ Բայց գրոհի նախօրյակին, դեպի ամրություններ մերձենալու դիշերը ուժեղ անձրև էր եկել։ Անձրևային այդ խավար գիշերը անձայն ու անշշուկ Դոլգայա լեռան գերմանական ամրությունների վրա են շարժվում Հունանի մարտիկները։

«Նրանց բոլորի առջևից, ավտոմատը ձեռքին և նռնակներով բեռնված, քայլում էր գրոհային խմբի հրամանատարը՝ ավագ սերժանտ Հունան Ավետիսյանը,— գրում է ռազմաճակատային թերթը վերևում նշված «Դյուցազն» օչերկում, նկարագրելով Հունանի գրոհային խմբի 1943 թվի սեպտեմբերի 15-ի գիշերվա գոր-

ծողությունը,— նրան անմիջապես հետևում էին պարթևահասակ, թիկնեղ, սև ու խոշոր աչքերով մի երիտասարդ, Լոռվա սեգ լեռնաշխարհի զավակ Վասիլ Սաքանյանը, ձեռքի դնդացրորդ ջաֆարաբեկցի Ծերունի Գրիգորյանը, ալափարսցի Գրիգորը, զափանցի սնայպեր Հրանտը, ելզովանցի Սարգիսը, եղվարդցի Նահապետը, զազախեցի Հայկազը, Զավենը, Սիմոնոսը, Հաբեթը և ուրիշները։

Արդեն նրանք առաջացել էին սարն ի վեր, երբ կարմիր, կապույտ, դեղնավուն ու կանաչավուն հրթիռներ արձակվեցին երկնակամարի խավար օվկիանոսի մեջ և լուսավորեցին ռազմադաշտը։

Հունանն անմիջապես մեխվեց գետնին։ Նրա օրինակին հետևեցին Վասիլը, Ծերունը, գրոհային խմբի բոլոր անդամները։ Ըստ երևույթին, թշնամին նկատել էր ստվերների շարժումներ։ ԴՕՏ-երից և ԴՋՕՏ-երից գերմանական հաստոցավոր ու ձեռքի դնդացիրներն սկսեցին սանրել այն տեղամասը, որտեղ գրոհային խմբի մարտիկներն էին պառկել։

— Տղերք, շատ եմ խնդրում՝ վիրավորվելու դեպքում ձայն ու ծպտուն չհանել, թե չէ կմատնվենք բոլորս,— մարտիկներին նախազգուշացնում էր հրամանատարը։

Հունանը, օգտվելով հրթիռների մարելուց, մի բոպե ստուգեց մարտիկների վիճակը։ 15 բոպե տևող կատաղի գնդակոծությունը ոչ մի վնաս չէր պատճառել։

Հրամանատարը ոտքի բարձրացավ, նրա հետևից Սաքանյանը, Գրիգորյանը, Գևորգյանը և ուրիշները։ Նրանք կարճ թռիչքներով և հաճախ սողալով առաջանում էին սարն ի վեր։ Խավարի միջով նրանց ուղղությամբ դեռ ճարճատում էին գերմանական գնդացիրներն ու ավտոմատային կրակահերթերը։ Տեղացող անձրևից լպրծուն դարձած զառիթափից ետ-ետ էին սահում մարտիկների ոտքերը։

Երբ նրանք գիշերային խավարում անցնելով ականապատված դաշտերի միջով, արդեն մոտեցել էին հակառակորդի փշալարերի առաջին գծին, նորից Երկինք սուրացին բազմերանգ հրթիռները, նորից կախվեցին գունավոր կանթեղները՝ լուսավորելով ռազմադաշտը։ Գրոհայիններն անմիջապես պառկեցին լեռան թեք լան-

չին, թաց գետնի վրա։ Գնդակները սուլում էին նրանց գլխավերևից, սակայն տեղանքի թեքությունը պահպանում էր մարտիկներին։

Լուսադեմը մոտենում էր...

... Առավոտյան եղանակը պարզվեց։ Սպիտակ մեգը կծկվեց սարի լանջերով ու հալվեց կապույտ օդի մեջ։ Աշնանային արևը ողողեց ծովը, լեռները ու անտառները, և հաճելի ջերմությամբ տաքացրեց Հունանին ու նրա կտրիճներին։ Այդ անդորրության մեջ, հեռվից հատուկենտ լսվում էին փոխհրաձգության ձայներ և հեռաձիգ հրետանու համաչափ որոտներ։ Արդեն սովորական դարձած այդ հրաձգությունը կարծես չէին լսում մարտիկները։ Նրանք մեջքների վրա պառկած՝ դիտում էին մանուշակ երկնակամարը և ամփոփվում իրենց մտքերի մեջ։

— Սիրտս ուզում է երգել, Վասիլ,— շշնջաց Հունանը, դիտելով Վասիլի հսկա իրանը։

Վասիլը չպատասխանեց։ Նա լուռ էր, մտորումների մեջ։

Հունանը մեղմորեն շարունակեց։

— Է, բարեկամ, շատ մի տխրի. ես էլ կին ունեմ, ես էլ բալիկ ունեմ, որը հիմա, մի գուցե, մոր գրկում «պապա, պապա, արի» է թոթովում։ Ես էլ հարազատներ ունեմ, որոնք սպասում են իմ դարձին. բայց լսիր։ Իմ ծննդավայր Ղափանում կա մի բարձր սար։ Խուստուփ է կոչվում այդ սարը։ Ալեհեր հերս ինձ միշտ ասում էր. «Մարդը, որ աշխարհ է եկել, սրտով պետք է բարձր լինի մեր այս Խուստուփի կատարի նման, ապրի ու մեռնի նամուսով։ Զինվորի առաջին նամուսը՝ զենքն է։ Որ զենքը ձեռքդ վերցրիր, այն նամուսով գործածիր... կյանքդ մի խնայիր ժողովրդի համար»։

Հունանը մի պահ լռեց։ Վասիլը հուզված մտածում էր.

— Ինչպես ընկերը կռահեց իր մտքերն ու զգացումները և ինչքա՜ն իր սրտին մոտ էր խոսում նա։

— Վասիլ,— հաստատ տոնով շարունակեց Հունանը,— ես ժողովրդի սրբազան այդ պատգամը կկատարեմ թեկուզ իմ կյանքի գնով։

— Տուր ձեռքդ, Հունան ջան,— հանկարծ պոռթկաց Վասիլը և ամուր սեղմեց ընկերոջ ձեռքը։

Սև սաթի նման վառվում էին նրա խոշոր, թուխ աչքերը։

Ապա նա շփոթված շարունակեց.

— Ինչ ասեմ, Հունան ջան։ Ամենանեղ մոմենտին իմացիր, որ ես քո թիկունքումն եմ կանգնած...

Հուզմունքից մշուշվել էին երկու ընկերների աչքերը։

— Միայն մի ցանկություն, ջերմ ցանկություն ունեմ, Հունան,— մրմնջում էր Վասիլը,— մենք իրար հետ ընկերացանք դաժան պայմաններում, անձրևի, ձյան ու բուքի մեջ, վառոդի ու արյան մեջ։ Մենք եղբայրացանք զինվորական շինելների մեջ։ Ու ես համոզվեցի, որ դու աղիզ տղա ես, կյանքի տղա։ Հենց այստեղ էլ արի խոսք տուր, որ պատերազմից հետո կապրենք միասին Ստեփանավանում, մեր Լոռում...

— Կապրենք, Վասիլ...»։*

Վաղ լուսաբացին Հունանը իր բանակայինների հետ միասին անտառապատ վայրերից աննկատելի դուրս գալով, հասնում է քարքարոտ ու լերկ Դոլգայա լեռան լանջերին, Թշնամուց շատ մոտիկ, բայց նրա տեսադաշտից դուրս մի հարմար քարափի տակ տեղավորվելով՝ խրամատավորվում է, սպասելով հարձակման ազդանշանին։

Այդ դիշերը և նրա նախորդ օրերին մեր հրետանային նախապատրաստության ընթացքում կտրատվել էին Թշնամու լարափակոցները, ջարդուփշուր էին արվել Թշնամու որոշ կրակային կետերը։ Ճիշտ է, բարձունքի վրա կատարած առաջին գրոհների արդյունքները շատ մեծ չէին, բայց արդեն գրոհային խմբերի գործողություններով սեպ էր խրված հակառակորդի ամրությունների մեջ։ Նրանք ընդհուպ մոտեցել էին հակառակորդի պաշտպանության հանդուցակետերին, ԴՕՏ-երին և ԴԶՕՏ-երին։

— Տղերք, այ տղերք, տեսեք, այստեղից Սև ծովը արդեն երևում է,— ասում է Վասիլը և հիացած նայում է առավոտյան վաղորդյան մեղմ քամուց օրորվող Սև ծովի հսկա կապտավուն հայելուն։

— Երևի բարձունքից ավելի գեղեցիկ կլինի տեսարանը։

— Այո, բարձունքը մեր առաջ բացելու է Սև ծովի գեղեցիկ տեսարանը, Նովորոսիյսկի և Թամանի ազատագրման դռները,— պատասխանում է Հունանը։ Լսո՞ւմ եք, մարտերն արդեն Նովորո-

---

* «Մարտիկ» № 13, փետրվարի 17, 1944 թ.։

սիյսկ քաղաքի փողոցներում են գնում, իսկ մեր հարևան գումարտակը, որը գրոհում է Սախարնայա Դոլովկան, իրենց գրոհային խմբերով արդեն անցել են ականապատված դաշտերը, շուտով ինչպես մեզ մոտ, այնպես և նրանց մոտ թունդ մարտեր պետք է տեղի ունենան։

— Տղերք, պատրաստվեցեք ձեռնամարտի, պատրաստ պահեցեք ավտոմատները, նռնակները, բահերը. խփի՛ր, ինչով կարող ես, կրակահերթով ու խզակոթով, բահով ու բռունցքով, մի թողնի, որ ուշքի դա թշնամին, մտար նրա խրամատը, դարձիր նրա տերը, ահա մեր լոզունգը,— այդպես որ գործենք, հավատացնում եմ ձեզ, եթե ոչ այսօր, վաղը անպայման այս բարձունքը մերը կլինի։

Գնդի հրամանատարի տեղակալ մայոր Մամիկոն Խաչանյանը 1943 թ. սեպտեմբերի 16-ին գրած իր մի նամակում նկարագրելով Հունանի և գրոհային մյուս խմբերի կողմից սեպտեմբերի կեսերին Դոլգայա լեռը գրոհելու գործողությունների մասին, նշում է.

«... ես կանգնած եմ մի խիստ ամրացրած սարի առաջ, սարի ամրոցը հետ չի մնում Մաներ հայմի կառույցվածքներից, մեր հերոս բանակայիններն ու հրամանատարները քայլ առ քայլ առաջ են գնում, հարված հարվածի հետևից են հասցնում, մի քանի օրվա մարտերից հետո մի փոքր հաջողություն ունեմ, խցկվել եմ մի քիչ ներս (Հունանի դասակը ներս խցկված ստորաբաժանումներից մեկն էր— Ե. Խ.), սակայն այդ փոքրիկ հաջողությունը մեծ հաղթանակի կհասցնի. շատ մեծ հույս ունեմ, ես գտնվում եմ այդ սարի լանջում, մարտի թեժ ժամանակ երբեմն ես էլ եմ նետվում հարվածող խմբակների հետ։ Բանակայինները հերոս են, հերոս. իրոք որ Դավթի զավակներ են, նռնակներով նետվում, բնաջինջ են անում այդ սրիկաներին իրենց կառուցած բներում, հետաքրքիր շատ էպիզոդներ կարելի է գրել այդ քաջերի մասին»։*

Մի ուրիշ նամակում բարձունքի ԴՀՕՏ-երի ուղղությամբ Հունանի խմբի կողմից կատարված գրոհի մասին խոսելով, որին ինքը անձամբ մասնակցել է որպես զորամասերի հարձակողական գործողությունների ղեկավարի, հայտնում է. «առաջին գրոհներին չնայած բարձունքը և նրա բոլոր ամրությունները մեկից չդրավ-

---

* ՀՊՊԿ, գործ փոխ-գնդապետ Մամիկոն Խաչանյանի, փաստաթուղթ № 1746։

վեց, բայց 100—150 մետր մոտենցա դրան և խրամատավորվեցի։ Սակայն պատվի գործ էր, որոշեցի գոնե մի կտոր տեղ գրավեմ, ամրանամ՝ հետագայի խնդրի համար... հաջորդ օրը (սեպտեմբերի 16-ին— Ն. Խ.) մի խումբ քաջերով... անցա գրոհի ու գրավեցի այդ օղակը (3 դոտ). կարդա հոդվածում ավագ սերժանտ Հունան Ավետիսյանի անունը»,*— մատնանշում է Խաչանյանը։

Խաչանյանի նամակները պարզ լույս են սփռում Հունանի գրոհային խմբի սեպտեմբերի 15-ի և 16-ի գործողությունների վրա։ Այսպես ուրեմն, հրամանատարության կողմից նշանակված հարձակման առավոտը նա իր մարտիկներով գտնվում էր թշնամու ամրություններից շատ մոտիկ տարածության վրա։

Դիշերվա փոխհրաձգություններից և հետախուզական մարտերից հետո առավոտյան մի տեսակ խորհրդավոր լռություն էր տիրում ռազմադաշտի վրա, անքուն դիշերների հոգնածությունից թմրած, կարծես կռվողները քնել էին մեռելային քնով... բայց այդ միայն թվում էր...

Դա փոթորկից առաջ մի «ակնթարթ» լռություն էր... փոթորիկ, որը շուտով պիտի ճայթեր, ահեղագոռ որոտներով...

Ամբողջ դիշերը գրոհային խմբերի գործողություններից բացի, զորամասերը և ստորաբաժանումները, հրամանատարներն ու մարտիկները հարձակման նախապատրաստություններ էին տեսնում։

1943 թ. սեպտեմբերի 16-ին առավոտյան ուղիղ ժամը 7-ին «կապույտ գծի» ամրությունների դեմ նրա ամբողջ երկարությամբ սկսվում են գրոհային գործողություններ։

Թեժ մարտեր են սկսվում Նովորոսիյսկում, Վերխնե-Բականսկու ռայոնի Գոլգայա և Սախարնայա Գոլովկա լեռների բարձունքներում, որոնք բոպե առ բոպե մեծ թափով ծավալվում և կատաղի բնույթ էին ստանում։

Ահեղ և անընդմեջ որոտում են երկու կողմերից կրակվող տարբեր տրամաչափերի հարյուրավոր հրանոթները, ականանետները, գնդացիրները։ Փոշու ամպերը ծածկում են տեղանքը։ Մի փոքր հետո սովետական հրետանին իր կրակը փոխադրելով թշնամու թիկունքը, հնարավորություն է տալիս աղատ կերպով գործե-

---

* ՀՊՊԿ, գործ փոխ-գնդապետ Մ. Խաչանյանի, փաստաթուղթ № 3675։

ղու սակրավորներին, որոնք դարձյալ առաջ անցնելով՝ խիզախորեն անցուղիներ են բաց անում հետևակի համար։

Գնդերն ու գումարտակները իրենց ստորաբաժանումներով առաջ են շարժվում դեպի թշնամու դիրքերը։ Սկսված հարձակումը ընդհատում է Հունանի և նրա մարտիկների կարճատև հանգիստը։ Նրանք պարզ տեսնում են ամեն կողմից գրոհող վաշտերի և մյուս ստորաբաժանումների առաջշարժումը դեպի թշնամու ամրությունները։

Հրամանի համաձայն Հունանը նույնպես թաքստոցից դուրս բերելով իր մարտիկներին, առաջ է տանում.

— Տղերք, իմ հետևից,— բացականչում է նա և առաջինը ինքն է բարձրանում լեռը, ուղղություն վերցնելով դեպի թշնամու գործող կրակակետերը։

Ցամաքից, օդից, ծովից մոլեգնում են հրետանային և ականանետային խլացուցիչ համազարկերը, գնդացրային և ավտոմատային մոնոտոն կրակը, նրանց գնդակները տեղատարափ կարկուտի նման ծեծում են գետինը, խտացած մթնոլորտում արձագանքվում է հարձակվողների երկարականչ ռուսական խրոխտ «ուռռա», «Հանուն Ստալինի», «Հանուն մայր Հայաստանի» սովետական մարտիկների բազմալեզու մարտակոչերը։

Կարճ ոստյուններով, սողելով, Հունանը առաջ է տանում իր ստորաբաժանումը։ Մարտիկները մոտենալով հակառակորդի դիրքերին, նռնակներ նետելով ջարդուփշուր են անում կրակակետերը, ճիգեր են թափում ներս թափանցելու թշնամու խրամատը, բնաջնջելու, դուրս շպրտելու նրանց այդ տեղից, բայց այդ գործողությանը խիստ կերպով խանգարում է հակառակորդի ԴՀՕՏ-ից գործող հաստոցավոր գնդացրի մրրկալի կրակը։ Մարտիկները Հունանի հրամանով ստիպված են լինում սեղմվել գետնին։

— Ինչ էլ ուզում է լինի,— մտածում է Հունանը,— պետք է լռեցնել թշնամուն, վերացնել առաջընթացը խանգարող խոչընդոտը։ Մարտի լարված մոմենտին, երբ վճռվում էր ամրությունները գրոհելու ելքը, իր վրա վերցնելով այդ պարտականությունը և անհրաժեշտ կարգադրություններ անելով, ապա զգաստացնելով մարտիկներին, փարատելով մի պահ նրանց համակած շփոթմունքը, վճռականություն ներշնչելով գոչում է.

— Առա՜ջ, ընկերնե՛ր, հետևեցեք ինձ, մի՛ ուշացեք...

Այդ ասելով, Հունանը դասակի մարտիկների հետ արագությամբ նետվում են Թշնամու առաջին խրամատները, ավտոմատային կրակահերթով ու սվիններով ձեռնամարտի դիմելով ոչնչացնում նրանց, մնացածներին էլ փախուստի մատնում. և այսպես առաջ անցնելով, քայլ առ քայլ մաքրելով ճանապարհը, նրանք մոտենում են Թշնամու ԴՀՕՏ-ին։

Չնայած մահվան ուրվականն էր կանգնել նրանցից ամեն մեկի առջև, բայց վիրավորներն անգամ չէին ցանկանում հեռանալ մարտադաշտից։

— Կկռվենք մինչև հաղթանակը, եթե մեռնելու ենք, մեռնենք միասին,— ասում էին նրանք։

— Դնա թիկունք,— կարգադրում էր Հունանը վիրավոր մարտիկներից մեկին, որը ոտքից վիրավորվել և արյունաքամ էր լինում։

— Ես առողջ եմ, ընկեր ավագ սերժանտ,— համառում է անվեհեր մարտիկը։

— Կատարիր հրամանը,— խստությամբ ասում է Հունանը և բաժանվում իր մարտիկից։ Սոսկալի ցավը զսպելով, տեղատարափ կրակի տակ վիրավորը ոտքի ելնելով վազում է և համարյա լաց լինելով ասում.

— Դե որ ասում եմ առողջ եմ, չես հավատում, տե՛ս...

Այսպիսին էին Հունանի մարտական ընկերները, որոնց հետ նա վերջին դրոհն էր գնում «կապույտ գծի» ամրություններ դեմ։

Մոլեգնում էր մարտը, օրհասական և ծանր էր մոմենտը. աստիճանաբար նոսրանում էին խիզախների շարքերը... դրոհը տապալման վտանգի տակ էր...

Հունանը այդ րոպեին նկատում է, որ առաջավոր գծում, սվինապատ հրացանը ձեռքին, կատաղի մարտի միջից մարտիկներին ձեռնամարտի է առաջնորդում գնդի հրամանատարի տեղակալ, ամենքի կողմից սիրված արիասիրտ մայոր Մոմիկոն Խաչանյանը։

... Տղե՛րք, առա՛ջ... մեզ հետ է մայորը,—հրճվանքով բացականչում է Հունանը,— կռվեցեք Սասունցի Դավթի թոռներին արժանի, թող բոլորն իմանան, որ առաջին դասակի մարտիկները կարդարացնեն հրամանատարության վստահությունը, կմեռնեն, բայց առաջադրանքը կկատարեն։

Հունանի խոսքերը, Խաչանյանի երևալը մարտիկների եռանդը բազմապատկում են։

Խաչանյանը 1943 թ. հոկտեմբերի 22-ին ընտանիքին ուղարկած իր նամակում նկարագրելով մարտի կրիտիկական այս մոմենտը, գրում է.

«... Չորս կողմը մահ էր տարածված, երբ իմ քաջերը տեսնելով ինձ հրացանը ձեռքիս, այդ օդակի մեջտեղում խրոխտ կանգնած, բղավում էին— «առա՛ջ, մայորը մեզ հետ է»։*

Շարժվելով դասակի մարտիկներից առաջ, Հունանը իր անբաժան ընկերոջ, պարթևահասակ, թիկնեղ Սահակյանի հետ միասին տարբեր կողմերից ընդհուպ մոտենալով թշնամու ԴԶՕՏ-ին, նրանք ԴԶՕՏ-ի անցուղիների վրա և մուտքից իրար հետևից ներս են շպրտում հակատանկային մի քանի նռնակներ, որից ահռելի դղրդյունով ջարդուփշուր եղած երկինք է բարձրանում ԴԶՕՏ-ը իր անձնակազմով ու գնդացիրներով, բայց դժբախտաբար նույն տեղում տեղնուտեղը զոհվում է նաև ինքը, դյուցազուն Սահակյանը։ Այս բոլորը առաջին մոմենտին դեռևս աննկատելի և փոշու ամպերի մեջ ծածկված է լինում, երբ ճարպիկ ոստյունով դասակը դարձյալ առաջ է շարժվում, բայց հենց նույն մոմենտին հակառակորդը նկատելով այդ, գրոհողների վրա սկսում է գնդացրային կատաղի կրակ բաց անել մի քանի տասնյակ մետր հեռավորության վրա գտնվող իր երկրորդ ԴԶՕՏ-ից։ Մարտիկները հրամանի համաձայն սեղմվում են դետնին, սպասելով կրակի մեղմանալուն, որպեսզի նորից առաջ շարժվեն։

Այսպես, քանի գնում սաստկանում է մարտը, բայց հայրենիքի ազատության և անկախության վեհ գաղափարը իր հոգում Հունանը չէր ընկճվում, չէր շփոթվում։ Այդ ժխորում Հունանի առողջ միտքը գործում է հրաշալի ճշտությամբ, սովետական հրամանատարին հատուկ համառությամբ կողմնորոշվելով ստեղծված իրադրության համապատասխան, նա դարձյալ առաջ նետվելու կոչ անելով գրոհային խմբի մարտիկներին, հրամայում է դասակի ջոկերին օգնել իրեն, բլոկիրովկայի հենթարկելու թշնամու գործող երկրորդ ԴԶՕՏ-ը, իսկ ինքը հակահետևակային նռնակներով զինված, տեղատարափ կրակի տակով փորսող մոտենում է նրան. բայց դեռ

* ՀՊՊԿ, գործ Մ. Խաչանյանի, փաստաթուղթ № 3675։

ԴՀՕՏ-ի ամբրազուրին չհասած, ծանր վիրավորվում է, վերքից սկսում է առատորեն արյուն հոսել. դա սեպտեմբերի 16-ի առավոտյան ժամը 10-ին էր։

Նույն մոմենտին մարտի ժխորի միջից, կարծես երազում նա լսում է իր անունը տվող ծանոթ մի ձայն.

— Ընկեր Ավետիսյան, դուք վիրավորված եք... հայտնում է Հունանի հետևից շարժվող մարտիկը, Հունանը ոչինչ չի պատասխանում, ոչինչ չի ղղում, ոչ վերքը, ոչ արյունը նրան չեն կանգնեցնում. այդ րոպեին նա միայն մի բանի մասին է մտածում՝ լռեցնել թշնամու գնդացիրը, հեռացնել գրոհի տապալման սպառնալիքը, առաջ տանել դասակը, հաղթանակի հասնել... հաղթանակ, որը այնքան մոտ էր թվում իրեն։

Աղնիվ հայրենասերը զսպելով անտանելի ցավը, շարունակելով օրհասական պայքարը, քայլ առ քայլ շրջանցում է թշնամու ԴՀՕՏ-ը։

Երբ արդեն բոլորովին մոտ էր ԴՀՕՏ-ի հրակնատին, որից թշնամին դարձյալ կրակում էր, Հունանը կանգ է առնում, կողքից ձեռքն առաջ մեկնելով՝ ամուր բռնում է սև օձի գլխի նման հրակնատից դուրս ցցված թշնամու խոշոր տրամաչափի գնդացրի փողը և մի քանի անգամ շարժում, որպեսզի խախտի տեղից, փոխի կրակի ուղղությունը, նրա կրակի տակից դուրս բերի իր դասակին, բայց ապարդյուն...

Այստեղ Հունանը նկատում է աջ ու ձախ կողմից թշնամու ավերված ԴՀՕՏ-երը շրջանցած իր անվեհեր մարտիկների, վաղեմի ընկերների՝ Սահակյանի և մյուսների արյունաշաղախ գետին փռված դիակները։

— Միթե սպանվեցին նրանք...նրանք...նրա...—շշնջում է ինքըն իրեն Հունանը և արյունաքամ վիճակում ուշաթափության աստիճանի նվաղում, պտույտ է գալիս գլուխը. վերջին ուժերը հավաքելով նա ուղղվում է առողջ կողքի վրա և ակամայից ձեռքը դեպի ձախ կուրծքը տանելով շոշափում է բաբախող սրտի վրա իր գրպանում ամուր պահած Լենինյան-Ստալինյան կոմերիտմիությունյան անդամատոմսը, տոմսի հետ՝ պարտիայի շարքերն անցնելու դիմումը...

— Երդվում եմ ձեզանով...— կամացուկ շշնջում է նա։

Ուժ է առնում, եռ է դալիս նրա սպառվող արյունը, ցասումնալի վրեժը նոր թափով բորբոքվում է նրա հոգում։

Մտքի զորեղ ասոցիացիայով կայծակնային արագությամբ նա մտաբերում է հայրենասեր կոմերիտական Ալեքսանդր Մատրոսովի դյուցազնական սխրագործությունը, որի օրինակով նա ինքը դեռ երեկ դաստիարակում, հերոսության կոչ էր անում իր բանակցիներին։

Հունանը մտածեց հարազատների մասին... Հայաստանի մասին... անպայման հաղթելու մասին... ապա թուխ ու մեծ աչքերով մի հայացք նետելով ԴԶՕՏ-ի շուրջ կողմում կատաղի մարտեր մղող առյուծասիրտ իր ռազմիկներին, սիրալիր ժպտալով նրանց, դողդոջուն, բայց վճռական ձայնով նա բացականչում է.

— Տղերք, ընկերներ, այլևս այս ԴԶՕՏ-ը չի գործելու։ Հրամայում եմ առաջ...

Այդ ասելով՝ նա առաջ է նետվում և իր մարմնով փակում է ԴԶՕՏ-ի հրակնատը, կուրծքը դեմ տալով գնդացրի փողին, լռեցնում է այն։

Իր վրա ընդունելով թշնամու գնդացրի մահաբեր գնդակները, Հունանը կիսակենդան վիճակում հրակնատի արանքից տեսնում է հիտլերականների պարտության առաջ կանգնած սարսափահար դեմքերը, և ատելությամբ լի իր հայացքով նա վերջին անգամ ջանթելով նրանց, սեղմած ատամի արանքից մրմնջում է՝

— Օձե՞ր...

Ապա խամրելով փակում է աչքերը... հավիտյան լռում... ԴԶՕՏ-ի ներսում հիտլերականները, որոնք վերահաս ջախջախումից կորցրել էին իրենց գլուխները, Հունանի կողմից ամբրաղուրի անցքը փակելուց հետո է՛լ ավելի խուճապի են մատնվում, պատեպատ զարնվելով փրկության ելք են որոնում, բայց արդեն ուշ էր...

Հունանը կրկնելով Մատրոսովի դյուցազնական անձնազոհությունը, փրկում է իր մարտիկների կյանքը, ապահովում է դասակի կողմից մարտական խնդրի կատարումը, Դոլգայա լեռան թշնամու «անառիկ» ամրությունների գրավումը։

Մինչ դադարում էր սովետական հայրենիքի համար Հունանի բաբախող սիրտը, նրա դասակը և մյուս զորամասերը, օգտվելով թշնամու կրակի դադարելուց, առաջ են անցնում։ Մարտիկնե-

ը վշտացած իրենց սիրելի հրամանատարի դյուցազնական մահով, վրեժի անզուսպ ցասումով լցված շեշտակի ծառս են լինում թշնամու ամրությունների վրա, նռնակային հարվածներով իրար հետևից օդ են ցնդեցնում ԴԶՕՏ-երը, կրակակետերը. ավտոմատային կրակահերթերով, սվիններով ոչնչացնում են խրամատներում և անցուղիներում գտնվող հիտլերականներին, անողոք և ահեղ վրեժ են լուծում։

— Բարը քարին չթողնել թշնամու ԴԶՕՏ-ից, արժանի կերպով լուծել Հունանի վրեժը,*— զայրույթով լցված հրամայում է մայոր Խաչանյանը, գրոհող զինվորների հետ քայլ առ քայլ առաջ շարժվելով։

Մարտիկները ամեն կողմից շարունակելով շշմեցնող գրոհը, արհամարհելով մահը, սրընթաց առաջ ու առաջ են շարժվում։ Այլևս նրանց ոչինչ չի կարողանում կանգնեցնել։ Կեսօրին Մուրադյանի դումարտակն արդեն գրավում է Դոլգայա լեռը, նրա վրա Հունանի դասակի մարտիկները առաջինը բարձրացնում են հաղթանակի կարմիր դրոշը։

«Այդ օրը,— կարդում ենք Հունանի պարգևաթերթիկում՝ միավորման հրամանատարության տված ցուցանիշների մեջ,— Ամերիսյանի դասակը գրավեց 3 ԴԶՕՏ և ոչնչացրեց նրանց մեջ եղած հակառակորդի ամբողջ կենդանի ուժը»։**

Դա Դոլգայա լեռան մեր կռվող զորքերի հատվածում «կապույտ գծի» գերմանական ամրությունների առաջին և կարևոր հանգույցի ճեղքումն էր. դրանով հարթված էր հաղթանակի ճանապարհը դեպի Նովորոսիյսկը, Թամանը։ Հետապնդելով ջախջախված թշնամուն, սեպտեմբերի 16-ին փոխ-գնդապետ Կարապետյանի գունդը շեշտակի գրոհով գրավում է Վերխնե-Բականսկի շրջանային կենտրոնը և ուրիշներ։ Վերխնե-Բականսկում ազատագրում է 5000 սովետական քաղաքացիների, նրանց մեջ նաև տեղական շատ հայ բնակիչների, որոնց հիտլերականները հավաքել էին գերության քշելու համար դեպի Գերմանիա։

Այս հաղթանակների մեջ իր արդար բաժինն ուներ հայ ժո-

---

* ՀՊՊԿ, գործ Մ. Խաչանյանի, Ս. Եզանյանի սղագրությունը։

** ՀՊՊԿ, գործ Սովետական Միության Հերոս Հ. Ավետիսյանի։

ղովրդի անվեհեր զավակը, դյուցազնորեն իր կյանքը զոհած Հունան Ավետիսյանը։

Ներկվա ժամի 12-ին հարձակվող գրոհային խմբերի հետևից Դոլգայա լեռն են բարձրանում գնդի հրամանատարը մի քանի տպաների և ավտոմատչիկների ուղեկցությամբ, № 500/7 բարձունքի վրա նրանք թշնամու երկրորդ ավերված ԴԶՕՏ-ի հրակնատի վրա ընկած գտնում են Հունանի անշնչացած դիակը։

— Հանեցեք գլխարկներդ,— ասում է գնդի հրամանատարը,— ձեր առջևն են գտնվում այսօրվա մարտերի հերոսներից Մատրոսովի օրինակով իր կյանքը դյուցազնաբար զոհած հայ ժողովրդի պանծալի զավակ ավագ սերժանտ Հունան Ավետիսյանը և իր մի քանի ընկերները, որոնք առաջինը գրոհեցին Դոլգայա լեռը։

Այսօր առհավետ բաժանվելով մեր հերոսներից, մենք շարունակելու ենք հարձակումը... Հավե՞րժ փառք մեր Հայրենիքի ազատության ու անկախության համար զոհված հերոսներին։

— Մենք լաց չենք լինի,— ասում է քաղտեղակալը,— բայց խոցված է մեր սիրտը, որովհետև չկա Հունանը, չկան մեր շատ խիզախ ռազմիկները...

Հունանը զոհվեց, Հունանը իր կյանքով հաղթանակ նվաճեց, այդ է իսկական հայրենասիրության օրինակը, որը զարդարում է ռազմիկ-բոլշևիկին։

Մեր, հաղթանակի պտուղները վայելող կենդանի մնացած ռազմիկներիս պարտքն է կենդանի պահել Հունանի և իր զոհված ընկերների հիշատակը, նրանց օրինակով դաստիարակել մարտիկներին, որոնք կռվի մեջ լինեն անվախ և աներկյուղ, անխնա ջախջախեն թշնամուն՝ մինչև կատարյալ հաղթանակը։ Այդ կլինի Հունանի և իր ընկերների հիշատակի իսկական հավերժացումը։

Մնաս բարև, Հունան, մնաք բարև, մարտական ընկերներ, Հայաստանի անվեհեր զավակներ, դուք բոլշևիկյան պարտիայի ու մեր ժողովրդի պատիվը անբիծ պահելով՝ ձեր գործով հարստացրիք նրա փառքը, մարտական տրադիցիաները։

Ավտոմատներից որոտացին սալյուտի համազարկերը, որոնք արձագանքեցին մերձակայքում տեղի ունեցող մարտերի կրակոցներին։

Թռուցիկ կերպով հարդանքի խոսք ասելով զոհված մարտիկների հիշատակին, ռազմիկների խումբը դարձյալ առաջ է անցնում

թշնամուն հետապնդող գումարտակների հետևից։ Սանիտարները սկսում են օգնություն ցույց տալ վիրավորներին, հավաքել զոհված-ների դիակները։

Անմահության վառքով պսակված, հավիտենական մահը գրկած քնել էր Հունանը։ Նրա դեմքի վրա դեռ դրոշմված էր թշնամուն ուղղված վերջին զայրույթի արտահայտությունը։

Ծովի մեղմ քամին գորովագութ մոր նման շոյում էր Հունանի արևակեզ դեմքը, բազմաթիվ գնդակներով խոցված վերքերը, կանացի զսպված խուլ հեկեկանքի նմանվող ձայնով նա սլսվում էր ամենքի ականջի տակին, կարծես ընկած հերոսների մահն էր նա ողբում։ Իսկ վայրի խոտերն ու ծաղիկները հերոսի արյունով ներկված՝ Հայաստանի մայիսյան կարմիր կակաչների ու վարդերի նման զարդարել էին Հունանին, իրենց օրորվող գլխիկներով փարվում էին նրան։

Սանիտար բանակային խնամքով սրբելով Հունանի դեմքի փոշին, դուրս քաշելով նրա գրկում ամուր սեղմած ավտոմատը, որի դիսկում չէր մնացել ոչ մի փամփուշտ, թախծոտ հայացքով նրան նայելով ասում է.

— Յարա՜բ, ինչ էր մտածում Հունանը մահվան վերջին րոպեին։

— Հայրենիքի մասին... հաղթանակի մասին,— պատասխանում է սանիտար ընկերներից մյուսը։

Սեպտեմբերի 18-ին հրամանատարության կարգադրությամբ Հունան Ավետիսյանի և մյուս զոհված ռազմիկների մարմինները փոխադրում են Վերխնե-Բականսկիի Խուտոր-Գայդուկ ավանի գերեզմանատունը, և այնտեղ էլ թաղում։

Նույն օրը Հունանի փաստաթղթերի մեջ պարտկազմակերպիչը գտնում է պարտիայի շարքերն անցնելու հետևյալ ձեռագիր դիմումը.

«Ծնվել եմ 1914 թվին Ղափանի շրջանի Ծավ գյուղում, չքավոր գյուղացու ընտանիքում։ Մինչև ռազմաճակատ գալս աշխատում էի Հոկտեմբերյանի շրջանի Միկոյանի անվան սովխոզում որպես բրիգադիր։ Կոմերիտական եմ. իմ ցանկությամբ այս գիշերը գնում եմ գրոհի։ Բարձունքը անպայման կվերցնեմ։ Թող հրամանատարությունը վստահ լինի դրան։

*Ջերմորեն ցանկանում եմ լինել Լենինի—Ստալինի մեծ պարտիայի անդամ, այսուհետև կռվել որպես կոմունիստ և եթե հարկ լինի մեռնել որպես կոմունիստ»։**

---

* «Մարտիկ» № 13, փետրվարի 17, 1944 թ.։

Հունանի մարտական ընկերներից Ծերուն Գրիգորյանը հայտնել է, որ այդ դիմումը գրոհի նախորդ օրվա երեկոյան նրանք գրել են միասին, բայց վերահաս դեպքերի պատճառով այդպես էլ Հունանին չի հաջողվում դիմումը անձամբ հանձնելու զարտակազմակերպչին։ Այդ մասին տես ՀՊՊԿ, Ծ. Գրիգորյանի օղագրությունը։

ՀՈՒՆԱՆ ԱՎԵՏԻՍՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԻ ՀԱՎԵՐԺԱՑՈՒՄԸ

Հաղթության օրը և նրան հաջորդող օրերին Հունանի հերոսական մահվան լուրը արագությամբ տարածվում է հայկական միավորման բոլոր զորամասերում։ Վրեժի զգացմունքով լցված ռազմիկները դեպի մարտ նետվելով, միաժամանակ հիանում էին, թե ինչպիսի սիրտ է ունեցել հայ ժողովրդի այդ քաջարի զավակը։

*«Երբ մենք իմացանք Հունան Ավետիսյանի զոհվելու լուրը,— ասում է Մաթևոսյանը,— ամբողջ գնդով տխրեցինք»։ Իսկ ռազմիկ Սերգեյը նշում է. «Մեզ, բոլոր զինվորներիս ոգևորում էին Հունանի օրինակով։ Օրինակ ես որոշեցի կռվել Հունանի նման, չխնայելով իմ կյանքը այնպես, ինչպես որ նա չխնայեց իր կյանքը սովետական Հայրենիքի համար»։**

Ռազմաճակատային բանակային թերթերը հավերժացնելով հերոսի անունը, սկսեցին իրար հետևից հոդվածներ տպագրել, մասսայականացնել Հունանի դյուցազնական սխրագործությունը։ Նյութեր, նամակներ ուղարկեցին հայրենիք։

Միավորման հրամանատար Սաֆարյանը ճակատային թերթում հանդես գալով Կովկասի և Թամանի համար հայկական միավորման մղած հաղթական մարտերի հանրագումարային հոդվածով, խոսելով հայ ժողովրդի քաջարի զավակների, միավորման ռազմիկների, Հունանի և մյուսների մասին, նշում է.

*«Ընդմիշտ կպահպանվի հայ ժողովրդի քաջարի զավակներ, մեր միավորման ռազմիկներ՝ Հունան Ավետիսյանի և Սուրեն Առաքելյանի** հիշատակը։*

---

* *Այս մասին մանրամասն տեղեկություններ տես ՀՊՊԿ-ում պահվող Հունանի մարտական ընկերների ոգագրություններում։*

** *Ս. Առաքելյանը հայկական միավորման խիզախ ռազմիկներից մեկն էր, 1943 թ. սեպտեմբերին հերոսությամբ կռվեց Նովոռոսիյսկի մոտ Կուբ-*

... Թշնամու ԴԶՕՏ-երի կրակը մեր ստորաբաժանումներին հնարավորություն չէր տալիս առաջ շարժվելու։ Ավագ սերժանտ Հունան Ավետիսյանը հանձն առավ ոչնչացնել թշնամուն։ Սովետական Միության լեգենդար հերոս Մատրոսովի օրինակով՝ նա մոտեցավ հակառակորդի ԴԶՕՏ-ին և իր մարմնով փակեց ամբրազուրը։ Մեր հետևակն առաջ գնաց և հաջողությամբ ավարտեց գրոհը»։*

1943 թ. հոկտեմբերի սկզբներին Սովետական Բանակի մյուս միավորումների թվում հայկական միավորումը հաղթականորեն ավարտելով Կովկասի և Թամանի համար մղած մարտերը, արժանանում է Գերագույն Գլխավոր Հրամանատար ընկեր Ստալինի շնորհակալությանը և պատվավոր կոչմանը։ Բազմաթիվ սպաներ և մարտիկներ պարգևատրվում են Սովետական Միության մարտական շքանշաններով և մեդալներով։ Ցնծության օրեր էին ապրում մարտիկները։

Այդ բոլոր ուրախությունների մեջ ռազմիկները երբեք չէին մոռանում հերոսաբար զոհված իրենց ընկերներին, Հունան Ավետիսյանին և մյուսներին։

1943 թ. հոկտեմբերի 12-ին հայկական միավորմանը այցելության են գալիս Սովետական Միության մարշալ Ս. Կ. Տիմոշենկոն, ռազմաճակատի հրամանատար, բանակի գեներալ Ի. Ե. Պետրովը, բանակի հրամանատար գեներալ գնդապետ Կ. Ն. Լեսելիձեն, որոնք հմտորեն ղեկավարելով Թամանյան թերակղզին թշնամուց ազատագրելու ռազմական գործողությունները, եկել էին շնորհավորելու այդ մարտերում աչքի ընկած հայկական միավորմանը։

Ընդարձակ վրանի տակ կազմակերպվում է հաղթողների հանդիսավոր ճաշկերույթ, որը վերածվում է ռազմիկների հերոսությունների և վառ հայրենասիրության մի ցույցի։

Բաժակ բարձրացնելով սովետական ժողովրդի և Սովետական

բաղսկայա գյուղի և նրա բարձունքների համար, կարմիր դրոշը ձեռքում բարձր պահած նա մարտի նետվեց և զոհվեց բարձունքը գրավելու ժամանակ։ 1944 թ. մայիսին ՍՍՌՄ Գերագույն Սովետի Նախագահության Հրամանագրով Ս. Աւաքելյանին շնորհվեց Սովետական Միության Հերոսի կոչում։

* «Մարտիկ» բանակային թերթ, հոկտեմբերի 17, 1943 թ.։

Բանակի հաղթանակների կազմակերպիչ ընկեր Ստալինի կենացը, Սովետական Բանակի, նրա փառապանծ հրամանատարների ու Կովկասյան ճակատի հրամանատարության կենացը, ելույթ ունեցող ռազմիկները իրենց բոցաշունչ ճառերում արձանագրում են հայ ժողովրդի, հայ ռազմիկների՝ թշնամուն ջախջախելու գործում հանդես բերած արիության ու տրադիցիոն քաջությունների բազմաթիվ փաստեր։

Երախտագիտության զգացմունքով և հպարտությամբ հիշում են Հունան Ավետիսյանի անունը, նրա դյուցազնական արարքը, Հունանին անվանում են «հայ Մատրոսով», որը հենց այդ ժամանակից էլ որպես այդպիսին մտնում է Հայրենական Մեծ պատերազմի հերոսական տարեգրության մեջ։*

Խնդիր են առաջադրում Հունան Ավետիսյանին հետմահու Սովետական Միության Հերոսի կոչման ներկայացնելու մասին։

Հաղթանակի ուրախալի լուրը հայրենիքին հաղորդելով, հոկտեմբերին ռազմաճակատի հայ մարտիկները Հայաստանի աշխատավորներին են ուղարկում իրենց հայտնի «Նամակ ռապորտը»։ Պատմելով տարած փառավոր հաղթանակների, հայ ժողովրդի նակազի կատարման մասին, արժանի կերպով ընդգծում են հայրենիքի ազատության և անկախության մարտերում զոհաբերանին բերած իրենց անմահ զոհերի՝ Հունանի և մյուսների անունները։

«Անմահ փառքով հավերժացրին իրենց հայ ռազմիկները,— գրում են նրանք,— Նովորոսիյսկը և Թամանյան թերակղզին ֆաշիստական դարշելիներից ազատագրելու համար մղվող մարտերում։

Անմահ մարտիկ Հունան Ավետիսյանի սխրագործությունը, որն առաջինը բարձրացավ Դոլգայա լեռը, նոնակներ նետեց հակառակորդի ԴԶՕՏ-երի վրա և դարերով հավերժացված Սովետական Միության Հերոս Ալեքսանդր Մատրոսովի օրինակով իր մարմնով փակեց հակառակորդի ամբրազուրը, այդպիսով ապահովեց թշնամու ԴԶՕՏ-երի և տրանշեյների գրավումը։ Հոկտեմբե-

* Այդ հանդիսավոր հանդիպման ու խնջույքի մասին մանրամասնությունները տես «Կարմիր Զինվոր» ռազմաճակատային բանակային թերթի 1943 թ. հոկտեմբերի 13-ի 97 համարում։

*ոյանի շրջանի 3-րդ սովխոզի աշխատակիցները կարող են պարծենալ իրենց դաստիարակած անվեհեր զավակով»։**

Նոյեմբերի սկզբին ռազմաճակատից Հայաստան են այցելում հայկական զորամասերի պատգամավորները։ Գործարաններում և հիմնարկներում հայրենասիրական խանդավառ ելույթներ ունենալով, ռազմիկները հարազատ ժողովրդին հաշվետվություն են տալիս նենգ թշնամու դեմ իրենց տարած փառավոր հաղթանակների մասին։

Նրանք կոչ են անում թիկունքի աշխատողներին արժանի լինել իրենց դաստիարակած անմահ հերոսներին, Հունան Ավետիսյանին և մյուսներին։

Այսպես, ամեն տեղ ամեն ժամ անմահացվում է հայ ժողովրդի խիզախ զավակ Հունան Ավետիսյանի հիշատակը, նրա անունը։

Այդ օրերին Հայաստանում սովետական կարգերի հաստատման 23-րդ տարեդարձի առթիվ Անդրկովկասյան ռազմաճակատի Քաղվարչության պետ գեներալ-մայոր Կ. Լ. Սարոկինը «Հայաստանի զավակները հայրենիքի համար մղվող մարտերում» իր հոդվածում, արտահայտելով բարձր հրամանատարության կարծիքը հայկական միավորումների և հայ ռազմիկների՝ մարտերում ցուցաբերած մարտական բարձր որակի և խիզախության մասին, դյուցազնաբար զոհված ավագ սերժանտ Հունան Ավետիսյանի մասին, գրում է.

*«... Մեր հայրենիքի գալիք սերունդները սուրբ զգացմունքով միշտ կհիշեն հայկական Մատրոսովի՝ ավագ սերժանտ Հունան Ավետիսյանի անմահ սխրագործությունը, որն իր մատաղ կյանքը գիտակցաբար զոհաբերեց հանուն Հայրենիքի ազատության ու պատվի։ Նա իր մարմնով ծածկեց թշնամու ԴԶՕՏ-ի հրակնատը և ապահովեց իր ստորաբաժանման հարձակումն ու հաղթանակը»։***

Հունանի մասին բազմաթիվ ընթակցություններ գրվեցին նաև ռուսերեն, վրացերեն, ադրբեջաներեն բանակային թերթերում, նրա մասին լսեցին և իմացան ամենքը։

Ռազմիկները, հրամանատարներն իրենց սրտում վառ պահե-

---

* «Կարմիր Զինվոր» № 101, հոկտեմբեր, 1943 թ.։

** «Մարտիկ» № 88, 29 նոյեմբերի 1943 թ.։

լով զենքի ընկերոջ՝ Հունանի հիշատակը, հիշելով նրա հուզիչ անմահ սխրագործությունը, մարտերում հերոսական նորանոր քաջություններ էին կատարում, Հունանի անունը սրտերում, երդվում էին նրա պես ջերմորեն սիրել հայրենիքը, իրենց կյանքը չխնայել հայրենիքի ազատության և անկախության համար։ Ընդանք այդ ապայուցում էին ամենօրյա մարտական գործողությունների մեջ։

Ահա նրանցից Հունանի հետ Դոլգայա բարձունքը գրոհած ձեռքի գնդացրորդ խանդավառ հայրենասեր Մերուն Գրիգորյանը, որի մասին հետագա մարտերում աչքի ընկնելու առթիվ «Կարմիր Զինվոր» ռազմաճակատային թերթը գրում է. «... Չգիտե, թե ինչ բան է երկյուղը մարտերում»։* Լ. Բաղդասարյանը «լեցրել է 7 ԴԶՕՏ. ֆաշիստները տասնյակներով գերեզման են գտել նրա գնդակներից»։**

Առանձնապես հուզիչ է Հունանի եղբոր, բանակային սակրավոր Հմայակ Ավետիսյանի հանդիսավոր երդումը և նրա մարտական գործերը։ Հունանի մահվան բոթն ստանալով, խորապես ցնցված, նա Դրիմի ազատագրման համար սկսված մարտերի օրերին, թերթի միջոցով մարտիկներին և հրամանատարությանը դիմելով, հետևյալն է գրում.

«Եղբորս արյունը վրեժի է կանչում։ Ես Հունան Ավետիսյանի հարազատ եղբայրն եմ։ Հունանը հերոսի մահով ընկավ Դոլգայա լեռան գլխին, հաղթանակի վառ կարոտը սրտում...

Գերմանա-ֆաշիստական զավթիչների դեմ պատերազմի սկզբից կռվում ենք հինգ եղբայրներով։ Հերոսական մահով ընկել է նաև իմ երկրորդ եղբայրը՝ Գևորգը։*** Ալեկոծվում է սիրտս, երբ հիշում եմ այդ մասին, և երբ գրում եմ այս տողերը։ Լեռնանում է սրտումս ցասումը և ատելությունը արյունարբու թշնամու դեմ։

... Ես սակրավոր եմ. անցած մարտերում ոչնչացրել եմ հակառակորդի 150 ական, այժմ ավելի եմ վարպետացել իմ գործում և տիրապետել եմ մի շարք զենքերի տեխնիկային։ Ես երդվել եմ

---

* «Կարմիր Զինվոր» № 115, նոյեմբեր 1943 թ.։

** Նույն տեղում։

*** Հայրենական պատերազմում Ավետիսյան եղբայրներից զոհվել են երեք հոգի՝ Հունանը, Գևորգը և Աստուր Ավետիսյանները։

Տիպինկան մարտիկներին պատմում է Հոտոնի սերտաղրծությունների մասին

այդ բոլորն ուղղել թշնամու դեմ... Արյան դիմաց արյուն, մահվան դիմաց մահ։ Ահա իմ նշանաբանը»։*

1944 թ. դեկտեմբերի 4-ին համառ ճակատամարտ մղվեց Կերչի համար, բացառիկ դեր էին կատարում այդ մարտերում դեսանտային սակրավորները, որոնք գործում էին մեր պաշտպանության առաջավոր դիծը ականապատելու, փշալարերով ցանցապատելու, իր հերթին անվտանգ դարձնելու հիտլերականների դրած ականները— անցուղի բաց անելու թշնամու դիրքերի վրա գրոհող մեր հետևակի համար։

Այդ գործողությունների մեջ սակրավոր Դուլգարյանի, Կուլեգյանի, Թանգյանի, Լաղոյանի հետ միասին իր խիզախությամբ աչքի ընկավ Հունանի եղբայր Հմայակ Ավետիսյանը։ Գործողությունը կատարվում էր բնական և մարտի դժվարագույն պայմաններում։

Նրանց գործողությունների ամբողջ ընթացքում ձյուն էր տեղում։ Ծովից փչող ցրտաշունչ քամին թափանցում էր մարտիկների մինչև ոսկորները, սառած ավազանման ձյան հատիկները զարնելով երեսներին և աչքերին՝ դժվարացնում էին շնչելը։

Դրա հետ մեկտեղ սակրավորները մինչև ծնկները թաղված անտառների ցեխի և խոնավության մեջ, անթափանց խավարի և կողմնորոշվելու դժվարին պայմաններում առաջ են գնում։ Հասնելով թշնամու առաջավոր գծին, 80—100 մետր հեռավորության վրա գտնվող նրանց ականադաշտերին, սկսում են ականազատել, կտրատել փշալարերը։

Թշնամին հրթիռների լույսի տակ նկատելով առաջավոր գծում տեղի ունեցող շարժումը, գնդացրային և ականանետային մրրկալի կրակ է բաց անում սակրավորների վրա. «բայց խիզախները,— գրում է այդ մարտերին ականատես մայոր Ս. Նալբանդյանը,— արհամարհելով մահը, շարունակեցին իրենց գործը և հաջողությամբ դաշտը մաքրեցին ականներից։

Իր քաջագործություններով աչքի ընկավ Սովետական Միության Հերոս Հունան Ավետիսյանի եղբայրը, սակրավոր Հմայակ Ավետիսյանը»։**

---

* «Կարմիր Զինվոր» № 114, նոյեմբերի 16, 1943 թ.։

** «Հայ թամանցիները», ՀՍՍՌ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1947 թ., էջ 75։

Իր երդմանը հավատարիմ, Հունանի եղբայր սակրավոր Հմայակը ամենադժվարին պայմաններում մոտենալով հակառակորդի փշալարերին, վերցնում է նրանից «ռագատկա» կոչվող արգելափակիչը, շալակած բերում-հասցնում է հրամանատարական կետը, ապա պատրաստվելով նոր գործողությունների՝ նա ընկերներին դիմելով, ասում է.

— Ընկերներ, խնդրում եմ մասնակից եղեք իմ վշտին, օգնեցեք ինձ, ես պատրաստ եմ քարուքանդ անել թշնամու բոլոր արգելքները և ճանապարհ բաց անել մեր հետևակի համար, ինչքան էլ որ դա դժվար լինի։

Հմայակը մշտապես գերազանց, անձնվիրությամբ կատարելով իր առաջադրանքները, կենդանի օրինակ էր ծառայում ընկերներին։ Նա սրբությամբ կատարեց իր երդումը նաև այս անգամ և ճանապարհ բաց արեց հետևակի համար։*

* * *

Հունանի հերոսության, վեհ և դյուցազնական մահվան լուրը շուտով տարածվում է ավելի հեռու մեր անծայրածիր հայրենիքով մեկ, Սովետական Բանակի բոլոր զորամասերում։

Սովետական կառավարությունը բարձր գնահատեց հերոսի մատուցած ծառայությունը։ Ռազմաճակատում ֆաշիստական Գերմանիայի զորքերի դեմ մեր սոցիալիստական Հայրենիքի ազատության և անկախության համար մղված մարտերում ցուցաբերած խիզախության և անձնազոհության համար ՍՍՌՄ Գերագույն Սովետի Նախագահությունը 1944 թ. մայիսի 16-ի հրամանագրով ավագ սերժանտ Հունան Մակիչի Ավետիսյանին հետմահու շնորհեց Սովետական Միության Հերոսի կոչում։**

Սովետական կառավարության որոշումը ուրախության բուռն զգացմունքով լցրեց Հունանի մարտական ընկերների և հարազատների սրտերը։ Արտադրական բուռն վերելք առաջ բերեց համագյուղացիների՝ Ծալ գյուղի կոլխոզնիկների, ինչպես նաև Հոկ-

---

* Հմայակ Ավետիսյանը այժմ Փառքի 3 շքանշանների ասպետ է։

** Տես „Известия" լրագիր № 116, մայիսի 17, 1944 թ.։

տեմբերյանի շրջանի Միկոյանի անվան սովխոզի աշխատողների մեջ։

Մի քանի ժամանակից հետո երախտագիտական իրենց ձայնը բարձրացրին նաև Կուբանի Վերխնե-Բականսկու ստանիցայի և Գայդուկ խուտորի աշխատավորները, որոնք իրենց սրտում ամուր պահելով Հունան Ավետիսյանի անունը, հարց բարձրացրին արժանի կերպով հավերժացնելու նրա հիշատակը։

1948 թ. մարտի 2-ին Վերխնե-Բականսկիի շրջգործկոմը, արտահայտելով շրջանի բանվորների և կոլխոզնիկների կամքը, իր նիստում որոշում ընդունեց, որի մեջ արձանագրված է հետևյալը.

«Սովետական Միության Հերոս Հունան Ավետիսյանի հիշատակը հավերժացնելու համար շրջսովետի գործկոմը որոշում է.

1. Գայդուկ ավանում Զավոդսկայա փողոցը վերանվանել Հունան Ավետիսյանի անվան։

2. Գայդուկ ավանում կանգնեցնել հուշարձան ի հիշատակ Սովետական Միության Հերոս Հունան Ավետիսյանի»։*

Հունանի և մյուս զոհված ռազմիկների նեղբայրական գերեզմանը ամեն ժամ, ամեն րոպե հիշեցնում է Կուբանի աշխատավորներին նրանց սրբազան պարտքը հայրենիքի և իրենց փրկողների հանդեպ։

Հունանի և իր ընկերների մղած մարտերի վայրում այժմ տեղի է ունենում սոցիալիստական ստեղծագործ եռուն աշխատանք։

«Գերմանական օկուպացիայից հետո անցած տարիներին,— կարդում ենք 1948 թ. ապրիլի 3-ին «Սովետական Հայաստան» թերթում տպագրված Կուբանի թղթակից Ի. Մելգրոմի «Այն հողում, որտեղ զոհվել է Հունան Ավետիսյանը» վերնագիրը կրող հոդվածում,— վերականգնված է 18 կոլխոզ, ՄՏ-կայան, գործարկվել են ցեմենտի 2 գործարան։ Ամբողջ երկրում հայտնի է Աբշաուդյուրսո գործարանը, որը նորից արտադրում է շամպան տիպի գինիներ»։**

Խուտորի «Կոմունար» կոլխոզը արագ քայլերով առաջ է գնում, վերացնում է օկուպանտների կատարած ավերա-

---

* «Սովետական Հայաստան» թերթ № 79, 3 ապրիլի 1948 թ.։

** Նույն տեղում։

ծությունների հետևանքները։ Կոլխոզի ղեկավարները, զորացրված ռազմիկները անձնուրաց աշխատանքի օրինակներ են ցույց տալիս, որի հետևանքով վերականգնված է նախապատերազմյան ժամանակաշրջանի ցանքատարածությունը, և արտադրանքի մակարդակը գրեթե բոլոր գծերով գերազանցված է նախապատերազմյանից։

Այդ բարեբեր հողերի վրա են աշխատում նաև շատ հայ աշխատավորներ, որոնք վաղուց հալածված Թուրքական դահիճներից, իրենց փրկությունը գտան Կուբանում։ Հիմնվելով Կրասնոդարի երկրամասում, ռուս մեծ ժողովրդի կողմից նրանք արտակարգ հոգատարություն տեսան, զգացին հարազատ միջավայրում, իրավահավասար իրավունքների և հողի տեր դարձան, 1930 թվականին ստեղծեցին «Կարմիր Էրզնջան» հայկական կոլխոզը, սկսեցին աշխատել ու ապրել կոլեկտիվ կյանքով։

«Այդ կոլխոզի նախագահ ընկ. Սաֆարյանը նույնպես զորացրված մարտիկ է,— շարունակում է թղթակիցը վերևում հիշած իր հոդվածի մեջ,— նրա տեղակալ Զաքար Մակարյանը ծառայել և կռվել է Հունան Ավետիսյանի հետ միասին միևնույն զորամասում։ Նախկին ճակատայինը պահում է այն թերթը, որտեղ նկարագրված է իր ծառայակցի անմահ սխրագործությունը, հաճախ կոլխոզնիկներին կարդում է հուզիչ տողերը, կոչ անելով մարդկանց ստախանովյան աշխատանքով մեծարել հերոսի հիշատակը։

... Վերածնված շրջանում կյանքը, ինչպես մինչև պատերազմը, լի է հերոսական առօրյայով, սովետական աշխատավորների հոգատարությամբ դեպի իրենց հայրենիքի բարգավաճումը, որի պատվի ու անկախության համար Հունան Ավետիսյանը զոհեց իր կյանքը»։*

* * *

Այսպես անցան տարիներ, պատերազմի փոթորկոտ օրերին հաջորդեցին հաղթանակի ու խաղաղ ստեղծագործ շինարարության բերկրալի օրերը, բայց սովետական ժողովուրդը, սովետական զինված ուժերը առաջվա պես իրենց մեծ սրտում պահում են Սո-

* «Սովետական Հայաստան» № 79, ապրիլի 3, 1948 թ.։

վետական Միության ականավոր հերոսների, նրանց թվում նաև Հունան Ավետիսյանի անմահ կերպարը։

Նրա զոհվելուց 6 տարի հետո, 1949 թ. ապրիլի 22-ին հրապարակվեց ՍՍՌՄ Զինված Ուժերի մինիստր՝ Մարշալ Վասիլևսկու հրամանը Հունան Ավետիսյանի հիշատակը հավերժացնելու մասին։ Այդ հրամանի մեջ կարդում ենք հետևյալը.

«1943 թ. սեպտեմբերի 16-ին գերմանացիների պաշտպանության ճեղքման և Կրասնոդարի երկրամասի Վերխնե-Բականսկի ռայոնը գերմանական զավթիչներից ազատագրելու ժամանակ № հրաձգային գնդի 4-րդ հրաձգային վաշտի դասակի հրամանատարի տեղակալ ավագ սերժանտ Հ. Մ. Ավետիսյանը Դոլգայա լեռան գրոհի ժամանակ փառավորեց իրեն, ոչնչացնելով թշնամու կրակակետերը։

Հրաձգային դասակը, որի կազմումն էր գտնվում ավագ սերժանտ Հ. Մ. Ավետիսյանը, հարձակման մոմենտին ընկավ թշնամու երկու ԴԶՕՏ-երի գնդացրային ուժեղ կրակի տակ։ Դասակը գետնին սեղմվեց։ Այդ ժամանակ ավագ սերժանտ Ավետիսյանը հասավ ԴԶՕՏ-երից մեկին և նռնակներ նետեց նրա վրա։ Դասակը առաջ շարժվելով դեպի Ավետիսյանի գրաված դիրքերը, ստիպված էր կրկին երկրորդ ԴԶՕՏ-ի գնդացրային կրակի տակ դարձյալ սեղմվել գետնին։ Ավագ սերժանտ Ավետիսյանը հրամայեց դասակին օգակել ԴԶՕՏ-ը, իսկ ինքը սողեսող մոտեցավ ամբրազուրին, որպեսզի նռնակներ նետի նրա վրա, բայց հենց ԴԶՕՏ-ի մոտ վիրավորվեց։ Արյունաքամ լինելով, նա հասավ մինչև ամբրազուրը և մարմնով ծածկեց այն։ Գնդացրային կրակը դադարեց։ Օգտվելով ավագ սերժանտ Ավետիսյանի հերոսական սխրագործությունից, դասակը կատարեց իր մարտական խնդիրը։

Ավագ սերժանտ Ավետիսյանը զոհվեց հերոսի մահով։

ՍՍՌ Միության Գերագույն Սովետի Նախագահությունը 1944 թվի մայիսի 16-ի հրամանագրով ավագ սերժանտ Հ. Մ. Ավետիսյանին հետմահու շնորհեց Սովետական Միության Հերոսի կոչում։

Նրա անվերապահ նվիրվածությունը սոցիալիստական հայրենիքին և անսահման հավատարմությունը երդմանը, օրինակ պետք է ծառայեն Զինված Ուժերի ամբողջ անձնակազմի համար։

Հրամայում եմ՝

Սովետական Միության Հերոս, ավագ սերժանտ Հունան Մակիչի Ավետիսյանի անունը առհավետ գրանցել № հրաձգային գնդի առաջին հրաձգային վաշտի ցուցակում։

Հրամանը կարդալ բոլոր վաշտերում, մարտկոցներում, էսկադրոններում և էկիպաժներում»։*

Այն միավորումը, որի շարքերումն էր ծառայում Հունանը, Հայրենական պատերազմի կատաղի մարտերի մեջ իր դրոշը օծեց անջնջելի փառքով՝ Կովկասի նախալեռներից հաղթանակով հասավ մինչև Բեռլին, դարձավ Կարմրադրոշ, Կարմիր Աստղի և Կուտուզովի երկրորդ աստիճանի եռակի շքանշանակիր։ Նրա մարտիկները և հրամանատարները ոչ մի օր չէին մոռանում Հունանին՝ իրենց դյուցազուն ընկերոջը։

Հունանը իր հերոսական օրինակով նրանց հետ էր Սևաստոպոլի, Ղրիմի, հարազատ Ուկրաինայի և եղբայրական Լեհաստանի ազատագրման մարտերին, Թշնամու հողում, Բեռլինի փողոցներում Սովետական Բանակի մղած ավարտական կռիվներին։ Հունանը քայլում էր նրանց հետ նաև պարտված Բեռլինի պողոտայով անցնող սովետական հաղթանակած զորքերի շքերթի պողպատակուռ շարքերում... Նա միավորման մարտիկների հետ է նաև այսօր, խաղաղ ուսման ու շինարարության մեջ, ամեն տեղ, ամեն ժամ։ Հունանի անունն ու սխրագործությունները անջնջելի կերպով մտավ նրանց փառապանծ զորամասի մարտական տրադիցիաների մեջ։

Երբ № զորամասի ռազմիկները լսեցին, որ Սովետական Միության Հերոս Հունան Ավետիսյանի անունը ՍՍՌՄ Զինված Ուժերի մինիստրի հրամանով առհավետ գրանցված է իրենց ստորաբաժանման ցուցակում, համակվեցին բուռն ուրախությամբ։

Ամենուրեք խանդավառ միտինգներ ու հայրենասիրական հավաքույթներ կազմակերպվեցին։ Հունանի վաղեմի ընկերներ ելույթ ունեցող սպաները, համադնդեցի սերժանտները, մարտիկները հանդիսավոր խոսք տվին ծառայել հայրենիքին այնպիսի նվիրվածությամբ ու աղնվությամբ, ինչպես իրենց զորամասի նախկին ռազմիկ Հունան Ավետիսյանն է ծառայել։

---

*ՀՊՊԿ, փաստաթուղթ № 5076։

Գվարդիայի ավագ լեյտենանտ Ն. Հովսեփյանի ստորաբաժանման մարտիկները ավագ Բ. Մելքոնյանի ղեկավարությամբ կարգի բերելով զորանոցը և տոնական տեսք տալով նրան, պատուհանի մոտ դրեցին կոկիկ կահավորված մի գեղեցիկ մահճակալ՝ հարդարված Հունան Ավետիսյանի անկողնով։ Մահճակալի գլխավերևում փակցրին հերոսի մեծադիր նկարը, նրա շուրջը ամրացրին ՍՍՌՄ Զինված Ուժերի մինիստրի հրամանը, ինչպես նաև Վերխնե-Բականսկու շրջսովետի աշխատավորների դեպուտատների գործկոմի որոշումը՝ Սովետական Միության Հերոս Հունան Ավետիսյանի հիշատակը հավերժացնելու մասին։

Ռազմիկները ամեն օր թարմ ծաղկեփունջ են դնում Հունանի անկողնու կողքի սեղանի վրա, յուրաքանչյուրը խոր ակնածանքով մոտենալով այդ խորհրդավոր անկողնուն, սրտի խորքից լուռ շշնջում է հերոսի մահճակալի գլխավերևում փակցված խոսքերը.

— Դու մեզ հետ ես, դու մեր շարքերումն ես, սիրելի Հունան...

Հրամանի լուրը ստանալու հետևյալ օրը տեղի է ունենում ստորաբաժանման ԼԿԵՄ կազմակերպության դռնբաց ժողովը, որի օրակարգն է լինում «Հայրենիքին ծառայել այնպես, ինչպես ծառայեց Սովետական Միության Հերոս Հունան Ավետիսյանը»։

Ժողովը բաց է անում կոմերիտմիության կազմակերպության քարտուղար ավագ լեյտենանտ Մելքումյանը։ Ձեկուցող սպան, Հայրենական պատերազմի մասնակից Հունանի ռազմիկ ընկերներից մեկը լինելով, հանգամանորեն պատմում է Ավետիսյանի մարտական գործերի և սխրագործությունների մասին։ Նշում է, որ նրա հերոսական օրինակը ինչպես Հայրենական պատերազմի օրերին, նույնպես և այժմ, խաղաղ ուսման պայմաններում «ոգևորում է ստորաբաժանման մարտիկներին՝ պատվով կատարել իրենց զինվորական պարտքը Հայրենիքի նկատմամբ։ Զոկի հրամանատարներ Արշակյանը, Սարգսյանը, Միրաքյանը, Կիրակոսյանը և ուրիշները, ամենուրեք գործում են ավագ սերժանտ Հունան Ավետիսյանի օրինակով»,— ասում է նա։

«Երբ հերոսական մահով զոհվեց Հունանը,— ասում է Վանյան,— մենք երդվեցինք մինչև վերջին շունչը հարազատ լինել Հայրենիքին և անարգ թշնամուց վրեժ լուծել մեր մարտական ընկերոջ արյան փոխարեն։ Դոլգայա բարձունքից մինչև

*էլբա գետը, ուր ամենուրեք թեժ մարտեր էին մղվում, անմահ Հունանի կերպարը ոգևորում էր մեզ և նոր ուժ էր տալիս մեր բազուկներին»։**

Մարտական ջերմ հայրենասիրական ելույթներ են ունենում նաև Սոցիալիստական Աշխատանքի Հերոս շարքային զինվոր Խոսրովյանը, սերժանտ Նազարյանը և ուրիշներ։

Ժողովը երախտագիտական խոր զգացմունքով լի, կոմերիտական մարտիկների անունից սրտառուչ նամակ է ուղարկում հերոսի մորը՝ Խանում Ավետիսյանին։

Մի քանի օրից հետո մի խումբ մարտիկներ սպաների ու միավորման հրամանատարի հետ միասին այցելում են Հոկտեմբերյանի շրջանի Միկոյանի անվան սովխոզը, Հունան Ավետիսյանի մորը, մեր Հայրենիքի ազատության ու անկախության համար մղած մարտերում հերոսաբար զոհված 4 դյուցազունների մորը— Խանում Ավետիսյանին։

Սովխոզի բնակիչները անմիջապես շրջապատում են ավտոներից իջնող թանկագին հյուրերին, որոնց սովխոզի պարտկազմակերպության քարտուղարը առաջնորդում է դեպի Հունանենց տունը։

— Ահա և Խանում մայրիկի բնակարանը,— ասում է նա, ներս մտնելով կահավորված լուսավոր երկհարկանի շենքի սենյակներից մեկը։

— Խնդրեմ, բալեք ջան, ներս եկեք,— հուզմունքից դողացող ձայնով ասում է ալեհեր Խանումը և գրկաբաց ընդունում է իր որդու մարտական բարեկամներին։ Նրանցից Տկաչենկոյին, Ֆարմանյանին և ուրիշներին Խանումը վաղուց գիտեր. նրանք արդեն մի քանի անգամ եղել էին այդ տանը, որպես Հունանի սրտակից ընկերներ։

Հյուրերը իրենց հետ բերել էին ծաղիկներ, մարտիկների գրած նամակը, քաղցրավենիներ և նվերներ Հունանի որդու՝ Հենզելիկի համար։

Այդ հանդիսավոր իրադրության մեջ, ստորաբաժանման կոմերիտական կազմակերպության քարտուղար ավագ լեյտենանտ Մելքումյանը Խանումին հանձնում է ստորաբաժանման մարտիկների գրած նամակը։

---

* «Լենինյան Դրոշ» № 62, մայիսի 22, 1949 թ.։

Համազասպեցիների մի խումբ Հունանի մայր՝ Խանում Ավետիսյանի մոտ

Խանումը շնորհակալություն հայտնելով նամակի համար, ավագ որդուն հանձնելով այն, խնդրում է բարձրաձայն կարդալ իր համար։

— Տեսնենք ինչ են գրել բալեքս,— ասում է նա։

«Թանկագին մայր, —բարձրաձայն ընթերցել է սկսում նամակը Հունանի մեծ եղբայրը,— ձեր որդի՝ Սովետական Միության Հերոս Հունան Ավետիսյանի հիշատակը հավերժացնելու համար ՍՍՌՄ Զինված Ուժերի մինիստրի հրամանով նրա անունը առհավետ գրանցված է մեր ստորաբաժանման ցուցակում։ Սիրելի մայր, մենք, սովետական ռազմիկներս խորին շնորհակալություն ենք հայտնում Ձեզ, որ նման հայրենասեր, Լենինի—Ստալինի գործին հավատարիմ զավակ եք դաստիարակել։ Մենք խոսք ենք տալիս զինվորական ծառայությունը կատարել այնպես, ինչպես Հունանը, Հայրենիքի թշնամիներին ատել այնպես, ինչպես Հունանը։

Որդիական ջերմ բարևներով № ստորաբաժանման մարտիկներ»։*

— Շնորհակալ եմ բալեք... Հունանս ծովի պես սիրտ ուներ, դաղան Հիտլերը սպանեց որդուս,— այս ասելով խանումը սկսեց լուռ հեկեկալ... նրա թոշնած այտերի վրայով ցած գլորվեցին մայրական վշտի արցունքները...

Մի րոպե քար լռություն է տիրում, ամենքին համակում է վիշտը։ Մարտիկներն ու հարազատները սիրտ են տալիս, հասկացնում են, որ այս պատերազմում շատ շատերն են զոհվել, որ Հունանը իր հերոսական գործով անմահության է հասել։

Այդ խոսքերից զգաստացած, հերոսի մայրը գլուխը վեր բարձրացնելով, նայում է Հունանի ընկերներին և ապա իր խրոխտ հայացքը նետում է պատուհանից դուրս, դեպի սովխոզի դաշտերն ու անծայրածիր այգիները, դեպի հայ ժողովրդի դարավոր մաքառումների պատմության վկային, վեհանիստ Արարատին։ Այնուհետև կանգ առնելով սենյակի պատից կախ տված Հունանի նկարի առջև, թախծոտ ու հանդարտ տոնով հատ-հատ խոսքերով ասում է.

— Այո, շատ մայրերի սրտեր սևացան,— և մի րոպե լռելուց

* «Լենինյան Դրոշ» № 62, մայիսի 22, 1949 թ.։

հետո դարձյալ շարունակում է,— իմ որդին չկա, բայց դուք իմ որդիներն եք, քանի որ հիշում եք նրան...

Հունանի մարտական ընկերների, համագյուղացիների ու տեղի պարտիական ու սովետական ղեկավար աշխատողների այդ խումբը սենյակից դուրս են գալիս տան բակը։ Բակում սեղանի շուրջը նստելով, ջերմ հուշեր են սկսում պատմել Հունանի մանկությունից, ռազմաճակատի էպիզոդներից, սոցիալիստական աշխատանքի ու շինարարության նրա անցյալի օրերից։

Այդ ջերմ զրույցի ժամանակ մանկական ուրախ ժպիտը երեսին տատի մոտ է վազում փոքրիկ Հենզելիկը, Հունանի որդին, որին ամենքը անմիջապես ճանաչում են։ Գեներալը հարազատորեն գրկում է Հենզելիկին և հայրաբար համբուրում ու զրուցում է նրա հետ։ Հունանի մարտական ընկերները Հենզելիկին հյուրասիրում են, նվերներ են տալիս։

— Շնորհակալ եմ,— հազիվ լսելի ձայնով ասում է Հենզելիկը, նվերները վերցնելով, և իր սև ու մեծ աչքերով մանրամասն զննում է իրենց տունը եկած այդքան բազմաթիվ և հետաքրքիր հյուրերին։

— Իսկական հայրն է,— Հունանիս միակ հիշատակը սա է։ Սրանով եմ մխիթարում 4 որդիներ կորցրած վիրավոր մայրական սիրտս,— ասում է խանումը և կուշտ-կուշտ համբուրում է թոռան՝ Հենզելիկի արևակեզ թշիկները։ Իր գիրկը առնելով նրան, տխրամած օրորվում է։

Այնուհետև պատասխանելով ռազմիկների բազմաթիվ հարցերին, խանում մայրիկը պատմում է Հունանի մանկության և արկածներով լի պատանեկության օրերի, Ծալ գյուղում կոլխոզ կազմակերպելու, Հոկտեմբերյանի սովխոզում երջանիկ կյանքի ուղին բռնած իրենց ընտանիքի մասին, ու ռազմաճակատից Հունանի գրած հաղթանակի հավատով լի բազմաթիվ նամակների, և ուրիշ շատ դեպքերի մասին։

Նույն օրը սովխոզի ակումբում կազմակերպվում է Սովետական Միության Հերոս Հունան Ավետիսյանին նվիրված անկյունը։ Իսկ 1949 թ. հունիսին Հոկտեմբերյանի շրջանի Միկոյանի անվան սովխոզի դիրեկտորը հատուկ հրաման է տալիս սովխոզի նախկին բանվոր Սովետական Միության Հերոս Հունան Ավետիսյանի հիշատակը հավերժացնելու համար։ Այդ հրամանում ասված է՝

«1. Սովխոզի № 5 ագրոմասի № 17 բրիգադան, որտեղ աշխատել է Հունան Ավետիսյանը, այսուհետև անվանել Հունան Ավետիսյանի անվան բրիգադա։

2. Առաջարկել բոլոր ցեխերի վարիչներին մինչև հունիսի 10-ը հրավիրել ցեխային արտադրական խորհրդակցություն և մասսայականացնել սույն հրամանը»։*

Ոգեշնչված Սովետական Կառավարության և Զինված Ուժերի մինիստրության արտակարգ ուշադրությունից դեպի Հունանի հիշատակը, հպարտ որդու դյուցազնական փառքով՝ Խանում մայրիկը հայրենասիրական մի նամակով դիմում է Անդրկովկասյան զինվորական օկրուգի բոլոր ռազմիկներին։

Համառոտակի նկարագրելով Հունանի կյանքը և մարտական գործունեությունը, անցած ուղին, հերոսի մայրը կոչ է անում Սովետական Միության հարավային սահմանների պաշտպաններին է՛լ ավելի լավ տիրապետել մարտական և քաղաքական գիտելիքներին, լինել համարձակ, անվախ, մինչև հոգու խորքը ատել թշնամուն, հավատարիմ մնալ զինվորական երդմանը, Լենինի—Ստալինի բոլշևիկյան պարտիային, մեր սքանչելի սոցիալիստական Հայրենիքին։

«Անդրկովկասի զինվորական օկրուգի թանկագին ռազմիկներ, իմ զավակներ,— գրում է հերոսի մայրը վերևում հիշած իր նամակում։

— Մոտ վեց տարի է անցել այն օրից, երբ հերոսաբար զոհվեց իմ որդի Հունանը։ Բայց նրա լուսավոր բարի հիշատակը մշտապես ապրում է իմ մայրական սրտում։ Օրերս ինձ հաղորդեցին, որ Սովետական Միության Զինված Ուժերի մինիստրի հրամանով Հունանի անունը առհավետ գրանցված է № զորամասի ցուցակում։ Այդ լուրը հուզեց ինձ։ Միայն մեր երկրումն է իրագործվում այդպիսի վերաբերմունք դեպի մարտերում ընկած հերոսը։

Սրանից մի քանի օր առաջ այն զորամասից, որտեղ ծառայել է իմ Հունանը, պատվիրակներ եկան ինձ մոտ։ Ռազմիկները իրենց ուշադրությամբ և գուրգուրանքով մխիթարեցին ինձ։

... Ինձ համար թանկ են ռազմիկների այդ ջերմ ու հոգեցունց

* ՀՊՊԿ, գործ Հունան Ավետիսյանի։

խոսքերը... Եղեք համարձակ, ուժեղ, դիմացկուն։ Սովորեցեք ատել մեր Հայրենիքի թշնամիներին։ Ազնվորեն պաշտպանեցեք մեր սովետական ժողովրդի, կոմունիզմ կառուցող ժողովրդի, Լենինի—Ստալինի պարտիայի ղեկավարությամբ դեպի կոմունիզմ ընթացող ժողովրդի շահերը»։*

Խանումի նամակը արտատպվում է հայերեն, ռուսերեն, վրացերեն և ադրբեջաներեն լեզուներով լույս տեսնող բանակային թերթերում, լայն տարածում է ստանում Անդրկովկասի զինվորական օկրուգի զորքերի մեջ։

Զինվորները ամենահեռավոր վայրերից անդամ բովանդակալից պատասխան-նամակներ են սկսում ուղարկել Հունանի մորը՝ Խանումին։ Խոստանում են ռազմական և քաղաքական պատրաստության մեջ լինել դերազանցիկ, Հունանի նման հայրենասեր։ Նամակները ռազմիկները գրում են անհատորեն, խմբովին և երբեմն նաև ամբողջ ստորաբաժանման անունից։

«Թանկագի՛ն և սիրելի՛ մամա,— գրում է սահմանապահ շարքային զինվոր Ֆեդիշին Նիկոլայ Ստեպանովիչը,— կարդալով մեզ, ռազմիկներիս, գրած Ձեր դիմումը, ես որոշեցի հայտնել Ձեզ, որ մենք, ռազմիկներս, գտնվելով մեր սիրելի հայրենիքի սահմանների վրա, Ձեր սիրելի որդու նման մենք նույնպիսի ազնվորեն ու բարեխղճությամբ կպաշտպանենք մեր հայրենիքը, չխնայելով մեր կյանքը...

Թանկագի՛ն և սիրելի՛ մայրիկ, ես այս նամակը գրելով՝ ցանկանում եմ շնորհակալություն հայտնել Ձեզ՝ այդպիսի որդի դաստիարակելու համար։ Ես ինքս ուկրաինացի եմ, կարդալով Ձեր մայրական այդպիսի ջերմ խոսքերը, ցանկանում եմ հայտնել Ձեզ, որ ես մարտական և քաղաքական պատրաստությունից ունեմ գերազանց գնահատական և խոսք եմ տալիս Ձեզ, որ հետագայում ես կսովորեմ միայն գերազանց, իսկ եթե պահանջի Հայրենիքը, կհետևեմ Ձեր սիրելի որդու՝ Հունանի օրինակին»։**

Մի ուրիշ նամակում, որը գրել են մի խումբ բանակայիններ, հանդիսավոր խոսք են տալիս բարձրացնելու իրենց ռազմական գիտելիքների մակարդակը, թախանձագին խնդրում են տեղեկացնել

---

* «Լենինյան Դրոշ» № 62, մայիսի 22, 1949 թ.։

** ՀՊՊԿ, գործ Հ. Ավետիսյանի, շարքային զինվոր Ֆեդիշինի նամակից։

իրենց՝ Հայաստանում կատարվող սոցիալիստական շինարարության աշխատանքների մասին։ Նամակի վերջում գրում են. «Մի անգամ ևս շնորհակալություն հայտնելով Ձեր նամակի համար, սպասում ենք պատասխանին»։*

Ստորաբաժանման անունից գրած նամակների թվին է պատկանում մի զորամասի մարտիկների ներքոհիշյալ նամակը.

«Թանկագի՛ն մայրիկ,— գրում են մարտիկները,— այսօր մենք բախտ ունեցանք կարդալու մեր թերթում Ձեր որդու՝ Հունանի մարտական սխրագործությունների մասին և Ձեր կոչն ուղղված մեզ՝ անդրկովկասյան ռազմիկներիս։

... Թանկագի՛ն մայրիկ, Ձեր նամակին կարձագանքենք ավելի լավ սովորելով և արժանի կլինենք Ձեր որդի՝ Հունանին։ Իսկ Ձեզ, սիրելի մայրիկ, ցանկանում ենք լավ առողջություն և հաջողություններ Ձեր աշխատանքում։ Ձերմ բարևներ մեր ստորաբաժանման բոլոր մարտիկներից»։**

Չնայած Հունանը չկա, բայց նրա անչափ նվիրվածությունը սոցիալիստական Հայրենիքին, անսահման հավատարմությունը երդմանը, Սովետական Միության մյուս հերոսների օրինակի նման, հենց այսօր էլ մեծ ազդեցություն է գործում, ամենալավագույն օրինակն է ծառայում սովետական հայրենասերների, ռազմիկների ու հրամանատարների դաստիարակության համար։ Ահա դրանցից մի երկուսը։ Ֆ զորամասի ջոկի մարտիկները տակտիկական պարապմունքի ժամանակ դաշտում հորդ անձրևի հանդիպելով, ամբողջապես թրջվում են. նրանք այդ ժամանակ պետք է դիմեին գրոհի և հաղթահարելով անանցանելի կպչուն ու ծանր ցեխը, հարյուր մետր տարածություն կտրելով պիտի գրավեին «հակառակորդի» ԴԶՕՏ-ը։ Հրամանատարը, որը Հունանի մարտական ընկերներից մեկն է լինում, հարձակումից առաջ մարտիկներին հավաքելով պատմում է Հունանի անձնազոհ հերոսության, թշնամուն հաղթելու նրա համառության ու տոկունության մասին։ Հունանի օրինակով ոգեշնչելով նրանց՝ օժանդակում է ստորաբաժանմանը կատարելու մարտական առաջադրանքը։ Բանակային թերթում իր այդ պարապմունքի մասին «Հերոսական օրինակի ուժը» վերնագրով թղթակցու-

* ՀՊՊԿ, գործ Հ. Ավետիսյանի։

** Նույն տեղում։

թյան մեջ հրամանատարը պատմում է հետևյալ մանրամասնությունները.

«Մեր ջոկերը գտնվելով խրամատներում, սպասում էին գրոհի ազդանշանին։ Իմ կողքին էր գտնվում ձեռքի գնդացրորդ Եժասը, որը ցրտից կապտել էր։

Մինչև գրոհը մնացել էր մի քանի րոպե։ Ես օգտագործելով այդ ժամանակը, մարտիկներին պատմեցի, թե ինչպես մեր գընդեցի Հունան Ավետիսյանը գրոհի նետվելով թշնամու ԴԶՕՏ-ի վրա, իր կրծքով փակեց հրակնատը, և որ ես Հունանի հետ միասին կռվել եմ և լավ ծանոթ եմ նրա հերոսությանն ու անվախությանը։ Կոմերիտական ռազմիկ Ավետիսյանը շատ անգամ հետախուզությունների ու գրոհների էր գնում հենց նույնպիսի փոթորիկներին ու ցրտերին, ամբողջապես թրջված՝ նա համարձակորեն առաջ էր շարժվում և ոչ մի անգամ կանգ չէր առնում դժվարությունների առաջ։

Զինվորները իմ պատմությունը լսում էին ուշադրությամբ։ Հերոսի կերպարը կենդանի կանգնեց նրանցից ամեն մեկի առջև. և երբ հրաման տրվեց «Հարձակում, առաջ», նրանք խրամատից շտապ դուրս գալով, ուշադրություն չդարձնելով ցեխին, չզգալով ցուրտը և հոգնածությունը, անդուսպ թռիչքով նետվեց առաջ և հաղթահարելով հարյուր մետր տարածությունը, երեք կողմից շեշտակի գրոհելով գրավեց «հակառակորդի» ԴԶՕՏ-ը։

Զորամասի հրամանատարը այնպես հիացած էր մարտիկների գործողություններից, որ չսպասելով «մարտի» վերջանալուն, հենց նույն տեղում շնորհակալություն հայտարարեց բոլորին։

Հերոսական օրինակի ուժը ինձ օգնում է,— գրում է ստորաբաժանման հրամանատարը,—դաստիարակել ամեն մի զինվորի մեջ կամքի ուժ։

... Մենք սրբությամբ ենք պահպանում հերոս Հունանի հիշատակը։ Այդ բանի հրաշալի ապացույցն է հանդիսանում ուսման մեջ մեր հաջողությունները»։*

Կրտսեր հրամանատար Սերգեյը պատմում է Հունանի կողմից իրեն հաղորդած դեղեցիկ մտքերը՝ պատերազմից հետո Գյուղատնտեսական Ինստիտուտում սովորելու ցանկությունը, ժողովրդի լա-

---

* „Боевая Звезда" № 55, 6 մարտի 1948 թ.։

վագույն ապագայի, նոր և ավելի երջանիկ կյանքով ապրելու մասին։

Հունանի հիշատակին նվիրված «Սխրագործությունը ոգեշնչում է» հոդվածում նկարագրելով իր ծառայության ընթացքում մարտիկների դաստիարակության գործում Հունանի հերոսական օրինակի ունեցած ազդեցության մասին, գրում է հետևյալը. «Ընկերոջս հիշատակը մշտապես ապրում է իմ սրտում, նրա պայծառ կերպարը ոգեշնչում է ինձ ամեն մի քայլափոխում և պարտադրում է ինձ ազնվորեն ու բարեխղճորեն կատարելու իմ զինվորական պարտքը, բայց զոհված հերոսի հիշատակը միայն ես չեմ որ սրբությամբ եմ պահում։ Մի անգամ շարքային Կիրակոսյանը կարգապահության խախտում կատարեց։ Ես կանչեցի զինվորին ու հարցրի նրան.

— Դու գիտե՞ս արդյոք, ով է Հունան Ավետիսյանը։

— Մարտում Հայրենիքի համար զոհված Սովետական Միության Հերոս է,— պատասխանեց զինվորը։

— Հունանը նույնպես ջոկի հրամանատար էր, իսկ հետո դասակի հրամանատարի տեղակալ։ Նա մարտի էր տանում իր զինվորներին, նրանք սիրում էին նրան քաջության, հմտության համար և ոչ մի անգամ նա կարգապահությունը չէր խանգարում։ Կիրակոսյանը լռում էր։ Նա ամաչեց և կարմրեց։ Այս խոսակցությունը Կիրակոսյանի վրա մեծ ազդեցություն գործեց։ Մի քանի ժամանակ անց նա ինձ մոտ եկավ, հետը բերելով Հունանի նկարը, և խնդրեց պատմել նրա մասին բոլորը, ինչ որ ես գիտեմ։ Այժմ Կիրակոսյանը սկսել է բոլորովին այլ ձևով նայել ծառայության վրա։ Նա անճանաչելի է դարձել։ Դա կորովի զինվոր է, ձգված, մաքուր զգեստավորված, ստորաբաժանման մեջ կարգ ու կանոնի համար պայքարողներից առաջինն է։

Եվ ոչ միայն Կիրակոսյանը, մեր վաշտի շատ ուրիշ զինվորներ ջանում են իրենց ուսման մեջ նմանվել հերոս Հունանին... Սերժանտ Թադևոսյանը և Օհանյանը ռազմաճակատում չեն եղել։ Նրանց հետ ունեցած իմ զրույցներում ես մանրամասն պատմել եմ Հունանի ջոկի, նրա հրամանատարական հմտության մասին։ Սերժանտներ Թադևոսյանը և Օհանյանը հաճախ ինձ դիմելով հարցեր են տալիս. «Ի՞նչպես էր այդ բանը Հունանի մոտ», «Ի՞նչ կաներ Հունանը այսպիսի դեպքում»։ Նրանք իրենց զինվորներին սովո-

բեցնում են այնպես, ինչպես սովորեցնում էր Հունանը իր ենթականերին, և բոլոր ուժերով ջանում են պահպանել կրտսեր հրամանատարի պատիվն ու արժանիքները, որն այնպես բարձր էր պահում Հունանը։

... Այսպես, աշխատանքում և թե ուսման մեջ մեր ռազմիկները սրբությամբ մեծարում են անմահ հերոսի հիշատակը»։*

Անմաս չմնաց այս բոլորից նաև հերոսի ծննդավայրը՝ Ղափանի Ծավ գյուղը, որտեղ անց է կացրել իր մանկությունն ու պատանեկությունը Հունան Ավետիսյանը, որտեղ նա առաջին անգամ մտավ կոլեկտիվ տնտեսության մեջ։

Գյուղը և նրա մարդիկ այժմ բոլորովին փոխվել են աննախընթաց կերպով։ Առաջ են գնացել նրանք։

Հունանի մանկության ընկերները, նրա հետ ռազմաճակատում ծառայած համագյուղացիները, որոնք այժմ զորացրվել և տուն են վերադարձել, ամեն կերպ ձգտում են իրենց գործերով, ազնիվ աշխատանքով նմանվել Հունանին և միշտ վառ պահել նրա անմահ հիշատակը։

Գյուղի կոլտնտեսության ղեկավարներից ռազմաճակատում Հունանի հետ միևնույն զորամասում մարտնչած սրտակից ընկեր, Հայրենական պատերազմի վիրավոր Շմավոն Ավետիսյանը, ուրախությամբ տեղեկանալով Հունանի անմահ-փառքի ու նրա հիշատակի արժանի հավերժացման հրամանի ու որոշումների մասին, ասում է.

— Իմ ընկերը անմահացավ։ Նրա մասին գրքեր են գրում, երգեր են հորինում... Մենք՝ նրա հայրենակիցներս նույնպես միշտ բարձր կպահենք մեր սիրելի Հունանի անունը։**

Նրանք գյուղի յոթնամյա դպրոցը վերանվանեցին Հունանի անունով։ Հերոսի մեծադիր նկարը կախ տվին գյուղի կոլտնտեսության գրասենյակի պատին, որն իր համարձակ և արծվային հայացքով ամեն օր հիշեցնում է կոլտնտեսականներին սովետական հայրենասիրության և սոցիալիստական ազնիվ աշխատանքի մասին։

Երևանում Քաղսովետը մանկական երկաթուղու դեղեցկատեսիլ պարկում կառուցել է Հունան Ավետիսյանի անվան աղբյուր-

---

* „Боевая Звезда" № 55, 6 մարտի 1948 թ.։

** Տես «Լենինյան Դրոշ» № 62, մայիսի 22, 1949 թ.։



Մարտարվեստման տարբեր տեսակների ուսուցման ժամանակ մարտիկների ցուցակում առաջինը կարդում է Սովետական Միության Հերոս Հովհան Ավետիսյանի ազգանունը

հուշարձան։ Նրա անունով են կոչվում Հայաստանի պիոներական շատ դրուժինաներ և ակումբներ։

* * *

ՍՍՌՄ Զինված Ուժերի մինիստր Սովետական Միության Մարշալ Վասիլևսկու հրամանը՝ Հունանի անունը առհավետ № ստորաբաժանման ցուցակում գրանցելու մասին փաստաթուղթը մտավ Սովետական Բանակի փառապանծ տարեգրության մեջ։

Այդ հրամանը կարդացվեց Սովետական Բանակի հետևակային զորքերի վաշտերում, հրետանավորների մարտկոցներում, հեծյալների էսկադրոններում, ծովային, օդային, զրահատանկային ուժերի էկիպաժներում և զորքերի մյուս բոլոր տեսակների ստորաբաժանումներում։ Հայ ժողովրդի անվեհեր զավակ Հունան Ավետիսյանը Ալեքսանդր Մատրոսովի նման մեծարվեց, համաժողովրդական հերոսի փառքի հասավ։

Այն զորամասի վաշտում, որտեղ ծառայում էր Հունանը, ամեն օր, երբ շեփորահարը հպարտորեն ազդարարում է երեկոյան ստուգականչը, դասակի զինվորները, ստուգման համար շարքի են կանգնում և սպասում են վաշտի ավագին։

Տրվում է «զգաստ» հրամանը, զորանոցում անցուդարձը դադարում է, մի պահ քար լռություն է տիրում ամեն տեղ. բանակայինները երկու շարք կանգնած մտաբերում են իրենց զոհված համագնդեցու՝ Հունանի նվիրական կերպարը։

Այդ խորհրդավոր ու վեհ մոմենտին վաշտի ավագը խրոխտ ձայնով արտասանում է վաշտի մարտիկների ցուցակի առաջին սիրելի անունը.

— Սովետական Միության Հերոս ավագ սերժանտ Հունան Մակիչի Ավետիսյան...

Խորը լռության միջից հնչում է առաջին շարքի աջ թևում կանգնած դասակի հրամանատարի օգնական, ուսման գերազանցիկ կոմերիտական սերժանտի հուզիչ, պարզ և հատ-հատ արտասանվող պատասխանը.

— Սովետական Միության Հերոս ավագ սերժանտ Հունան Մակիչի Ավետիսյանը ընկավ ֆաշի մահով մեր Հայրենիքի ազատության ու անկախության համար մղած մարտում։

Մի ակնթարթում սարսուռ է անցնում ամենքի մարմնով։ Այսպես, չնայած Հունանը չկա, բայց նրա հերոսական կերպարը ապրում է զորամասի ամեն մի մարտիկի մեջ, որն ազնվորեն կատարում է Հայրենիքին տված իր սրբազան երդումը։ Նա ապրում է իր հայրենակիցների, ամեն մի աշխատավորի հոգում, որն ամենօրյա արդար աշխատանքով իր ավանդն է մտցնում մեր սոցիալիստական մեծ Հայրենիքի պաշտպանության ամրապնդման, կուլտուրայի ու Երջանիկ կյանքի բարգավաճման ընդհանուր գործի մեջ, որի համար էլ իր ջահել կյանքը զոհեց, հայրենիքի շահը ավելի բարձր դասեց անմոռանալի Հունանը։

Ահա, որպիսի հերոսով են պարծենում և պետք է պարծենան հայ ռազմիկները, հայ ժողովուրդը։

Կանցնեն տարիներ թավալգլոր իրար հետևից... Կանցնեն դարեր... բայց Հունանի փառքը կապրի անվերջ ու անթառամ։ Սերունդները կշարունակեն նրա մասին երգեր հորինել, կոթողներ կառուցել։ Նրանք սրտի սրբազան դողով ու երախտագիտությամբ կարտասանեն Հայրենական Մեծ պատերազմում դյուցազնորեն զոհված համեստ աշխատավոր Սովետական Միության Հերոս, հայ ժողովրդի պանծալի զավակ՝ Հունան Ավետիսյանի անունը։

ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

ՀԵՐՈՍԱԿԱՆ ՍԽՐԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ

Մարտը գնում էր մի կարևոր բնագծի համար։ Մեր մարտիկները համառությամբ գրոհում էին հակառակորդի դիրքերի վրա։

Թշնամին սկսեց կատաղի կրակ վարել իր ԴԶՕՏ-երից մեկից և արգելք հանդիսանալ դասակի առաջխաղացմանը։

Այդ միջոցին դասակի հրամանատարի տեղակալ ավագ սերժանտ Հունան Մակիչի Ավետիսյանը, որը բազմիցս աչքի է ընկել խիզախ սխրագործություններով, արհամարհելով մահը, վճռեց, կյանքի գնով էլ լինի՝ լռեցնել ֆաշիստական կրակակետը։ Նա սողալով մոտեցավ թշնամու ԴԶՕՏ-ին և իր մարմնով փակեց կրակակետի ամբրազուրը։

Հակառակորդի գնդացիրը դադարեց գործելուց, դասակը սկսեց առաջ շարժվել։

Այսպիսով, անձնազոհ ռազմիկը իր հերոսական մահով հնարավորություն ստեղծեց դասակի համար իր մարտական առաջադրանքը կատարելու գերազանց կերպով։

«Կարմիր Զինվոր» № 91, 30 սեպտեմբերի 1943 թ.

ՀԱՅ ՄԱՏՐՈՍՈՎ ՀՈՒՆԱՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Երբ սկսվեց Հայրենական Մեծ պատերազմը գերմանական զավթիչների դեմ, կոմերիտական Հունան Ավետիսյանը աշխատում էր Հայաստանի Հոկտեմբերյան շրջանի 3-րդ սովխոզում որպես բրիգադիր։ Սակայն նա չէր բավարարվում թիկունքում կատարած իր անձնազոհ աշխատանքով։ Հունանը ձգտում էր ռազմաճակատ, այնտեղ, ուր հազարավոր հայրենասերներ զենքը ձեռքներին վրճռում էին մեր Հայրենիքի բախտը։

Այդ 1943 թվականի սեպտեմբերին էր։ Հերոսական Սովետական Բանակի զորագնդերը կատաղի կռիվներ էին մղում Նովորոսիյսկի ազատագրման համար։ Նովորոսիյսկը գրոհող զորամասերից մեկի առաջ խնդիր էր դրված՝ գրավել քաղաքի մատույցները փակող Դոլգայա լեռը և դրանով իսկ հնարավորություն տալ մեր զորքերին մտնել Նովորոսիյսկ։ Դոլգայա լեռը գրոհող զորամասի մեջ էր գտնվում նաև ավագ սերժանտ Հունան Ավետիսյանը...

... Գիշերը Հունանն իր ջոկով սկսեց № բարձունքի գրոհը։ Թշնամին լուսավորելով ռազմաճակատը, կատաղի կրակ էր տեղում բարձունքը գրոհող ռազմիկների վրա։ Սակայն ռազմիկների հարձակողական թափը ընկճել չէր կարելի։ Կարճ ոստյուններով ու փորսող՝ ռազմիկները մոտեցան բարձունքի լանջերին գտնվող ԴԶՕՏ-երին, հասել էր գրոհի ամենավճռական մոմենտը։ Հենց այդ ժամանակ ձախակողմյան ԴԶՕՏ-ից թշնամին ուժեղ գնդացրային կրակ բաց արեց գրոհողների վրա։ Նկատելով այդ, Հունանը մի ոստյունով սլացավ դեպի ԴԶՕՏ-ը և իրար ետևից մի քանի նռնակ նետեց ԴԶՕՏ-ի վրա։ Սակայն գնդացիրը չէր լռում։ Բարձունքի գրոհին ձախողում էր սպառնում։ Մի պահ ետ նայելով՝ Հունանը տեսավ արյունաշաղախ գետին ընկած իր մարտիկներին։ Հունանի առջև նենգ ու գազանաբարո թշնամին էր, նրա ոտքերի տակ իր

եղբայրների արյամբ ներկված հայրենի հողը, նրա սրտում սովետական երկրի ջերմ սերը։

— Ինչ գնով էլ լինի պետք է կատարել հրամանատարության առաջադրանքը,— մտածեց Հունանը և նետվելով դեպի ԴԶՕՏ-ը, իր երիտասարդ կրծքով փակեց նրա հրակնատը։ Գնդակները ծակեցին հերոսի մարմինը։ Գնդացիրը լռեց։ Վրեժխնդիր ու անզուսպ ռազմիկները առաջ նետվելով՝ գրավեցին ԴԶՕՏ-ը և ոչնչացրին այնտեղ գտնված հիտլերականներին։ Դոլգայա լեռան № 137 բարձունքի գրոհը հաջողությամբ պսակվեց։ Մեր զորքերը շարժվեցին դեպի Նովորոսիյսկ։

Սովետական Կառավարությունը բարձր գնահատելով հայ ժողովրդի դյուցազուն զավակ Հունան Ավետիսյանի սխրագործությունը, նրան շնորհեց Սովետական Միության Հերոսի կոչում։

«Մարտիկ» № 64, 29 մայիսի 1945 թ.

ԵՂԲԱՅՐՆԵՐԻՍ ԱՐՅՈՒՆԸ ՎՐԻԺԻ Է ԿԱՆՉՈՒՄ

Ես Հունան Ավետիսյանի հարազատ եղբայրն եմ։ Հունանը հերոսի մահով ընկավ Դոլգայա լեռան գլխին։ Հաղթանակի վառ կարոտը սրտում, կռվի վճռական մոմենտին նա իր ջահել մարմնով փակեց թշնամու ամբրաղուրը, իր սրտի մեջ ընդունեց նենդ թշնամու գնդակները, և իր մահով հաղթանակի ճանապարհ բաց արեց ստորաբաժանման համար։

Գերմանա-ֆաշիստական զավթիչների դեմ պատերազմի սկզբից կռվում ենք հինգ եղբայրներով։

Հերոսական մահով ընկել է նաև իմ երկրորդ եղբայրը՝ Գևորգը։ Ալեկոծվում է սիրտս, երբ հիշում եմ այդ մասին և երբ գրում եմ այս տողերը։ Լեռնանում է սրտումս ցասումը և ատելությունը արյունարբու թշնամու դեմ։ Այդ ատելությունը արդարացիորեն կպայթի թշնամու գլխին որպես մի ահռելի ռումբ։

Ես սակրավոր եմ։ Անցած մարտերում ոչնչացրել եմ հակառակորդի հարյուր հիսուն ական։ Այժմ ես ավելի եմ վարպետացել իմ գործում և տիրապետել եմ մի շարք զենքերի տեխնիկային։

Ես երդվել եմ այդ բոլորն ուղղել թշնամու դեմ, որպեսզի թափեմ նրա արյունը՝ կրկնակի վրիժառու լինեմ եղբայրներիս արյան համար։

Արյան դիմաց արյուն, մահվան դիմաց մահ։ Ահա՛ իմ նշանաբանը։

Կարմիրբանակային՝ Հմայակ Ավետիսյան

«Կարմիր Զինվոր» № 114, 16 նոյեմբերի 1943 թ.

ՀՈՒՆԱՆ ԱՎԵՏԻՍՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Հայրենական Մեծ պատերազմում հայ ժողովրդի ծոցից դուրս եկած հերոսներից մեկն է Ավետիսյան Հունանը։

Հունանի հերոսությունը պատահական մի երևույթ չէր, որովհետև նա իր մեջ մշակել և ներշնչել էր այնպիսի ռազմիկի հատկություններ, ինչպիսին են՝ բարձր կարգապահությունը, դիմացկունությունը, հաստատակամությունը։ Նա սիրում էր ռազմական գործը, անձամբ զբաղվում էր թշնամու հետախուզությամբ։ Մշտական զգաստ, սրբությամբ նվիրված դեպի մեր մեծ Հայրենիքը, համբերատարությամբ հաղթահարում էր պատերազմի բոլոր դժվարությունները. դրանք էլ հենց կանխորոշեցին նրա հերոսությունը։

Հունանը որպես կրտսեր հրամանատարի, անձամբ զբաղվում էր դասակի մարտական պատրաստականությամբ։ Նա աշխատանքի բոլոր տսպարեզներում աչքի էր ընկնում իր լավագույն օրինակով և դասակի հետ միասին պատրաստ էր լուծելու ամենադժվար մարտական խնդիրը։ Երբ ես սեպտեմբերի 16-ի գրոհից առաջ շրջում էի ստորաբաժանումները, մոտենալով ամենակարևոր նշանակություն ունեցող Դոլգայա բարձունքի հյուսիսային լանջի պաշտպանության գծին, որտեղ թշնամին ուներ ուժեղ ամրություններ, հարցրի վաշտի հրամանատարին, թե ո՞ր գրոհային խումբն է գործելու այս ուղղությամբ։ Նա պատասխանեց. «Ամենաուժեղ գրոհային խումբը դասակի հրամանատարի տեղակալ ավագ սերժանտ Ավետիսյանի ղեկավարությամբ»։ Եվ նրան ներկայացրեց ինձ։ Դա Ավետիսյան Հունանն էր... Նա ինձ վրա բացառիկ հերոսի և ուժեղ կամքի տեր մարտնչողի տպավորություն թողեց։ Նա լավագույն կերպով իմանում էր թշնամու դասավորությունը և իր մարտական բոլոր խնդիրները։

Սեպտեմբերի 10—16-ի կատաղի մարտերում Հունանը իր

գրոհիչ խմբով անընդհատ մարտերով հետախուզում էր Դոլգայա գարձունքի վրա գտնվող թշնամու «կապույտ գիծ» կոչվող, «անառիկ» համարվող պաշտպանության հենակետի ԴՕՏ-երն ու ԴՀՕՏ-երը։ Հունանը, որ վայելում էր հրամանատարության վստահությունը, գրոհեց պաշտպանության այդ դժվարին հենակետը և ամենամեծ պատվով կատարեց իր վրա դրված մարտական խնդիրը, արժանանալով Սովետական Միության Հերոսի կոչման։

Հունանը թշնամու դիրքերը գրոհելու ժամանակ, ընկնելով նրա ԴՕՏ-երի խաչաձև կրակի տակ, ծանր վիրավորվելով՝ գործադրում է հերոսական ջանքեր այդ ԴՕՏ-երը ոչնչացնելու համար։ Իր գրոհող խմբով, երբ թշնամու ԴՕՏ-ը պատճառում է մեծ կորուստներ մեր հարձակվող միավորներին, նա գործադրում է հերոսության ամենաբարձր ձևը՝ սողալով և վերջին նռնակները նետելով թշնամու կրակակետին, իր մարմնով, հետևելով Մատրոսովի օրինակին, փակում է ԴՕՏ-ի ամբրազուրը, ապահովելով մարտական խնդրի հաջող կատարումը։

Հ. Ավետիսյանը իր անմահ սխրագործությամբ մեր նոր սերընդին թողեց հայրենասեր ռազմիկի այնպիսի մի պատմություն, որը մեծ նշանակություն ունի մեր երիտասարդության մարտական դաստիարակության համար։ Ուստի, ուսումնասիրել և իմանալ Հունանի սխրագործությունները, նշանակում է մի գլխով բարձր լինել որպես հերոս ռազմիկի։

Գեներալ-մայոր Ն. Սաֆարյան

20 օգոստոսի 1949 թ.

ՊԱՐԳԵՎԱՏՐՄԱՆ ԹԵՐԹԻԿ

1. Ազգանուն, անուն և հայրանուն— Ավետիսյան Հունան Մակիչի:

2. Կոչումը— Ավագ սերժանտ:

3. Պաշտոն և զորամաս— № դիվիզիայի № գնդի 1-ին հրաձգային վաշտի դասակի հրամանատարի տեղակալ:

4. Ծննդյան թիվը— 1914 թ.:

5. Ազգությունը— *Հայ:*

6. Պարտականությունը— ՀԼԿԵՄ անդամ:

7. Երբվանից է Կարմիր Բանակում— 1941 թ.:

8. Մասնակցությունը քաղաքացիական կռիվներում: ՍՍՌՄ-ի պաշտպանության հետագա մարտական գործողություններում և Հայրենական պատերազմում— 1942—1943 թ. թ. Հյուսիսային Կովկասի ռազմանակատում:

9. Վիրավորվե՞լ է, կանտուզիա ստացե՞լ է— Սպանվել է Հայրենական պատերազմում:

10. Ո՞ր շրջանային զինկոմիսարիատի կողմից է կանչվել— Հայկական ՍՍՌ Հոկտեմբերյանի շրջանային զինկոմիսարիատի:

11. Տնային հասցեն—Հայկական ՍՍՌ Հոկտեմբերյանի շրջան, № 3-րդ սովխոզ:

1943 թ. սեպտեմբերի 16-ին, Դոլգայա լեռը գրավելիս, ընկեր Հունան Ավետիսյանը բացառիկ քաջություն ցուցաբերեց, տանելով իր հետևից մնացած մարտիկներին՝ գերմանացիների խիստ ամրացված հենակետը վերցնելու համար: Նա սողալով մոտեցավ հակառակորդի առաջին ԴԶՕՏ-ին, անձամբ մի քանի նռնակ նետեց ԴԶՕՏ-ի մուտքը և իր դասակով ներխուժեց ԴԶՕՏ-ը:

Այդ ժամանակ հակառակորդը գնդացրային կրակ բացեց երկրորդ ԴԶՕՏ-ից: Ընկ. Ավետիսյանը իր դասակին հրամայեց շրջապատել ԴԶՕՏ-ը, իսկ ինքը սողեսող մոտեցավ հրանցքին, որպեսզի

նռնակներ տեղա ԴԶՕՏ-ի վրա։ Գնդացրային կրակը սաստիկ խանգարում էր մարտիկների առաջ շարժվելուն։ Ընկ. Ավետիսյանը սողալով մոտեցավ հրանցքին և հենց ԴԶՕՏ-ի մոտ վիրավորվեց։ Նա սպառկելով ձգվեց մինչև հրանցքը, և, արյունաքամ լինելով, իր մարմնով, Սովետական Միության Հերոս Մատրոսովի օրինակով, ծածկեց ԴԶՕՏ-ի հրանցքը, և դրանով հնարավորություն տալով գրավելու նաև 2-րդ ԴԶՕՏ-ը։

Այդ օրը Ավետիսյանի դասակը գրավեց երեք ԴԶՕՏ և ոչնչացրեց նրանց մեջ գտնվող հակառակորդի կենդանի ուժը։

Ընկ. Ավետիսյանն արժանի է Սովետական Միության Հերոսի կոչման։

Հրաձգային դիվիզիայի հրամանատար
գնդապետ (ստորագրություն)։

20 հոկտեմբերի 1943 թ.

ՔԱՂՎԱԾՔ

ՍՍՌՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ 1944 Թ. ՄԱՅԻՍԻ 16-Ի ՀՐԱՄԱՆԱԳՐԻՑ

Գերմանական զավթիչների դեմ մղվող պայքարի ռազմաճակատում Հրամանատարության մարտական առաջադրանքներն օրինակելիորեն կատարելու և այդ ժամանակ ցուցաբերած խիզախության ու հերոսության համար Սովետական Միության Հերոսի կոչում շնորհել, հանձնելով Լենինի շքանշան և «Ոսկե աստղ» մեդալ.

1. Ավագ սերժանտ Հունան Մակիչի Ավետիսյանին։

ՍՍՌՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ՝ Մ. ԿԱԼԻՆԻՆ
ՍՍՌՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ
ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա. ԳՈՐԿԻՆ

Մոսկվա, Կրեմլ, 16 մայիսի 1944 թ.

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԵՐՈՍ ՀՈՒՆԱՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Ազատության փրկարար փոթորիկը Սովետական Բանակի հզոր շնչով քշեց Կովկասյան լեռներում կուտակված սև ամպերը։ Երկինքը պայծառացավ և նորից փայլեցին Էլբրուսի ձյունապատ բարձունքները։

Կովկասյան քաջակորով ժողովուրդների հերոս զավակները ռուս մեծ ժողովրդի գլխավորությամբ, Սովետական Միության բոլոր ժողովուրդների զավակների հետ ուս-ուսի մարտնչեցին գերմանական գազազած հորդաների դեմ, կանգնեցրին այդ հորդաների առաջխաղացումը Կովկասում, ոչնչացրին Թշնամուն և պաշտպանական ծանր մարտերից անցան հարձակման։ Մարտիկների շարքումն էր և ավագ սերժանտ Հունան Ավետիսյանը։ Ահա նա կանգնել է Նովորոսիյսկի մատույցներում մարտիկների շարքերում։ Հրամանատարությունը նրան վստահում է մի դժվարագույն առաջադրանք՝ գրոհային փոքրիկ խմբով գրոհել Դոլգայա լեռան գերմանական ամրությունների վրա, ճեղքել Թշնամու անառիկ համարվող այդ պաշտպանագիծը։

Ավետիսյանն իր հերոս ընկերների՝ Վասիլ Սաքանյանի, Ծերոն Գրիգորյանի և մյուսների հետ գիշերն առաջ էր շարժվում ականապատված դաշտերի միջով։ Թշնամու գնդակները սուլում էին նրանց գլխավերևից, բայց մարտիկները Հունանի գլխավորությամբ առաջ էին շարժվում դեպի Թշնամու փշալարերը։

Հաղթահարելով Թշնամու կրակը, գրոհայինները մոտեցան Թշնամու ԴԶՕՏ-երին։ Հասավ ԴԶՕՏ-երի վրա անմիջապես գրոհելու մոմենտը։ Սակայն Թշնամու մի ԴԶՕՏ-ից արձակվող կրակահերթերը թույլ չէին տալիս մարտիկներին գետնից բարձրանալու, իսկ մի քանի մարտիկներ էլ վիրավորվել էին։ Գրոհը ձախողվելու

վրա էր։ Ավետիսյանը նկատեց մարտիկներին սպառնացող այդ վտանգը։

— Տղե՛րք, դոդողաց նրա ձայնը,— այլևս այս ԴԶՕՏ-ը չի գործելու։ Հրամայում եմ առաջ...

Նա նետվեց դեպի ԴԶՕՏ-ը և իր կրծքով ծածկեց հրակնատը...

Գնդակները ծակծկեցին հերոսի կուրծքը, բայց գնդացիրը լռեց։ Վրեժով այրվող սրտով նրա մարտիկները առաջ նետվեցին և գրավեցին ԴԶՕՏ-երը։ Գրոհը հաղթանակով պսակվեց։

Դյուցազնաբար զոհվեց Հունան Ավետիսյանը։ Բարձր գնահատելով հերոսի մատուցած մարտական ծառայությունները, ՍՍՌՄ Գերագույն Սովետի Նախագահության 1944 թ. մայիսի 16-ի Հրամանագրով նրան շնորհվեց Սովետական Միության Հերոսի կոչում։

Հավե՞րժ փառք անմահ հերոսին, հայ ժողովրդի արժանավոր զավակին։

«Բոլշևիկյան Տեմպով» № 19, 5 հունիսի 1944 թ.

ՀՐԱՄԱՆ
ՍՍՌ ՄԻՈՒԹՅԱՆ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ՄԻՆԻՍՏՐԻ
№ 30

22 ապրիլի 1949 թ. ք. Մոսկվա

Սովետական Միության Հերոս ավագ սերժանտ Հ. Մ. Ավետիսյանին № հրաձգային գնդի ցուցակում առհավետ գրանցելու մասին

1943 թ. սեպտեմբերի 16-ին գերմանացիների պաշտպանության հեղքման և Կրասնոդարի երկրամասի Վերխնե-Բականսկի ռայոնը գերմանական զավթիչներից ազատագրելու ժամանակ № հրաձգային գնդի 4-րդ հրաձգային վաշտի դասակի հրամանատարի տեղակալ ավագ սերժանտ Հունան Ավետիսյանը Դոլգայա լեռան գրոհի ժամանակ փառավորեց իրեն, ոչնչացնելով թշնամու կրակակետերը։

Հրաձգային դասակը, որի կազմում էր գտնվում ավագ սերժանտ Հ. Մ. Ավետիսյանը, հարձակման մոմենտին ընկավ թշնամու երկու ԴԶՕՏ-երի գնդացրային ուժեղ կրակի տակ։ Դասակը գետնին սեղմվեց։ Այդ ժամանակ ավագ սերժանտ Ավետիսյանը հասավ դեպի ԴԶՕՏ-երից մեկը և նռնակներ նետեց նրա վրա։ Դասակը առաջ շարժվելով դեպի Ավետիսյանի գրաված դիրքերը, ստիպված էր կրկին երկրորդ ԴԶՕՏ-ի գնդացրային կրակի տակ դարձյալ սեղմվել գետնին։ Ավագ սերժանտ Ավետիսյանը հրամայեց դասակին օղակել ԴԶՕՏ-ը, իսկ ինքը սողեսող մոտեցավ ամբրազուրին, որպեսզի նռնակներ նետի նրա վրա, բայց հենց ԴԶՕՏ-ի մոտ վիրավորվեց։ Արյունաքամ լինելով, նա հասավ մինչև ամբրազուրը և իր մարմնով ծածկեց այն։ Գնդացրային կրակը դադարեց։ Օգտվելով ավագ սերժանտ Ավետիսյանի հերոսական սխրագործությունից, դասակը կատարեց իր մարտական խնդիրը։

Ավագ սերժանտ Ավետիսյանը զոհվեց հերոսի մահով։

ՍՍՌ Միության Գերագույն Սովետի Նախագահությունը 1944 թվի մայիսի 16-ի հրամանագրով ավագ սերժանտ Հ. Մ. Ավետիսյանին հետմահու շնորհեց Սովետական Միության Հերոսի կոչում։

Նրա անվերապահ նվիրվածությունը սոցիալիստական Հայրենիքին և անսահման հավատարմությունը երդմանը, օրինակ պետք է ծառայեն Զինված Ուժերի ամբողջ անձնակազմի համար։

Հրամայում եմ՝

Սովետական Միության Հերոս, ավագ սերժանտ Հունան Մակիչի Ավետիսյանի անունը առհավետ գրանցել № հրաձգային գնդի 1-ին հրաձգային վաշտի ցուցակում։

Հրամանը կարդալ բոլոր վաշտերում, մարտկոցներում, էսկադրոններում և էկիպաժներում։

ՍՍՌՄ Զինված Ուժերի մինիստր

Սովետական Միության Մարշալ Վասիլևսկի

260—7

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅՐԵՆԱՍԵՐԻ ՍԽՐԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ

Սովետական Միության Հերոս, ավագ սերժանտ Հունան Ավետիսյանը առհավետ գրանցված է № զորամասի ցուցակում

№ զորամասի ռազմիկները սրբությամբ են մեծարում Հայրենիքի համար մղված մարտերում հերոսի մահով զոհված իրենց խիզախ համաքաղաքացի Հունան Ավետիսյանի հիշատակը։ Նրա անձնվեր նվիրվածությունը սոցիալիստական Հայրենիքին և անսահման հավատարմությունը երդմանը օրինակ է ծառայում զինվորների, սերժանտների և օֆիցերների համար։

Վերջերս ՍՍՌ Միության Զինված Ուժերի մինիստրի հրամանով, Սովետական Միության Հերոս, ավագ սերժանտ Հ. Մ. Ավետիսյանի անունը առհավետ գրանցվեց № զորամասի ցուցակում։

Ինչո՞վ փառավորեց իրեն սովետական հայրենասերը։

1943 թվականի սեպտեմբերին մեր զորքերը հարձակողական մարտեր էին մղում Կրասնոդարի երկրամասը հիտլերականներից ազատագրելու համար։ Դասակը, որում ծառայում էր Հ. Մ. Ավետիսյանը, մասնակցում էր Վերխնե-Բականսկի շրջանի Դոլգայա լեռան գրոհին, որտեղ գերմանացիները կառուցել էին ուժեղ պաշտպանություն։

Դասակը առաջ շարժվելով ընկավ հակառակորդի երկու ԴԶՕՏ-երի կրակի տակ։ Մարտիկները գետնին սեղմվեցին։ Ինչ գնով էլ ուզում էր լիներ, պետք էր ստիպել թշնամուն դադարեցնել կրակը։ Այդ խնդիրը իր վրա վերցրեց կոմերիտական ավագ սերժանտ Հունան Ավետիսյանը։

Նա համեմատաբար երիտասարդ ռազմիկներից էր։ 1941 թ. Ավետիսյանը, թողնելով հարազատ Հայաստանը, մտնում է Սովետական Բանակի շարքերը։ Հայրենակիցները նրան պատվիրեցին անձնվիրաբար պաշտպանել Հայրենիքը։ Եվ նա կատարեց նրանց

պատվերը։ Մարտի լարված մոմենտին, երբ վճռվում էր ԴԶՕՏ-երի գրոհման ելքը, կոմերիտական Ավետիսյանը սողեսող մոտենալով նրանցից մեկին, նրա ամբարձուրի վրա նետեց նռնակներ։ Դասակը հնարավորություն է ստանում առաջ շարժվելու, բայց շուտով ստիպված է լինում դարձյալ սեղմվել գետնին,— ֆաշիստները կրակ են բաց անում երկրորդ ԴԶՕՏ-ից։ Այդ ժամանակ դասակի հրամանատարի տեղակալ, ավագ սերժանտ Ավետիսյանը հրամայում է մարտիկներին շրջապատել ԴԶՕՏ-ը, իսկ ինքը սողեսող մոտենում է ամբարձուրին, որպեսզի նրա վրա նռնակներ նետի։ Նա արդեն բոլորովին մոտ էր ԴԶՕՏ-ին, երբ դգաց սուր ցավ— նա վիրավորված էր։ Անվեհեր ռազմիկը, Լենինյան Կոմերիտմության հավատարիմ զավակը արյունաքամ լինելով՝ հավաքում է իր մնացած վերջին ուժերը ու հասնելով ամբարձուրին՝ այն ծածկեց իր մարմնով։ Այսպես Հունան Ավետիսյանը կրկնեց Ալեքսանդր Մատրոսովի անմահ սխրագործությունը։

Գնդացրային կրակը դադարեց։ Մարտիկները սրընթաց նետվեցին առաջ, դասակը պատվով կատարեց իր մարտական խնդիրը։

Կոմերիտական Հունան Ավետիսյանը զոհվեց հերոսի մահով, բայց նրա փառքը, նրա սխրագործությունը անմահ է։ Ժողովուրդը ընդմիշտ կպահի իր զավակի հիշատակը։

ՍՍՌՄ Գերագույն Սովետի Նախագահության հրամանագրով ավագ սերժանտ Հունան Ավետիսյանին հետմահու շնորհվեց Սովետական Միության Հերոսի բարձր կոչում։ Իսկ այժմ նրա անունը առհավետ մտցված է հրաձգային № զորամասի ստորաբաժանման ցուցակում։

Երեկոյան ստուգմանը, երբ ավագը արտասանում է ավագ սերժան Հունան Ավետիսյանի անունը, նրան հետևում է պատասխան.

— Սովետական Միության Հերոս ավագ սերժանտ Հունան Ավետիսյանը զոհվեց հերոսի մահով մեր Հայրենիքի ազատության և անկախության համար մղած մարտում։

«Կրասնայա Զվեզդա» № 107, 8 մայիսի 1949 թ.

ՀԵՐՈՍԻ ՄՈՐ ՆԱՄԱԿԸ

Անդրզինօկրուգի թանկագի՛ն ռազմիկներ։ Ի՛մ զավակներ։

Մոտ վեց տարի է անցել այն օրից, երբ հերոսաբար զոհվեց իմ որդի Հունանը։ Բայց նրա լուսավոր և բարի հիշատակը մշտապես ապրում է իմ մայրական սրտում։

Օրերս ինձ հայտնեցին, որ Սովետական Միության Զինված Ուժերի մինիստրի հրամանով Հունանի անունն առհավետ գրանցված է № զորամասի ցուցակում։ Այդ լուրը հուզեց ինձ։ Միայն մեր երկրում է իրագործվում այդպիսի վերաբերմունք դեպի մարտում ընկած հերոսը։

Այս նամակում, իմ թանկագին զավակներ, մեր Հայրենիքի հարավային սահմանների հավատարիմ պաշտպաններ, ես ուզում եմ համառոտ կերպով պատմել Հունանի կյանքի մասին։

Հունանը ծնվել է 1914 թվականին լեռնային Զանգեզուրի՝ Ղափանի շրջանի Ծավ գյուղում։ Հունանը միշտ իրեն նվիրում էր Հայրենիքին ծառայելու գործին։ Նա սիրում էր աշխատանքը և աշխատում էր հարազատ կոլխոզում։ Դեռ փոքր հասակից Հունանը սիրում էր զինվորական գործը։

1939 թվականին մեր ընտանիքը տեղափոխվեց Միկոյանի անվան սովխոզը։ Այստեղ Հունանը նշանակվեց բրիգադիր։ Նա աշխատում էր մեծ խանդավառությամբ, իսկ նրա բրիգադան համարվում էր ամենաառաջավորը։ Հայրենական Մեծ պատերազմի հենց առաջին օրը իմ սիրելի Հունանը մտավ Սովետական Բանակի շարքերը։

«Ի՛մ մասին չմտածես, մայրիկ։ Ես լեռնային Զանգեզուրի զավակ եմ, ինձ սովորեցրել ու դաստիարակել է Սովետական Միությունը, բոլշևիկների պարտիան։ Իմ հայրենասիրական պարտքը ես պատվով կկատարեմ»,— գրում էր նա։

Ես հաճախ էի Հունանից նամակ ստանում. «Մի մտածիր, սիրելի մայրիկ,— գրում էր նա,— ճիշտ է, լինում են դժվար երթեր, տաք կռիվներ, բայց այն միտքը, որ մենք կռվում ենք սովետական Հայրենիքի համար, մոռացնել է տալիս այդ բոլոր զրկանքները։ Մենք ջախջախում ենք ատելի թշնամուն։ Ես արդեն սպանել եմ 25 ֆաշիստ»։

Սրանից մի քանի օր առաջ այն զորամասից, որտեղ ծառայել է իմ Հունանը, պատվիրակներ եկան ինձ մոտ։ Ռազմիկներն իրենց ուշադրությամբ և գուրգուրանքներով ոգևորեցին ինձ։ Նրանց ջերմ նամակները իմ սիրտը լցնում են անսահման հպարտությամբ։ Ահա թե ինչ են գրում նրանք.

«Թանկագի՛ն և սիրելի մայրիկ։ Մեր զորամասի անձնակազմը խոսք է տվել ձեզ՝ տիրապետել ռազմական ու քաղաքական գիտելիքներին այնպես, ինչպես մեր ջերմորեն սիրված Հունանը։ Մեր պարտքը Հայրենիքի նկատմամբ աղնվորեն կկատարենք։ Մենք հիշում ենք Հունանին, նա մեզ հետ է, հավերժ կապրի մեր սրտերում»։ Ինձ համար թանկ են ռազմիկների այդ ջերմ ու հոգեցունց խոսքերը։

Եղե՛ք համարձակ, ուժեղ, դիմացկուն։ Սովորեցեք ատել մեր Հայրենիքի թշնամիներին։ Աղնվորեն պաշտպանեցեք մեր սովետական ժողովրդի, կոմունիզմ կառուցող ժողովրդի՝ Լենինի—Ստալինի պարտիայի ղեկավարությամբ դեպի կոմունիզմ ընթացող ժողովրդի շահերը։

Խանում Ավետիսի Առաքելյան

Հայկական ՍՍՌ Հոկտեմբերյան շրջանի Միկոյանի անվան սովխոզ

«Լենինյան Դրոշ» № 62, 22 մայիսի, 1949 թ.

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԵՐՈՍ ՀՈՒՆԱՆ ԱՎԵՏԻՍՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Կրասնոդարի երկրամասի աշխատավորների դեպուտատների Վերխ-.նե-Բականսկի շրջանային Սովետի Գործադիր կոմիտեի որոշումը

1943 թվականի սեպտեմբերի 16-ին Վերխնե-Բականսկի շրջանը գերմանա-ֆաշիստական զավթիչներից ազատագրելու համար մղված մարտերում հերոսաբար զոհվեց Հայկական ՍՍՌ Ղափանի շրջանի բնակիչ, 1914 թվի ծնված, ավագ սերժանտ Հունան Ավետիսյանը, որը Գայդուկ բնակավայրի շրջանում, Դոլգայա լեռան վրա իր կրծքով ծածկեց թշնամու կրակակետը, որը խանգարում էր Վերխնե-Բականսկի վրա հարձակվող մեր զորքերի առաջխաղացմանը։

Ի նշան Սովետական Միության Հերոս Հունան Ավետիսյանի հիշատակի հավերժացման, շրջանային Սովետի գործկոմը որոշում է.

1. Գայդուկ բնակավայրի «Զավոդսկայա» փողոցը վերանվանել Հունան Ավետիսյանի անվան փողոց։

2. Գայդուկ բնակավայրում կանգնեցնել Սովետական Միության Հերոս Հունան Ավետիսյանի հուշարձանը։

3. Սովետական Միության Հերոս Հունան Ավետիսյանի հուշարձանի կառուցումը հանձնարարել շրջսովետի դեպուտատ ընկ. Կոզլենկովին և գյուղական Սովետի նախագահ ընկ. Կորիշևին։ Հուշարձանի կառուցումն ավարտել 1948 թվականի մայիսի մեկին։

Վերխնե-Բականսկի շրջգործկոմի նախագահ՝ Կոլիչև
Վերխնե-Բականսկի շրջգործկոմի քարտուղար՝ Պերեվորոչան

2 մարտի 1948 թ.
«Լենինյան Դրոշ» № 62, 22 մայիսի 1949 թ.

ԹԱՆԿԱԳԻՆ ԵՎ ՍԻՐԵԼԻ ՄԱՅՐԻԿ

Կարդալով ռազմիկներիս գրած Ձեր դիմումը, ես որոշեցի հայտնել Ձեզ, որ մենք՝ ռազմիկներս, գտնվելով մեր սիրելի Հայրենիքի սահմանների վրա, Ձեր սիրելի որդու նման մենք նույնպիսի ազնվությամբ և բարեխղճությամբ կպաշտպանենք մեր Հայրենիքը, չխնայելով մեր կյանքը։ Սիրելի՛ մայրիկ, ծանր կորուստ եք ունեցել Դուք, բայց իմացեք, որ Ձեր տղան՝ Հունանը կենդանի է և կապրի որպես օրինակ մեր սերնդի համար։

Թանկագի՛ն և սիրելի՛ մայրիկ, ես այս նամակը գրելով՝ ցանկանում եմ շնորհակալություն հայտնել Ձեզ՝ այդպիսի որդի դաստիարակելու համար։ Ես ինքս ուկրաինացի եմ, և կարդալով Ձեր մայրական այդպիսի ջերմ խոսքերը՝ ցանկանում եմ հայտնել, որ ես մարտական ու քաղաքական պատրաստությունից ունեմ դերազանց դնահատական և խոսք եմ տալիս Ձեզ, որ հետագայում ես կսովորեմ միայն գերազանց, իսկ եթե պահանջի Հայրենիքը, կհետևեմ Ձեր սիրելի որդու՝ Հունանի օրինակին։

Թանկագի՛ն մայրիկ, ցանկանում եմ Ձեզ քաջառողջություն և երկար կյանք։ Թանկագի՛ն մայրիկ, շատ կուզենայի զրուցել Ձեզ հետ, որպեսզի ծանոթացնեիք ինձ Ձեր որդու՝ Սովետական Միության Հերոս Հունանի կյանքի հետ. իսկ դա մեծ պատիվ կլիներ ինձ համար։

Թանկագի՛ն, սիրելի՛ մայրիկ, խնդրում եմ իմ այս նամակը հանձնեք զինվորական թերթի խմբագրությանը, դա օրինակ կլինի մյուս ռազմիկների համար։ Ես Ձեզ պես թանկագին մայրիկին հավերժ չեմ մոռանա։

Ցտեսություն։

շարքային Ֆեդիշին Նիկոլայ Ստեպանովիչ

25 մայիսի 1949 թ.

ԲԱՐԻ ՕՐ

Բարև՛ Ձեզ, հարգելի՛ Խանում Առաքելովնա, սրտագին ցանկություններ Ձեզ անդրկովկասյան ռազմիկներից։

Թանկագի՛ն մայրիկ, այսօր մենք բախտ ունեցանք կարդալու մեր թերթում Ձեր որդու՝ Հունանի մարտական սխրագործությունների մասին և Ձեր կոչը ուղղված մեզ, անդրկովկասյան ռազմիկներիս։

Մեծ հարգանքով կարդացինք Ձեր նամակը և որոշեցինք շնորհակալություն հայտնել մեր հանդեպ Ձեզ ունեցած վերաբերմունքի համար։ Թանկագի՛ն մայրիկ, Ձեր նամակին մենք պատասխանում ենք է՛լ ավելի լավ սովորելով և արժանի կլինենք Ձեր որդի Հունանին, իսկ Ձեզ, սիրելի՛ մայրիկ, ցանկանում ենք լավ առողջություն և հաջողություններ Ձեր աշխատանքում։

Ձերմ բարևներ մեր ստորաբաժանման բոլոր մարտիկներից։

Խնդրում ենք պատասխանը գրեք։

Պորիվաև Իվան Վասիլևիչի անունով։

25 մայիսի, 1949 թ.

ՔԱՂԱԾՔ

№ 336 հրամանից, 8 հունիսի 1949 թ. Հոկտեմբերյան

1941—1945 թ. թ. Հայրենական պատերազմում անօրինակ քաջագործություններ կատարած, Թշնամու հրակնատը իր կրծքով ծածկած, Սովետական Միության Հերոս, մեր սովխոզի նախկին բանվոր Հունան Ավետիսյանի հիշատակը հավերժացնելու համար

Հրամայում եմ՝

1. Սովխոզի № 5 ագրոմասի № 17 բրիգադան, որտեղ աշխատել է Հունան Ավետիսյանը, այսուհետև անվանել Հունան Ավետիսյանի անվան բրիգադա։

2. Առաջարկել բոլոր ցեխերի վարիչներին մինչև ս. թ. հունիսի 10-ը հրավիրել ցեխային արտադրական խորհրդակցություն և մասսայականացնել սույն հրամանը։

Հոկտեմբերյանի III սովխոզի դիրեկտոր (ստորագրություն)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՈՒՆ

	Էջ
1. Հունան Ավետիսյան 1911—1913 թ.	7
2. Հունան Ավետիսյանի հիշատակի հավերժացումը	60
3. Փաստաթղթեր	83

Տպագրվում է Հայկական ՍՍՌ ԳԱ
խմբագրական-հրատարակչական խորհրդի
որոշմամբ

Խմբագիր՝ Ա.Ր. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

Տեխ. խմբագիր՝ Վ. ՄԱՆՈՒԿՅԱՆ *Կոնտրոլ սրբագրիչ՝ Վ. ՊԱՐՈՆԻԿՅԱՆ*

ԳԱ ԽՀԽ № 40 *ՎՖ 05146*

Հանձնված է արտադրության 13/V 1950 թ., ստորագրված է տպագրության 26/VIII 1950 թ., պատվեր 260, հրատ. 716, տիրաժ 2000, 6¾ տպ. մամուլ, մեկ մամուլում 36.000 տպ. նիշ։

Հայկական ՍՍՌ ԳԱ տպարան, Երևան, Աբովյան 124

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0014276

ԳԻՆԸ ~~[illegible]~~. 404.

A II 11864

11864